Universitäts- und Landesbibliothek Bonn

Hovhannow Sarkawagay, Vardanay Barjrberdc'woy, Hovhannow Erznakac' Nerbo·geank' woy Grigori Sarkawagapeti Nerbo·geank' i S. Grigor Lowsaworic'

Yovhannês <Sarkavag>

I Venetik, 1853

urn:nbn:de:hbz:5:1-12112

Visual Library

Goussen 3088 (5)

ՆԵՐՔՈՂԵԱՆՔ

Ի ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

ԼՈՒՍԱՓՈՐԻՉ

№ 5

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՌՅԲ

Gaussen 3088

ՍՈՓԵՐՔ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

Ե

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Բ.

ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՄԱՐԿԱՒԱԳԱՑ

ՎԱՐԴԱՆԱՑ ԲԱՐՁՐԲԵՐԴՑԻՈՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐԶՆԿԱՑԻՈՅ
ՆԵՐԲՈՂԵԱՆՔ
ԻՄ · ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

1853

3088

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՆԵՐԲՈՂԵԱՆ

Ի ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ

ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ ՀԱՅՈՑ

Զնահատակութիւն սրբոցն տո-
նէ եկեղեցի, ճգնութեամբ նոցա
պայծառանայ, և զաւազանին չը-
նորհն փառաւորէ. այսպիսիս զնո-
սա ամենեցուցանելով մանկունս՝ յոր-
պիսի գիտէ ծառայել հոգին սուրբ
և ոչ հեռանալ. որք ոչ միայն զնկա-
րեալսն առ 'ի յայսպիսի արգանդէ
պահեցին շնորհս, այլև ամենեցին
յաճախութեամբ լուսոյ, յաւե-
լուածոյս 'ի վերուստ յինքեանս

կորզելով. և փառաք գործեցին զյա-
ՀԱԽՈՒԹԻՒՆ փառաց. օտարացեալք
աշխարհի և որ 'ի սմա, կամ թէ
Ճշմարտագոյն ասել՝ 'ի խաչելեալք՝
կրթութեամբ մահու զկեանս ու-
նելով, որպէս ասի. և 'ի վերայ ու-
սոյ 'ի աննգամանան զխաչն բառնա-
լով՝ զհետ ընթացան հրամանի պա-
տուիրանագրին։ Իսկ 'ի տիս հա-
սեալ հասակի հաւատոց՝ կատար-
մանն Քրիստոսի, զնոյն կանգնեալ՝
բարձրացան 'ի նմա. և աշխարհի յաղ-
թեցին, և զբռնաւորս ամաչեցու-
ցին, և զաստուածածանութիւնն
բան յամենեսին սերմանեցին. և իբ-
րեւ լուսաւորք յաշխարհի փայլե-
լով՝ փայլեցին և փայլեն։ Որոց բանն
յայնժամ՝ հալածեաց զախտս և ըզ-
դեւս. և այժմ ոչինչ նուազ քան
զնոյն՝ բնակեցելով զօրութեամբ 'ի
նշխարս նոցա կատարի. ողջակէզք
կատարեալք, և կամաւոր Աստու-
ծոյ զոհք, բանիւ վկայք բանին Աս-
տուծոյ, և արեամբն իւրեանց պա-
կեալք։ Իսկ 'ի մէջ բարկութեանն
Աստուծոյ շարժելոյ և մեր, միջ-

նորդք. և քան զՓենէէսի բուրումն՝ պատուականագոյնք, և սատակչին պատկառելիք։ Իսկ 'ի չարութեանն և յանպտղութեան արիականագոյնք քան զԵղիայի բանն. և այլ առաւել վսեմք և պղծերագոյնք. և որ այլ այսպիսիք հոգւոյն բանից պատգամաւորք սոցա՝ իրի և բանի 'ի ծանօթութիւն ձեզ հասեալք, իբր ընտանեաց Աստուծոյ և մերձաւորաց հնոց և նորոց կուսակրանաց ասացելոց։ Արք հզօրք՝ խաղացեալք ընդ հրոյ և ընդ սրոյ, ընդ երկրի, ընդ ջրոյ և ընդ օդոյ, և ընդ ամենայն աշխարհիս մասանց, և բռնութեանց աշխարհականաց և պատրանաց. և միանգամայն կոխելով զողջականս և զբռնութիւնս, ամենայնիւ որ ինչ հակառակ հոգւոյն տեսութեան, և վերամբարձման խափանող և 'ի վայր հայեցուցանողք՝ յաղթողք։ Որովք հանապազ եկեղեցի զարդարեալ պսակի. երբեմն համանգամայնից յիշատակօք, և երբեմն իւրաքանչիւրովքն յաւուրս տօնախմբութեան. յորս նախաձայ-

նութիւն քարոզեն և 'ի զգուշութիւն պարկեշտութեան զմեզ յորդորեն. և արթնութեամբ զքունն ստկաւացուցանելոյ, և զցանկութիւնն հալածելոյ. զի այս զոգի և զմարմին յորոց եմք՝ մաքրելով՝ անախտ զարբոց պատահիցեմք տօնել զտօնս, և զ'ի նոցայն վերուստ փայլեալ լուսոյ ծաւալումն՝ հոգւոյս մեր աչօք ոչ միայն յստակ տեսանել արժանաւորիցիմք, այլ և 'ի մեզ ինքեանս զայսպիսի լուսոյ ընդունել բաւիցեմք զՀառագայթից զօրութիւն. և նահատակ 'ի մէջ նահատակաց երեւիցիմք մաքրութեամբն և տօնասիրութեամբն:

Որպէս և այրս երեւելի 'ի մէջ արբոց, և մեր ըստ աւետարանին ծնող, Գրիգորիոս աստուածայինն. արդարեւ արմաւենի տնկեալ 'ի տան տեառն, և 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեալ, և այսպիսեաք և այսքանեաք ժողովրդովք բազմացեալ 'ի ծերութիւնն, 'ի պարարտութիւնն հոգեւոր զմեզ ժողովեաց 'ի փառս և 'ի գովեստ Աստուծոյ.

որոյ յիշատակաւն զուարճանամք քան զբազումս. համարձակիմ ասել թէ և քան զամենեսեան, և առաքինեացն ճշմարտապէս աղօթեմ, թեթեւ փոքր ինչ հեռեւող լինել, և հաւատոյն հաւատի ձայնակցեմ որ ինչ նորայն ճշմարտութեամբ, և որոց և օտարաձայնից մտելոց 'ի նորայն ճշմարիտ ձայնս՝ ըղձամ հանդիսիւ պատահել հոգեւոր բանիւ, և աւանդութեան սրբոց հարցն։ Այլ այս՝ երբ և կամեցիս։ Բայց այժմ մեք՝ որ ինչ մեծի և սրբոյ հօրս արժան է, յառաջ կոչեսցուք զբանս։

Սա, որպէս ամենեցուն յայտնի է, գաւառաւ Պարթեւ, 'ի ցեղէ թագաւորեալ, զատուցեալ արշակունի, 'ի հօրէ Անակ կոչեցելոյ, և յարեւելից կողմանց աշխարհի՝ արեւելք մեզ ծագեցաւ, և իմանալի արեգականն հոգեւոր ճառագայթ, 'ի խորին ջարութենէ ամբարշտութեանն՝ ճշմարիտ բարի և այսահալած. 'ի տղայական հասակին փախուցեալ 'ի Յունաց աշխարհն ըստ

դիպուածոյն , որում ամենեքեան
փորձ էք : Այլ այսոքիկ ոչ դի-
պուած առաւել՝ քան թէ նախախ-
նամութիւն Աստուծոյ , և մերոյ
փրկութեան տեսչութիւն՝ բարիս
այս և երանելի դիպուած . որպէս
և այն ինչ թագաւորին հէնս մահու
'ի վերայ աշխարհի մերոյ հասուցա-
նէր , սակս 'ի վերջին երանութե և
շինութե հոգեւորի առիթ : Այլ
աստանօր անվայելուչ է առանց լը-
ծակցի մօտաւորութեան զբանս յա-
ռաջ մատուցանել . զի 'ի ձեռն հա-
մեմատութեան երկոցունց բանի ,
որ ինչ յառաջինն միայն զօրու-
թիւն՝ երեւեցուսցէ զընկերին ամե-
նակատար լաւութիւն :

Արդ երկուս զոսա ազգակից
հարազատս , աստուածային խնամ
ունուցանէր 'ի Յունաց աշխարհին .
ոմն , որպէս պարտ է ասել ճշմար-
տութեամբ , զառաքելութեան վի-
ճակ մերոյ աշխարհիս և զքահա-
նայապետութեան՝ հանդերձ մար-
տիրոսութեամբ վարժելով . իսկ ոմն
թագաւորական ունելով ախոր-

ժակս, և ձիաւորեալ և զէնս յաջո-
ղակաբար շարժելով. և երկոքեան՝
փոքր ինչ մնալ 'ի ջարուեթեանն, ոչ
իբրեւ անտես առնելով՝ որ զամենե-
ցուն առաձեռն պատրաստ ունի ըզ-
փրկութիւն, և որ ընտրէ զսուրբս
յորովայնէ, և կամ զեւս հաւաս-
տին ասել՝ յառաջ քան զլինելն աշ-
խարհի՝ լինել սուրբս և անարատս
առաջի նորա սիրով. այլ որպէս վե-
րագոյն ասացաք, զփորձ ցուցանել
կատարելութեան միւսոյն առժա-
մանակէիւն, նորին ջարուեթեամբ և
զդարձ նորին յամենայնի ցուցանել
հրաշափառագոյն՝ 'ի բարին փո-
փոխմամբ 'ի ջարուեթենէն. օրինակ
ինն, օձի 'ի բաց եդեալ զնաածանելն,
և առեւծ զյափշտակելն: Կամ զոր
աստուածային բանն առ Հեբրայե-
ցւովքն անհնարին համարեալ լինել
ջարուեթեանն փոփոխումն, ասա-
դիւրաւ պատահեալ. ինծ զնայ-
տուցս՝ իբրեւ եգիպտացի կամ հըն-
դիկ զսեւութիւնն 'ի բաց մերկա-
ցեալք, թէպէտեւ բռնութեամբ
պատժոց: Եւ մինն զարգանայր 'ի

Կեսարիա կապադովկացւոց 'ի հրա-
հանգս հոգեւորս. իսկ միւսն առ-
սաստկագունի և աննուաստագունի
կոմսի՝ Ղիկիանէս կոչեցեալ անուն.
որ ինչ հակառակ հոգւոյն և զըստ
մարմնականն հոչակեցուցանէ,
խազմ և ժամանակ գումարութեան
զինուց և հեծելոց՝ որ 'ի բարբարո-
սաց՝ զյունականաւն զեղոյր զաշ-
խարհաւ։ Քանզի 'ի կուտել զորաց
բազմաց կողմանցն երկոցունց, բան
հանդիսի զորանայր 'ի խուժական
կողմանէն, իբր մարդասիրելի բազ-
մութեանն. և 'ի ձեռն մենամար-
տութե՛ թագաւորացն երկոցունց՝
զերին վճարել զկատարումն. և
զյաղթութիւնն որ ոք և առցէ՝ հնա-
զանդել միմեանց, եղեցին վճարմամբ
այսպիսի երի՝ կողմանքն երկոքին։

Բանն սաստկանայր, և ինքնա-
կալն վարանեալ տարակուսէր, ոչ
տանելով զայսպիսի լուր բարբա-
ռոյ, և ոչ պատահել մենամարտու-
թեամբ ահագին վերագին՝ կանացի
ուժ և սիրտ։ Զայսոսիկ վարանս
տարակուսանաց լուծանէր ծանօթ

և ընդեալ հաստատութեան արտի և ուժոյ պարթեւին՝ կոմսութեան հասելոյ պատուոյ Լիկիանէան. կանգնէ զանյուսութիւնն, և զերկեղ մահուն 'ի բաց փարատէ. ուրախասցի ինքնակալդ ասելով, քանզի բազում արս քաջս և անուանիս տածեալ փայփայէ քո հզօր զօրութիւնդ. որ իրս այսպիսի ըստ իւրաքանչիւր դիպուածոյ վճարեսցին. և ինքնակալութիւնդ ձեր յուրախութեան խաղաղութեամբ մնասցէ. այլ որ այժմ աստ հասեալ է՝ այր հզօր 'ի զաւակէ Թագաւորացն Հայոց, որով կարծեմ զայսպիսի իրս դիւրաւ վճարել նովաւ: Եւ յինքն դարձեալ անարին, հրամայեաց ածել զքաջն. և ընդ տեսլեանն՝ իմանայ ինն գոգցես որ 'ի նմա արիութիւնն, միանգամայն և 'ի պատերազմողացն: Եւ վստահացեալ յայսպիսի սաստկութեն մարմնոյ և ուժոյ, դարձուածս պատասխանւոյ առաքէր խուժացն, զյորդորեալ բանն 'ի նոցանէ արդիւնաբերծել ինքեամբք: Իսկ զծածուկ

նենգութիւնն՝ի ձեռն առեալ, զայն որ՝ի Պահլաւաց քաջն՝ հանդերձէ. ձեւ և շուք թագաւորական զնովաւ արկեալ՝ համբաւէր ինքնակալ կայսրը։

Այլ քանզի ազնախմբութեան, և ոչ պատմութեան է ժամանակս, կարճառօտիւ զայսոսիկ հարցուք, փութալով յոր ինչ աւուրս բան։ Պատահեն միմեանց Գութն և Պարթեւն. յաղթահարէ Պարթեւն, ձերբակալարարեալ զխուժն՝ի թագաւորութիւնն հայրենի զՏրդատ՝ այսպիսիս ածէր դիպուած։ Այլ զայս ամենայն գործէ յառաջատեսութիւնն Աստուծոյ, որպէս կամք են ասել իմոյ բանիս, յաղագս որ՝ի մեզ փրկութեանն ճանապարհ։ Արդ պսակաւ և ծիրանեօք զհասակ և զգագաթն զարդարեալ Տրդատիոս, ՝ի հայրական իւր հասանէր աշխարհ։ Զհետ սորա մտեալ իմաստունն այն և հոգեւոր որսորդ, զի զբոսա մարմնոյ ազգակիցն բագորդ կացուսցէ հոգեւոր հարազատութեանն նախանձ. իբրեւ կարթիւ

զառ 'ի Քրիստոս հաւատոցն, բա-
նիւ պատմելով զհամբերութիւնն
իւր և զժուժկալութիւն, և լար կա-
պելով 'ի նմա զերկայնութիւն յու-
սոյն, ընդ որս և զտանջանացն եւս
ընդ փորձութեանն եղեւ։

Բայց բուռն հարեալ ունի զայս-
պիսի խորամանկութենէ ձեռն աս-
տուածային. զի որ 'ի գիՃութեան
և յապականութեան անքանացեալ
կենդանին բանաւոր՝ 'ի բարձրու-
թենէ խոնարհի և յանլոյս նիւթոյ
կորզեսցի յօդամաքուրս և յստակ 'ի
տուրեւառութիւն շնչոյ կենդա-
նութեան հոգեւորի, և 'ի տեսու-
թիւն լուսոյ մշանջենաւորի։ Արդ-
ածէ ժամանակն զերկոսին ասա-
զոմն զերբեմն արուսեկին աղջամղ-
ջին 'ի ձեռն ունելով Ճառագայթ,
և զառաջնոյ օձին 'ի բերան ունե-
լով զթոյնս. խորհի երբեմն ահիւ
տանջանաց, և բռնութեամբ գեղա-
րանաց և կախաղանաց զլոյսն որ 'ի
հոգւոջ միւսոյն հալածել, և զնա-
ւարային Ճառագայթն՝ որ 'ի ձեռին
իւրում՝ 'ի ներքս բնակեցուցանել.

և մերթ ողոքանօք բանիւք և պատրա-
նօք քարշէլ 'ի փառս և 'ի հեշտու-
թիւնս մարմնականս, և զամենայն
ինչ հնարի որ ինչ անկ էր իւրոյ կո-
ղբստեանն. մանաւանդ զի զոգւոյ
նորա ապականեսցէ զգեղեցկազա-
նութիւն: Իսկ ոմն զիմաստութիւն
հոգեւոր 'ի վար արկեալ, կամաւո-
րութեամբ զմարմին մատնէ տանջա-
նաց. և ազատութեամբ հոգւոյն,
որ ինչ մարմնոյն հրապուրող ողո-
քականքն և ծառայականք՝ 'ի բաց
հալածէ զբանս. և ամենայն որ ինչ
դժնդակութեամբ՝ համբերէ. նպա-
տակ առաջի եդեալ ազատութիւն
հոգեւոր, զհակառակամարտն իւր
առ ինքն 'ի վեր ածէ. և լինէր հան-
դէս երկոցունց սաստիկ: Ոմն աշ-
խարհական խաւարին այսորիկ հա-
մարել մտանել ընդ միտ, և ոմն երկ-
նի և ամենայնի ստեղծողն. մինչ զի
պարտ է ասել ճշմարտութեամբ,
զհրեշտակս ապստամբս և զզինուո-
րութիւնն երկնայինս առ հասա-
րակ 'ի տեսիլ հանդիսին վառեալ,
և զիւրաքանչիւրսն 'ի կամակ իւրա-

քանչիւր սագրել։ Քանզի դիւացն
ամբոխութիւնք՝ որ ինչ իւրեանց՝ 'ի
գործ արկեալք, 'ի նենգութիւն
փութային. ոմանք զսիրտ թագա-
ւորին 'ի բարկութիւն դրդռել, զի
մարմնոյն ցաւով որ 'ի պէսպէս տան-
ջանացն տագնապեալ սուրբն, նո-
ցին հաւանեսցի զոհատրութեան
բագնաց։ Իսկ ոմանք՝ 'ի բանից մե-
քենայս և 'ի խորհրդոյ ճարտա-
րութիւնս 'ի նորին մտաց վարդապե-
տէին. զի կամ մահուն երկեղիւ և
անյուսութեան կենաց զսիրտ նա-
հատակին տատանիցէ, կամ ըզ-
կեանս և զբարեփառութիւն, և
որ ինչ ըստ մարմնոյ մեծութիւն և
հեշտութիւնք յիշեցուցանելով՝ հը-
րապուրեսցէ. և վաղ ուրեմն 'ի նոր
տիան, զհրապոյրն և զհրապուրողն
արհամարհելով կոխիցէ։ Իսկ նրբա-
գոյնքն այսպիսեաց ամբոխից փոր-
ձի՝ նոր ինչ անկանել իւրեանց, իբ-
րեւ թէ զխորհուրդս շփոթել զսըր-
բոյն, զպարզն զայն և զյատակ, ըզ-
վերնոյ իմաստութեան զնշոյլս 'ի
բաց 'ի նմանէ արտահանել, և զբաղ

մայօգս զայս և զշնչական ստորին
խաբէութիւնս՝ փոխանակ 'ի նմա
արտադրել. կամ թէ ինքեանք իսկ
բոլորովին մնալ 'ի մեր միտս և խոր-
հուրդս. և այլք այլ ինչ, յորոյ ի-
րիք 'ի վերայ կարդեցաւ իւրաքան-
չիւր ոք 'ի նոցանէ իշխան խաւա-
րին յապստամբէ վիշապին։ Իսկ
սպասաւորք վերնոյ և անճառելի
լուսոյն, և յաղագս բարւոյ 'ի բա-
րեացն վայրէ՝ 'ի բարին բարի մեզ
առաքմունք յաւուաջագային զօրու-
թեամբ. հովանեաւ անստուեր լու-
սոյն նշուլմամբ որ 'ի նոսա՝ ծանու-
ցեալք զյաղթութիւն սրբոյն, ըզ-
պսակ հանդիսին պատրաստ բար-
ձեալ ունէին. և յաղագս հանդեր-
ձելոյ մեզ բարեացն՝ արարչին մաղ-
թէին։ Բայց հանդիսագիր մարտին
էր բան թագաւորին, պսակս և
թաւ ոսոս ծառոց՝ նուէրս տանել
բագնին՝ անահտական պատկերին։
Բայց այս՝ ըստ պարսկական լեզուոյ՝
պանծալի անուամբ մեծարեալ ըզ-
բագինն, ոչ գիտեմ՝ Ռէաս լեալ
կամ Ամֆինաս, զորս պատուէն ա-

առասպելքն հինք, յորոց և բան թա-
գաւորին։ Այլ սա, թէպէտ աս-
տուածուհի և մայր 'ի թագաւորէն
վարկեալ, կամ՝ այն՝ որ յուղղոյն
Արամազդայ սերմանեցաւ, որպէս
հաճոյ թուեցաւ ասել քերթողին,
և պարկեշտացուցանել պանծալի
տառիւք զանպարկեշտն, իբր թէ
իմաստութեան և ողջախոհութեան
լեալ ծորումն. այլ սրբոյ նահատա-
կին գարշելիք և պիղծք երկոքեան,
և աղբեւրք ամենայն գիջութեան և
տգիտութեան. շաղղակերք և
արիւնարբուք, և չար դիւացն՝ չար
պատկերք և ձանիչք։

Արդ այսպիսեաց յիմարութեանց
և անբանութեանց հրամանի ընդդի-
մացեալ սուրբն, հրամայի պահել
առ օր մի։ Եւ զինչ զկնի այսորիկ.
հանդիսանայ թագաւորն 'ի բանս,
յիշեցուցանելով նմա շնորհակա-
լութեամբ զնորին ինքեան անստա-
հակ ծառայութիւնն. առաջի և
զիւրոյ կամացն արկանելով զնոր-
հուրդս, զգիշերոյս այսորիկ և զան-
ցաւոր ատուերի. մեծամեծս նմա

բարեաց հատուցանելով մասունս
շնորհաց՝ յաղագս որոյ միամտու-
թեամբ ծառայեաց։ Այլ Քրիս-
տոսի վկայն գիտէ ոչ վասն մարմնա-
կանաց պարգեւաց ծառայել մարդ-
կան, այլ վասն որ հնազանդեցաւն,
և օրինադրեաց զհնազանդութիւն.
և որ ոչ եկն առնուլ պաշտօն, այլ
պաշտել, և տալ զանձն փրկանս փո-
խանակ բազմաց։ Որում և զսոյն
իսկ մատուցանէ պատասխանեաց
փոխարէնս, և զգրեալն հնազանդ լի-
նել մարմնաւոր տերանց, որպէս
օրէն է. բայց զԱստուծոյ պաշտօն
ոչ ումեք ասել վայել է, զմիայնոյ
արարչին երկնի և երկրի և որ 'ի նո-
սա։ Իսկ առ յընդդիմանալ թագա-
ւորին, և զոմն զի ինչ՝ Աստուած
գիտել, հեզիկ և գողտր բարբառով
որպէս մարդ՝ աստուածաբանու-
թեամբ առնէ նմա սկիզբն, ցուցա-
նելով նմա մշտնջենաւոր և ան-
սկիզբն գոյութիւն, պատճառ և
սկիզբն ամենայնի. և զերրեակ միու-
թիւն՝ 'ի մի գոյութեան քարոզէ,
որոյ ակնարկութեամբ եկաց իսկ

բովանդակ երեւելի և աներեւոյթ արարածս : Ուսուցանելով և յաղագս հրեշտակաց և զինուորութեանց . և թէ հոգս այս և սեղմեալ կէտ հանդերձ հաստատութեամբ , և երկիր և որ 'ի նմա սահմանելի կարգաւորութեամբ բերեալն , բանիւ նորա անխախտելի բարձեալ պահի : Ցուցանէ նմա և զդիցն որպիսութիւն , թէ ոչ աստուածք , այլ մարդիկ լեալ մահկանացուք , դիւթութեամբ և դիւականաւ մոլորութեամբ յառաջ եկեալ , զարհուրեցուցին զվաղնջուց միտս 'ի մարդկանէ , կարծեցուցանելով պաշտելիս նոցա զինքեանս և աստուածս : Եւ առ այն թագաւորն . Քանիցս անգամ տուեալ է խրատս և պատուէր , զի մի երկրորդեսցես առաջի իմ զհաստուածս բանիցդ առասպելեաց՝ զոր յօդեալ ուսեալդ ես 'ի մանկութենէ . որ բերեն քեզ փոխանակ պատուի՝ անարգանս . և փոխանակ բարձի և յառաջատութեան՝ բանտ և կապանս , և մահ որ հատանէ զյոյս 'ի մարդկանէ :

Եւ ծանուցեալ սրբոյն զնախա-
տող նոյն ընդ բերան մահու փչեալ
Թագաւորին զԹոյնս, հանդարտու-
Թեամբ զմնացուածս իւրոց բանից՝
առանց երկիւղի և շփոԹուԹեան
խորհրդոց 'ի վերայ բերեալ, Թէ
զայսպիսի պաշտողս՝ և ոչ զմի զէն
'ի վերայ ամենայնի և ընդ ամենայ-
նի, և յամենեսին 'ի մեզ ծանու-
ցեալ՝ ձիս և Ջորիս լեալ 'ի գրոյն ու-
սաք. զորոց սանձիւք և դանդանաւա-
դաւ զկզական ՀՄՀեսցէ զառ նա ոչ
կամեցողաց մերձենալ. և այս մար-
գարէական առ հանդերձելոյն նմա
լինել կերպարանաց փոփոխումն:
Ընդ որոյ խստացեալ մրրիկ չարու-
Թեանն նեղէ զխորհուրդս Թագա-
ւորին, և զմոլեկանի նորա պայԹե-
ցուցեալ եռացումն, սասարկս շան-
Թըս իբր 'ի հրոյ՝ զբանիցն 'ի վեր
առաքէ կայծակունս: Փոխանակ
զի մահկանացու, ասէ, իշխեցեր ա-
սել զդիան, և մեզ Թագաւորացս
ձիս և Ջորիս, ես զնոտեացն քոց
հատուցից զբանիցն զպտուղս: Եւ
հրամայէ դնել գայլ 'ի բերան նո-

ըս , և արձանս աղի 'ի վերայ ողին նորա . և այսոքիւք հանդերձ ոլորել և համբառնալ 'ի ծայրս ապարանից որմոյն մեքենայիւք աւուրս եօթն : Իսկ զմեկնութիւն այսպիսեաց իւրոց տանջանաց՝ ինքն 'ի պատասխանեան արտաբերէ , իւր անձին լեալ մաքրութիւն , և համ հոգեւոր : Այլ երկրորդն որում ահագինք և հրաշափառագոյնք բանք աղօթից կախաղանացն , այսոքիւք զպատկեր փրկչականին բերէ չարչարանաց . զնոյն առ նա յաղագս չարչարանաց իւրոց աղօթել մաղթանս , որպիսիս և առ հայր՝ Քրիստոս յաղագս հրէից : Յետ որոյ և բեւեռք 'ի ստորինս մասունս մարմնոյն , և այսոքիւք ընդ երկիր մածուցեալ . ոլորքացն խոտոցաց՝ մամուլք . ծնկացն՝ յօշումն . կողից՝ քերանք . արտասուացն ամանոց՝ բախմունք . ռնդացն՝ կրկնակի տանջանք . երբեմն՝ փոխանակ օդոյ զաճիւնն ծծելով , և երբեմն՝ որ 'ի սրոյ՝ զզուարթացուցանողն զնուր փոխեաց որակութիւն , որ 'ի պաղոց

որթոց ՀՆՁԵԱԼ, տատասկ կապարն եռացեալ։ Եւ այսոքիւք և վերջինն՝ վիհն անհնարին և աննշոյլ. որ և 'ի մէջ թունաւորացն հնգեատասանամեայ արարեալ ժամանակս, անդադար արտասուօք աղօթիւց, 'ի ժանեաց վիշապին զմեզ կորզեաց։

Եւ զի՞նչ այժմ պատկանաւոր սրբոյն բան, երկբանութեան աղօթիցն։ Աստուած մեծ, տէր թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի՝ հնազանդեցոյց զժողովուրդս և զազգս 'ի ներքոյ ոտից մերոց, և զատելիս մեր ամաչեցոյց. վասն այսորիկ Աստուծով պարծեսցուք զօրհանապազ, և անուան նորա խոստովան եղիցուք յաւիտեան։ Արդ յաղթէ սուրբն. ամաչեցեալ փախստական լինին դեւք. ուրախացեալ հրեշտակք և զսովորականն իւրեանց 'ի վեր առաքեն զփառաբանութիւն, փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն։ Արդ նա որ այսպիսիս, որպէս վերագոյն ասացաք, ըստ մարմնոյ

յայտնի են նախնիք և գաւառ, և այլն ամենայն. իսկ ըստ հոգւոյ, ոչք ըստ մաքրութեան և սակաւապիտութեամբ զկենցաղս զայս վարեցին, և նմանողք Աստուծոյ, իբրեւ սիրելիք լինելով որդիք, երկնայնոյն ցանկացան ազգականութեան։ Որոց հետեւեալ մեծս այս և հրաշափառագոյն հովիւ՝ զվերինն պատուեաց փչումն, և զաղատութիւն ազգականութեանն ամբողջ պահեաց առ սկզբնատիպն, իբրեւ նախակնիք 'ի վեր հայելով ըստ անանիւթ գոյին։ Եւ որ 'ի խորհրդեան անճառելւոյն զնիւթն 'ի վեր տպաւորեաց՝ յայտ է, և տեղի լեալ սորա արփի։ Քանզի ոմն այս ուրեք՝ քան թէ այսպիսում լսելոյ պատրաստեալ է վարուք և ախորժակք. որ 'ի սոյն իսկ, և վասն սորին զզօրութիւն իւր և զնոհականութիւն եցոյց, զմին 'ի ձեռն միակին զօրութեան, և երկրորդին, որ ընդ նովաւ տանջանօք։ Իսկ զմիւսն 'ի բանից հատուցմունս առնէ ողորմութիւն, և շնորհաւոր յամենե-

սեան դարձուած բացատրելով ա-
ռաւել 'ի սոսկալիս և յահագինս.
արդիւնաւոր բանս աղօթից, որում
նուաստանայ 'ի բովանդակէն շարա-
գրի յարմարումն պատմութեանն.
ապա ընտանի ուրեմն ճշմարտու-
թեամբ և ազգական աշակերտաց
փրկչին, և քաղաքակից ամենայն սրբ-
բոց: Ոչք զայսպիսիսն խորհին գոր-
ծել՝ յայտ առնեն ասէ, թէ գաւառ
իմն խնդրեն, և ազնուականի իմն
ցանկացեալ են, այսինքն է երկնա-
ւորին, վերինն Երուսաղէմի, ազա-
տին, ամենեցուն մօրն, եկեղեցեացն
անդրանկաց, ընտրելոց յերկինս:

Այլ զողջախոհութեան սորա որ-
պիսի՞ կարիցէ պատմել բան. որ 'ի
զուգութիւն ամուսնութեան, ոչ
հասակականիւ հասանէ տենչանօք
ցանկութեան, և ոչ բռնութեան
տուփանաց յայս ածեալ, այլ աս-
տուածայնով իմն ազդմամբ և նա-
խախնամական իւր տեսչութեամբ,
որ յաղագս մեր հոգացեալ. 'ի մա-
քուր արմատոյն քաջաբոյս ծաղ-
կեալ շառաւիղք, զգեղեցիկ նորա

և զբարի 'ի նմանէն փոխանորդեալ՝
յաջորդեսցեն հովուութի. և 'ի բա-
րին ըստ նմա արօտս, և 'ի ջուրս ա-
տուածայնւոյն պատգամաց զբանա-
ւոր նորա ձեռինն ոչխարս վայելե-
ցուցանելով, յերկնայինն ամփո-
փեալ հաւաքիցեն փարախս. և այ-
սոքիկ՝ եկեղեցւոյ ժուժկալու-
թեամբ, անլուծանելեաւ հանգու-
ցիւք զնորա գնացիւք արութեանն
'ի բաց կապէ։ Եւ բարձրութեան
հոգւոյն յերկնայինն հասեալ կա-
մաը, զվերնոյ յուսոյն անհաս ու-
նի զծագումն. և հրեշտակականաւն
վայելչացեալ պայծառանայ գեղեց-
կութեամբ. և տենչայ հանապազ
յերկնայնոցն լինելով տեսութեան
թագաւորն անդադար փառաբա-
նութեան ընդ նոսին կատարել
զպաշտաւորութիւն։ Արդ սորայս
համեմատութեան բան՝ բազմաց
դեր 'ի վերոյ անցեալ կայ բանից,
և բազմաց 'ի հանդիպողութիւն
պատկանեալ։ Բայց զորոյ այսօր ըն-
թերցաք՝ 'ի հոգեւորս իջցուք աս-
պարէս զհրաշագործողին և զնա-

խամարգարէին և օրինադրողին, ըզ-
մեծին ասեմ Մովսէսի՝ զվերջինս
փառաց տեառն հաւասարի տեսողի
և երեսաք փառաւորեցելոյն։ Քան-
զի նա զմորենին անկէզ՝ վառեալ
տեսանելով, կամ թէ այն ինչ է-
լեւումն Աստուծոյ. և հաստատու-
թիւն այսպիսւոյս'ի մերձենալն կամ
'ի յերեւման, և 'ի ձայնէն միայն
արդելեալ լինէր մերձենալ տեսու-
թեան. 'ի բաց հրամայէ լուծանել
զկապս, օրինակաւ կօշկաց խրատիչ՝
իբրեւ անարժան այսպէս աստուա-
ծայնոյն լինել վայրի կացութեան.
և պատուէր առնու՝ արուեստիւք
և սքանչելեաք հանել զորդիսն Իս-
րայելի յԵգիպտոսէ։ Հոլովեցու-
ցանէ և սա զողջայական հասակացն
անիւ յուսմանն քրիստոսականի. և
'ի միջոցէ այսպիսւոյ վարժման՝ ա-
ռաւել քան 'ի հրոյն, և զմեռելու-
թիւն երկրաքարշականաց խորհրդոց
յառաջադոյն 'ի բաց բոկացեալ,
միջամուխ աստուածութեանն լինի
և մերոցն. որպէս հնազանդել հա-
ճոյ թուեցաւ տուողին խորհրդ-

գեանն իւրում՝ տպաւորէ փրկու-
թեան ճանապարհ։ Եւ նմա քերան
և օգնական նրբաձայնութեանն և
ծանրախօսութեանն, յԱստուծոյ
պարգեւեալ լինի եղբայրն իւր Ա-
հարոն, որ թարգմանի հոգի. նշա-
նակ յաւելուածի լեալ հոգւոյ և
շնորհաց. իսկ սմա՝ աստուածայ-
նով ակնարկութեամբ 'ի հռովմայ-
եցւոց աշխարհէն ընծայեցուցանէ
զհսկայաբեկ և զերկնաւորի հարանն,
պաճուճեալ պաճուճանօք զգեղե-
ցիկ կոյսն հանդերձ գայեկաւն։

Տես հաւաստի, երեք են որ ա-
ռաջնորդեն ելից Իսրայելի. Մով-
սէս, և Ահարոն, և գաւազանն որ
յԱստուծոյ. երեք և սոքա ճշմար-
տութեամբ. նահատակն, սուրբ
աղջիկն և ողջախոհ ծերունին. եւ
նոքա օրինակք, իսկ սոքա սպասա-
ւորք ճշմարտութեանն։ Ո՞վ երրե-
կին զօրութեան և կատարելութե-
վան զի զէն, և զմիշտն, և զգոյն
'ի վեր թողցուք. որպէս ոմանք
յարտաքնոցն իմաստասիրեցին մեզ
յայտնագոյնս. և յայլս զնիւթն,

զսկիզբն , զտեսակ յանկերպ գոյին, 'ի զարդ և 'ի կերպարան շարժիլ, զծայրան և որ ընդ նոքօք : Իսկ 'ի փոքր աշխարհումն՝ զթանձր ըզ-նիւթն , և որ զերկոսեանն շարժէ՝ զանձն եռամեան , զմիջուութիւն և զեզերումն : Այլ սիրէի աստանօր հրաշացուցանել զբանս , յառաջ մատուցանել և զբոլոր լսողացդ ու-րախացուցանել զլսելիս : Եւ գա-ւազանաւն՝ որ յԱստուծոյ յայտ արար նշանակաւն զխորհուրդ , և որ նման այսոցիկ , 'ի խորութենէ գան-ձու հոգւոյն կտակարանաց՝ թաք-նաբար շողացեալ փայլէ :

Այլ զի մի՛ 'ի համեմատութենէ վրիպեալ՝ մոլորիցիմք 'ի բանէն , դարձեալ վերափոխելով դարձուս-ցուք 'ի նա զբանս : Նա՝ գաւազա-նաւն որ յԱստուծոյ զջուրցն բնու-թիւն փոխէ յարիւն , և զնոյն ինքն զգաւազանն յօձ կերպացուցանէ , և 'ի ծագ տանոյն դարձեալ զձեռնն իւր կարկառեալ 'ի նմին ինքեան փոփոխեալ հաւաքէր բնութիւն . զի 'ի ձեռն այնպիսի հրաշագործու-

թեան զբնաւ ձեռ որդւոցն Իս-
րայելի հանեալ փոխաբնակեցուցա-
նէր 'ի խոստացեալումն երկրին պար-
գեւաց : Իսկ սա անդ ուրեմն 'ի խո-
րութեան գոլով վերապին 'ի մէջ
թունաւորացն , և զնաածանող բնու-
թիւնս նոցա սանձէ , կամ թէ ըզ-
թոյնս 'ի բաց բառնայ . և հարկա-
նէ ոչ գաւազանաւ զջուրն՝ այլ առ
Աստուած բանիւն զանձն թագա-
ւորին , և զմարդկային նորա կեր-
պարանս՝ 'ի վատթարագոյն անաս-
նոյ փոխաձեւէ . և քան զԲաբելա-
ցւոյն զազրութիւնն՝ որ օրինացն
անմաքուր էր և աստուածայնոյն
զոհեցն աննուիրական : Իսկ ապա
ուրեմն նշանաւ խաչին զձեռն իւր
կարկառեալ 'ի նա , ըստ հասարա-
կացս զնա ձեւով կերպացուցանէ .
և զամբարշտութեան նորա բարս 'ի
բարեպաշտութիւն փոփոխէ , և
զաղգ արամեան տոհմիս , և զբոլոր
հիւսիսի 'ի խաւարէ հանեալ ան-
գիտութեան՝ 'ի լոյս փոխանակե-
ցուցանէ աստուածայնոյ գիտու-
թեանն : Նա տասնեակ հարուա-

ծովք տանջեալ զԵգիպտացիսն , ե-
հան զորդիսն Իսրայելի 'ի միջոյ եր-
կաթոյն հալոցաց . իսկ սա տասանց
և այլոց 'ի վերայ երիցն յաղթելով
տանջանաց , այսպիսեաք և այսքա-
նեաք յաղթութեաք՝ զաներեւոյթսն
ապատամբին տանջէ զօրութիւնս , և
զմեզ 'ի սորին և 'ի տարտարոսա-
կան Եգիպտոսէ և յանհնարին խա-
ւարէ , 'ի դիւացն խորհրդակցու-
թենէ՝ առ իմանալւոյն և անմոռա-
նելոյ արեգականն Ճառագայթս 'ի
վեր կորզեաց : Նա գաւազանաւն
զԿարմիրն փեռեկեաց ծով , և
սեամբ հրոյ և ամբով առաջնոր-
դեաց որդւոցն Իսրայելի , և հե-
տեւեցոյց ընդ անդունդս խորասու-
զեալ զփարաւոնն : Իսկ սա ընդ
կրունկն անդէն զեփրատականն
դարձոյց յորձանս , և յերկնից հզօ-
րագոյն փայլեցուցեալ ծագումն
լուսոյ , արեգակնայիցն յաղթեաց
Ճառագայթից . և զմերազնեայ բազ-
մութիւնս 'ի յայսպիսումն խորու-
թեան՝ աւազանին խորհրդեամբ
լուսաւորեալ, զաներեւոյթ փարա-

ւոնին՝ զօրութեամբ նորա որ 'ի Յորդանան՝ ջախեաց զգլուխ։ Նա մանանայիւ զժողովուրդն յանապատին կերակրեաց. իսկ սա Ճշմարիտ 'ի յերկնէ իջեալ հացիւն՝ որոց ըզնոյն ծանօթացոյց։ Նա գաւազանաւն զապառաժն հարեալ զվէմ, հոսեցոյց վտակս, և զպաքուն ժողովրդեանն արբոյց. իսկ սա զաստուածայնոց պատգամացն բացեալ աղբիւր, գետախաղաղացոյց վտակս ջրոց կենդանեաց. և զոգւոց մարդկան ծարաւեալ անդաստանս՝ հոգեւորաւն արբոյց ուռոգմամբ։ Նա համբարձմամբ ձեռաց իւրոց զՅեսու զօրացուցեալ, զԱմաղէկ պարտեաց. իսկ սա նշանաւ խաչանիշ փայտին զմեհեանս դիւացն հրդեհեալ տոչորեաց, և զբազմութիւն դիւացն որ 'ի նոսա՝ փախըստական մինչեւ 'ի Կովկաս առաքեաց։ Նա յերկիր Աւետեաց, 'ի Պաղեստինեայ զժողովուրդն համբարձ. իսկ սա 'ի հանդերձեալ աշխարհին յիմանալին՝ ուղիղ հովւութեամբ մեղ առաջնորդէ. կամ

թէ զկատարելագոյնս ասել, 'ի տե-
սութիւն Աստուծոյ, որչափ կրթե-
ցաւ իւրաքանչիւր ոք 'ի մէնջ վա-
րուք և օրինակօք, և ուղիղ վարդա-
պետական բանիւ զԱստուած տե-
սանել:

Այսպիսի սորա կեանք. այսպի-
սի սորա խորհուրդ և բան. ոչնուի-
րեալ միայն զինքն Աստուծոյ, ոչ
զմի միայն կամ զերկուս կատա-
րեալ մասն առաքինութեան, որ-
պէս զոհիցն նշանակէր բան, զա-
րիւնն միայն զբաղնաւն հեղուլ,
կամ մեզ և զայլն ամենայն թո-
ղուլ, կամ զման ինչ 'ի փորոտւոյն
Աստուծոյ նուիրել, և զայլն ամե-
նայն թողուլ աննուէր և անվերա-
կացու. այլ զամենայն կատարեալ
առաքինութիւն, ամենեւին զինքն
Աստուծոյ նուիրեաց. զբոլորն բո-
լորովին պատարագ կենդանի,
սուրբ, հաճոյ Աստուծոյ. զմարմի-
նն կապեալ ընդ հոգւոյ ցանկու-
թեան, զհոգւոյ ակն անքթթելի
յԱստուած կառուցեալ: Այսու
մեր սա հայր, այսպիսի տեսուչ,
այսպիսի հովիւ:

Գրիգորիոս արթուն կամ հրա-
կոչ յաւազանէ կոչեցեալանուամբ,
արթնագոյն և սիրով և հովուա-
կան բանիւք. անդադար զհոգեւորս
ուղղելով քարքառ, 'ի բացեայ հե-
ռի պահէր զանմարմին գազանն։
Քանզի քաջ հովուին՝ քաջ և ճըշ-
մարիտ գոլ աշակերտ. ուղղէ այժմ
աղօթիւք առ Քրիստոս, և զայժմու
ուսմանց սխալմունս՝ ձայնիւ և գա-
ւազանաւ, երբեմն կոչելով քաղցր
ձայնիւ, և երբեմն սաստելով, զեր-
կոսեան 'ի հոգւոյն բանից. և որ
Քրիստոսին խօսէր ուսեալ, յան-
գիմանեա, սաստեա, մխիթարեա
առ Տիմովթէոս գրելով։ Այսպէս
զկեանս սա էլից, այսպէս աշխար-
հի՝ որպէս հնար է՝ յաղթեաց. այս-
պէս զանմարմնոցն 'ի մարմնի տպա-
ւորեաց զկենցաղս։ Իսկ այժմ ընդ
հրեշտակս 'ի յիմանալումն վայրի,
իմանալեացն տեսող՝ սպասէ հա-
տարակացս 'ի բարին փոփոխման, զի
որով նահատակեցաւն՝ զիմանալին
առցէ պսակ 'ի յերբեւման հովուա-
պետին՝ աթոռով յաջմէ նստցի ընդ

նմա , զորոյ զպակասութիւն ընթա-
ցեալ ելից · դարձեալ դատել զիւրոյ
հովուութեանն ոչխարս , կամ թէ
բան տալ ընդ նոցա մաղթանաց :

Արդ այսոքիկ քեզ առ 'ի մէնջ ,
իսկ առաւելն քան զայսոսիկ՝ ար-
ժանաւորացն և հոգեւորացն կըր-
թելոց՝ որք ըստ քեզ են շնորհօք :
Այլ ընկալ այժմ զմերս որ յա-
ղագս քո փոքր 'ի շատէ բան գովեա-
տի , որպէս զերկուս լուսայս այր-
ւոյն՝ վարդապետն քո և տէր : Եւ
ընդունիս , քաջ գիտեմ · զի ճշմա-
րիտ նորա ես աշակերտ , և զպա-
կասութիւնն յայսոսիկ մերոց շնոր-
հաց , սատարութեամբ աղօթից քոց
լցցես : Զի զմնացեալն այսոցիկ՝ ար-
ժանապէս կարասցուք ասել , շնոր-
հօք բանին և հոգւոյն սրբոյ , 'ի
փառս ամենասուրբ երրորդութեն՝
Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ·
որում ամենայն փառք պատիւ և
զօրութիւն յաւիտեանս · ամէն :

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱՐՁՐԲԵՐԴՑԻ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՃԱՌԻՍ

ՎԱՄՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

Ի ԽՆԴՐՈՅ ՏԵԱՌՆ ՀԱՄԱԶԱՍՊԱՅ

Փառք հարց աստուածասիրաց՝ մեծութիւն է որդւոց. և գովութիւն նախնեաց բարեպաշտից՝ պսակ պարծանաց բարեմիտ զաւակաց, որպէս ասէ բարեխրատն Սողոմոն։ Որ թէպէտ կարապետն Քրիստոսի 'ի բաց տանի զհրէական ժողովուրդն 'ի պարծանաց որդիութեանն Աբրահամու, վասն զի աննմանք էին նմա գործովքն, որպէս և տէրն հաստատէ, և Պաւղոս վկայէ խորթութեան նոցա և տարագրութեան, սակայն հաւատով պատուասաէլոցն յարմատն պարարտ՝ յոյժ պատճառաւ տայ պարծանաց, աստեղափայլ և աղատածին որդիս կոչելով Աբրահամու՝ զհեթանոսաց

հաւատացեալս : Որում և դու նախանձաւոր եղեալ՝ գովեալդ 'ի գլուխ Սիոնի պատկառեցուցիչ՝ տէր Համազասպ , խնդրեցեր գո- վութիւն քոյոյն Աբրահամու՝ մեծին Գրիգորի , և համանման նորայն հարազատաց : Թողեալ զպարծանս ազնուական տոհմաւորութեան քո ըստ մարմնոյ՝ հաւատոյ հարամքքն կամիս փառաւորիլ . և այդ յոյժ հոգողութեամբ , և 'ի հեռի ժամանակաց կարօտեալ . և հայցեա յայլմէ կատարելոյ և 'ի կարողէ , և մեզ եւս հրամայեցէք զերկուսիս մոտաց ձերոց աղաւոել , և զցամաք ծարաւոյդ շինջուցանել . որում կարի անարժան հանդիպիմ , և պակաս 'ի զօրութենէ : Բայց եթէ երկնաւոր ողորմութիւնն 'ի ձեռն ապառաւու կամի կերակրել զքեզ յերաշտի , և արբուցանել 'ի հեղեղատէ , որպէս երբեմն զՀեղիսաս 'ի ձորն Քուռաթու , այն Աստուծոյ շնորհացն էր , և Եղիայի ճգանցն : Որում և մեք հաղորդեսցուք մասին , և շնորհապարտ լիցուք Աստուծոյ յաւիտեանս :

ՆԵՐԲՈՂԵԱՆ

ՄԵԾԻՄԱՍՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

ՎԱՐԴԱՆԱՅ

ՅԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ ՊԱՐԹԵԻՆ

ԳՐԻԳՈՐԻՈՍ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՍ

Օրհնեալ տէր Աստուած հարցն մերոց, և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա 'ի տաճարի իւրում, և 'ի վերայ հաստատութեան աթոռոյ իւրոյ, այն՝ որ 'ի կանուխ գիտութեանն իւրում ծանուցեալ զհարան մեր յառաջագոյն հրաւիրեաց, և 'ի բեղնաւոր քարի աւուրս կոչեաց 'ի ձեռն շնորհաց իւրոց. զորս արդարացոյց կենաւքեր ջրո

գեղրութեանն պատուով մեծա-
րեալ՝ փառաւոր արար։

Քանզի ոչ յարեւելից, և ոչ յա-
րեւմտից, և ոչ յանապատէ լերանց
եղեւ մեզ այցելութիւն. այլ այն
որ ստեղծն զմեզ, երեւեցաւ մեզ
արեգակն 'ի բարձանց, և ծագեաց
լոյս՝ որոց նստէաք 'ի խաւարի և 'ի
ստուերս մահու, ուղղել զոտս մեր
'ի ճանապարհս խաղաղութեան և
փրկութեան, դատաւորն ամենայն
մեղեաց՝ ամենայաղթ դատաստա-
նաւն յայտնեալ։ Քանզի 'ի սկզ-
բանցն և յաւիտեանցն արարիչ՝ 'ի
լման ժամանակաց մանուկ եղեալ
մատաղ՝ յապառաժ ձգեաց զձեռն
իւր ամենակիր. տապալեաց զլերինս
'ի հիմանէ՝ զհպարտութիւն բան-
սարկուին, որ ապառաժ գործեաց
զբանաւոր երկիրս պարարտ. և
արկ զմատուանս արուեստի իւրոյ
յորկս օձից և 'ի բոյնս կարձաց, 'ի
դարանս ողնեաց՝ աղուեսուց և համ-
բարուաց, այսինքն 'ի հոգիս մարդ-
կան՝ ուր բուներեալ էին ապականիչ
զօրութիւնքն, յոքնատեսակ վնա-

սուք բաժանեալ. զորս զամենեսեան փոխակերպեալ՝ բուրաստանս ունկեաց զապառաժս, և 'ի բնակութիւնս գազանաց ինքն իսկ բնակեցաւ հարբն իւրով և հոգւովն սրբով։ Եւ զի անհնարինքն 'ի մարդկանէ՝ հնարաւորք են Աստուծոյ, կթեաց 'ի մորենւոյ խաղող, եհան թուզ 'ի տատասկէ. յայգւոյն Սոդոմայ և 'ի ունկոյն Գոմորայ փոխեաց բարուենակս բարիս. կոխեաց զատակս անդնդոց. աղբիւրացոյց զվէմն, արտավարեաց յօդս, պըտուղս կոչեաց յանարմատ փայտէ, այլովքն հանդերձ. զի մի տաղտուկ խօսեացուք. զամենայն ինչ՝ զոր արար հնոյն Իսրայելի առ Փարաւոն արեւմտից, զնոյնս կրեաց նորոյս Իսրայելի առ հիսուսով արեւելից։ Անդ տանն Սեմայ, ասա տանս Յաբեթի, որ և ընդ Սեմայ էաւ օրհնութեան արձակութիւն և տէրութիւն 'ի վերայ Քանանու։ Անդ աղգին Յակոբայ, որում հրամայեցաւ ընջել կռապաշտից. և ասա որդւոցն Հայ-

կայ, որ ոչ պաշտեաց ընդ Եւթա-
նասուն և մի նահապետս երկրի ըզ-
պատկերն Բելայ. այլ խրախուսեալ
յԱստուածՍ՝ սատակեաց զնոյն ինքն
զկենդանին զառաջնորդն պատկե-
րապաշտութեան։ Անդ զգալի և
տեսանելի, զի օգնեացէ տկար հա-
ւատոց նոցա. և ասա սակաւ ինչ ըզ-
գալի, որ եղեւ հրաշքն առ Տրդա-
տէս. և յոլով մասն խմանալի. զի
մի գանն հարման գաւազանին հայ-
րաբար խրատուն՝ սիրալի և սիրալի՝
բաւական եղեւ որդւոցն՝ Ճանաչել
զհայրն բարի։ Նոցա 'ի ձեռն Մով-
սէսի և Ահարոնի և Յեսուայ. և
մերս 'ի ձեռն Գրիգորի, Արիստա-
կէսի և Վրթանէսի՝ զուարթալոյս
նորայն հարազատաց. որք էին և
սոքա յարմատոյն Աբրահամու՝ որ-
դիք պարարտութեան. որպէս և
գրեալ է, թէ երկու գաւազանք որ-
դիք պարարտութեան հատան յան-
դոյն Աբրահամու, և 'ի ծաղկանց և
'ի պտղոց նոցա լցան տիեզերք։

Քանզի հայրն հաստարակաց՝ ա-
ռաջի Աստուծոյ մեծն Աբրահամ 'ի

ծերութեան անդ մանկացեալ՝ ի զ-
ղութենէն Աստուծոյ՝ ծնանէր ՝ի
կենտուրայ որդիս վեց, զԵմրան, և
զԵքսան, զՄադան, և զՄադիման,
զԵսբուկ, և զՍովիլէ. և սպանեալ
Եմրանայ զԵքսան և զՄադիման,
զահի հարեալ Աբրահամու՝ գուցէ և
զԻսահակ սպանցէ զկնի մահու նո-
ցա, տայ նմա և եղբարցն ինչս, և
արձակէ յարեւելս. յորոց շինե-
ցաւ Բահլ քաղաք յանուն որդւոյ
Եմրանայ. յորմէ և կոչեցաւ ազգն
Պահլաւ։ Ուստի զօրացաւ մեծն
Արշակ, որ թագաւորեցոյց ՝ի վե-
րայ Հայոց զՎաղարշակ եղբայր իւր,
տալով նմա ՝ի ծովէն Պոնտոսի՝ մին-
չեւ ՝ի ծովն Կասբից. գաւազան մի
հատեալ յօրհնութեանդ աստանէն,
և արմատացեալ ՝ի հայկական տանս
Թորգոմայ. որ և բառնալ թագաւո-
ին տիեզերասասա ՝ի յազգէն Եմրա-
նայ ՝ի Սահրացւոյն ՝ի սասանա-
կանն Արտաշիր յԱրտաւանայ ա-
ռեալ։ Եւ նախանձախնդիր լինեալ
Խոսրովու որդւոյ Վաղարշու՝ որդ-
ւոյ Տիգրանայ՝ որդւոյ Արշակայ ար-

շակունեայ և 'ի Վաղարշակայ, զտան
ամ աւերէր զերկիրն Պարսից, փա-
խուցեալ զԱրտաշիր 'ի Հնդիկս. մին-
չեւ գայ Անակ կնաւ իւրով Ոգո-
հեաւ, և որդւովք իւրովՍուրենաւ.
և 'ի Ճանապարհին առ Հիրիմն Թա-
դէոսի ասէն անկիլ Գրիգորի : Եւ 'ի
ապանանել հօրն նորա զԽոսրով
նենգութեամբ, և վասն նորին իրաց
կորնչել ամենայն ընտանեաքն՝ եղեւ
ծնունդ Գրիգորի 'ի Հփոթմանն :
Որոյ մանկական լեալ Սոփի կե-
սարացի քոյրն Եւթաղեայ՝ կինն
Բուրդարայ, որ եկեալ զկնի Անա-
կայ, և գնացեալ մինչեւ ցԿեսա-
րիա, և 'ի սոյն ժամանակի գար-
ձեալ կնաւն այսրէն, զի 'ի Պարսս
երթիցէ յիւրականն գաւառ. որոյ
զհետ եկեալ Եւթաղեայ պատահէ
ամս 'ի Վաղարշապատ քաղաքի 'ի
ժամու ծննդեանն Գրիգորի. և
համոզեալ զփեսայն իւր Բուրդար
պարսիկ. և առեալ զմանուկն Գրի-
գոր՝ դառնան 'ի Կեսարիա. և Քրիս-
տոսի ընծայեն զնա աւազանաւն :

Եւ հասեալ 'ի չափ՝ վարժի յոյն

և սորի դպրութեամբ. և վերապա-
նայ 'ի Կեսարիա ումեմն հաւատա-
ցելոյ՝ 'ի գուսար նորա Մարիամ կո-
չեցեալ. յորմէ ստանայ երկու զա-
ւակս՝ զԱրիստակէս և զՎրթանէս ։
Եւ ապա Աստուծոյ ստուերալ զկեանս
իւրեանց՝ մեկնեցան 'ի միմեանց.
Մարիամ գնացեալ 'ի կանանց
վանս, և Գրիգոր տեղեկացեալ
վասն անձին՝ թէ ո՞վ և յորո՞ց, գնայ
առ Տրդատէս ։

Զի 'ի ջնջելն Արտաշրի զյիշա-
տակս Խոսրովու, Արտաւազդ ումն
Մանդակունի փախուցեալ էր առ
Յոյնս, և անուցանէր զնա առ Լշ-
խանի ումեմն Լիկիանէս կոչեցելոյ ։
Առ նա երթեալ Գրիգորիոս՝ ծա-
ռայէր նմա, թեթեւացուցանել
կամեցեալ զպարտան հայրենի ։
Մինչեւ էկն թագաւորն Գթաց
Հրաչէ անուն, որ էր քեռորդի
սրբոյն Յակոբայ Ս՞ծքնայ հայրա-
պետին. որ և նա որդի էր հօրա-
քեռ սրբոյն Գրիգորի Խոսրովու-
հեայ ։ Զայս Հրաչէ ըմբռնեալ
Տրդատայ՝ ածէ առ Դիոկղետիա-

նոս . և վասն այնր երախտեաց պատ-
կեալ 'ի նմանէ՝ գայ 'ի Հայս հան-
դերձ Գրիգորիւ , և տիրէ Հայրե-
նեաց իւրոց : Իսկ Սուրէն եղբայր
Գրիգորի 'ի խուճապէ տագնապի
հօրն Հարամահ սպանմանն անկանի
'ի Պարսս . և անտի առ փեսայն իւր
Թագաւորն Հեփթաղաց : Սնանի
անդ , և յաջողակ այր եղեալ և ա-
նուանի այնչափ , մինչեւ տանել
զնա և Թագաւորեցուցանել 'ի վե-
րայ Ճենայ և Դարպանայ , և ամե-
նայն կողմանցն այնոցիկ :

Իսկ Տրդատիոս յառաջին ամին
իւրոյ Թագաւորութեան՝ տեղեկա-
ցեալ վասն Գրիգորի . եթէ զան-
տեսան Աստուած փառաւորէ , սկսաւ
ջարջարել զնա : Եւս առաւել յոր-
ժամ իշխանն Օտա և Տաճատ ա-
ներ նորա առացին ալքայի , եթէ
որդի Անակայ է դա , որ խաւար
էած աշխարհիս Հայոց՝ սպանանե-
լով զհայրն քո Խոսրով : Զոր
լուեալ ալքային՝ եւ տանել զնա 'ի
քանտ վիրապին , յուսահատ եղեալ
'ի լսողութենէ նորա . յորմէ ա-

պրեալ 'ի տեսչութենէն Աստուծոյ. և 'ի հարուածել թագաւորին և արքունական զաւրացն ելեալ 'ի վերապէն՝ ապրեցուցանէր զպանողսն իւր փրկական աւետարանաւն, և բժշկական շնորհօքն Քրիստոսի։ Եւ ապա պերճ և պայծառ նախարարութիւն և արքունական կառոյց 'ի Կեսարիա երթեալ 'ի մայրաքաղաքն Կապադովկացւոց, և մայրն հիմնարկութեան հաւատոյ՝ 'ի հայաստանեայցս 'ի թագէէ առաքելոյ, ուր արար զառաջին ձեռնադրութիւն և զհիմնարկութիւն եկեղեցւոյ։ Երթեալ առնու զառաքելական պատիւն յառաքելական հօրէն Ղեւոնդեայ. զի ինչ իրքն կարգաւոր, և աստուածագործ հրաշ։ Քանզի որ առ շինմոքն նորա յղացաւ, և էառ զսկիզբն գոյութեանն,'ի նորին խնամոյ ածաւ 'ի տեղի առաջին շնորհաբաշխութեան նորա. և ընկալաւ 'ի 'ի նմանէ զսկիզբն գոյութեանն ըստ Աստուծոյ։ Յառաջին աթոռ նորա, ուր զսուրբն Թէոփիլոս Եպիսկոպոս ձեռնադրեաց սուրբն

Թադէոս. և 'ի նոյն աթոռոյ, ուր ընկալաւ զշնորհս աւազանին 'ի Կեսարիա, այժմ էաւ զամենակատար ծնունդն, և զբովանդակ զշնորհս առաքելութեան։ Որով պայծառացեալ գառնայ 'ի նորին առաքելական անդաստանն՝ ինքեան իսկ և նորայն վաստակօք հերկեալ, և արեամբ և արտասուաւք սերմանեալ, և քրտամբքք ոռոգեալ. վասն որոյ և արդէն իսկ ապիտակացեալ և 'ի հունձս հասեալ։ Զոր և տեսեալ բերկրալի սրտիւ զհաճոյական տեսիլն, և թեքեալ զմանկաղ բանին 'ի մուխս հոգւոյն՝ սկսաներ 'ի յոռ արտոյ ագարակին. և դնէր լնաբաւն խրձունս որայից և բարդից՝ արժանաւոր լայնանիստ կալոյն, և բազմատար շտեմարանի վերնոյն։ Զի հատարակ ցնծացեն սերմանողքն առաջին Բարդողոմէոս և Թադէոս, և վերջին հնձողքն և շտեմարանողքն՝ Գրիգորիոս և որդիքն իւր քաջագօտիք։

Եւ արդ ահա խորհուրդ երկուց գաւազանացն յայտնեցան, և առ-

մեզ արմատացան. որք 'ի քաղցրաբեր արմատոց, և 'ի դառնաբեր ոստոց էին։ Քանզի շառաւիղեալքն յԱբրահամու օտարացան, և օտար անուամբ կոչեցան՝ Սոդոմայ և Գոմորայ իշխանք և ժողովուրդք, տունկք և ուռք վիշաբերք և տատասկածնունդք։ Եւ այժմ դարձեալ վերնական գթութեամբ հաստատեցան 'ի բուն իւրեանց և 'ի սկիզբն արմատոյն յաբրահամեան հաւատն, որով ամենեքեան ապրեցաք։

Առցես, ասէ տէր ցԶաքարիա, երկուս գաւազանս, և զմին կոչեսցես վիճակս, և զմիւսն գեղեցիկ. և նոքօք դարձուսցես առ իս զիշխանս իմ։ Որ և ասա կատարեցաւ 'ի Տրդատէս. որ գեղեցկացաւն՝ ըզ Քրիստոս զգենլո

ցաւ գաւազան վիճակ Գրիգոր 'ի
Չարչարանս տուեալ. և ապա գե-
ղեցկացեալն Տրդատ 'ի նոյն ձեռաց
հզօրին Յիսուսի՝ հովուին քաջի. որ
'ի փախչէլն սրանան առաջի խնա-
մողացն. որպէս հովիւ զգաւազանն
ձգելով զկնի փախուցեալ ոչխարին՝
դարձուցանէ առ ընկերսն, զի մի՛
գայլոց և գազանաց լեցի։ Նոյնպէս
արասցէ, թէ բովանդակ հօտն 'ի
փարախէն և կամ 'ի խոտաւէտ տե-
ղեաց հեռանայցեն։ Դարձեալ ա-
սէր Ադոնայ տէր ցեզեկիէլ. Առ
երկուս գաւազանս, և միաւորեա
ընդ միմեանս, և եղիցի մի. և կալ
'ի ձեռին քում։ Որ նշանակէր ըղ-
միաւորիլ երկու իշխանութեան՝
թագաւորութեանն տանն Յուդայ
և Եփրեմի, և Զօրաբաբէլի թագա-
ւորի, և քահանայապետին Յե-
սուայ։ Որ և մերոյս առաւել խոր-
հրդածի՝ կարի հեռացելոցս 'ի մի-
մեանց. որ և միաւորեալ հաւատով
և կամաւք և իշխանութեամբ՝ եղեւ
'ի ձեռին Քրիստոսի, որում՝ նուի-
րեցանն։ Դարձեալ զգաւազանն

ընկուզի , զոր տեսանէր մանուկն
Երեմիա . որ և զմեր խրատս առա-
կաբանէր . զի հարկանէր հայր զորդի
գաւազանաւ խրատու , որոյ գառն
է արմատն , և քաղցր պտուղն . որ-
պէս ընկուզի , որոյ գառն է բոլոր
տունկն , այլ պտղաւորական է վան
պարարտութեան ընկուզին : Այլ և
օձացեալ գաւազանն , և հաստա-
տեալն յիւրում ընութեանն առ
Մովսիսիս՝ զթագաւորն մեր նշա-
նակէր՝ կերպափոխեալ 'ի փախչելի
տեսակ . և 'ի բուռն հարկանելն
զնմանէ մերոյն Մովսէսի՝ առնոյր
զբնիկն իւր , և կայր մնայր նեցուկ
հեզութեան 'ի ձեռին նորա : Իմաս-
տունն մեր և քաջ հովիւն Գրիգո-
րիոս , զոր խոստացաւ տէրն կան-
խագոյն 'ի ձեռն մարգարէին . Յա-
ղուցից ձեզ հովիւ իմաստուն , որ
երկուս ունիցի գաւազանս . զմին
բարակ որով զնաչինս արածէ , և
զմիւսն հաստագոյն՝ որով ընդ
գայլսն և ընդ գողսն կռուի : Որ և
ճշմարտապէս մեր կայ հանճարեղն
և իմաստուն հովիւն Գրիգորիոս՝

ունելով զերկոսեանն, գաւազան կակղագոյն և բարակ՝ զբանն հեզահամբոյր՝ գարձուցիչ և տաժիչ և ածօղ բանաւոր հօտի. իսկ գաւազան Թագաւորութեն հաստահարուստ, հակայազօր, անվանելի և քաջամարտիկն ունէր 'ի պատրաստի զՏրդատիոս, որով հարկանէր զդիմագարձան 'ի փորձութեանն իւրեանց. որպէս զԴեմետրեանսն և զԳիսանեանսն և զգողս և զգազանս օտարոտիս սատակէր. որպէս զանարի հակայն զԹագաւորն հիսիւսոյ ըզգեղեռեհոն. զոր ազօթիւք 'ի ձեռն նորա շեշտակի ձեղքեր ընդ մէջ երիվարաւն հանդերձ մինչեւ ցգեաթին յեռուաբար, մերոյ Մովսիսի տարածեալ զբազուկն ընդդէմ Ամաղեկայ։ Եւ ոչ միայն այս, այլ և զշնորհս լերին Սինայ և Քորեբայ՝ 'ի լերինս և 'ի դաշտս Այրարատու ածեալ փառաղարդէր։ Սիւն ամպեղէն և հրեղէն 'ի վայր իջեալ արկանէր խորան լուսեղէն՝ ծիրանափառ կազմեալ նշանակօք, կամարաձարդ պսակեալ հրաշիւք՝ երկնա-

կառոյց շաւղով 'ի ձեւ սանդը-
ղոց երեւեալ՝ որք ինչեալ բազմու-
թիւնք հրաբուն զօրացն՝ ընուին
զատորին աշխարհս, նոր երկին զսա
հրաշագործեալ։ Նախնին մեր և հո-
վիւն Գրիգորիոս՝ նորն Յակոբ, որ
սեալեամբ ինչեալ միածնին 'ի բար-
ձանց՝ յարափոխեալ կոչեցաւ Ի-
սրայէլ, յոր և 'ի մէջս և 'ի գլուխս
երկուց գեղոց Տիգրիս և Եւփրա-
տէս եկեալ խօսէր հարսն ոչ ին-
քեան, այլ սերոբէիցն արքայի։ Եւ
երիս գաւազանաք ընկուզի և սօսի
և շշի անուամբ Հօր և Որդւոյ
և Հոգւոյն սրբոյ՝ երից անձանց և
միոյ իշխանութեանն՝ ծնանէր 'ի
ջուրս աւազանին նկարէնս և խայ-
տախարսի գառինս և գոշասպիտակ
մաքիս։ Եւ 'ի սեւադէմ և 'ի գայ-
լակերպ գազանաձեւ ազգաց, որք
անցեալ ընդ գետս կենդանիս,
սպիտակափայլ, ոսկեակիզն, նշու-
լազարդ, գեղապաճոյճս փայլէին.
որ 'ի միում աւուր հնգետասան
բիւրս յարքունական զօրացն քրիս-
տոսազգեստէր՝ նորն մեր Յեսու

Յովսեդեկեան՝ քահանայն մեծ Գրի-
գորիոս. որ զգեցաւ զպատմուճան
պճնաւոր 'ի փառս և 'ի պատիւ
պսակեալ 'ի Թերթն ոսկի և 'ի խոյրն
սուրբ՝ առաջնորդէր Զօրաբաբե-
լի նորոյ բարեփառն Տրդատայ, և
գերեդարձ ժողովրդեանն, որով ա-
ւերէր Բաբելոն՝ խառնակութեան
վարք, կործանէր Բէլ, խորտակէր
Դագոն, մեռանէր Զեւս 'ի կղզիս
արգելեալ. շանթակէզ լինէր Ա-
կղեպիադէս. Արամազդ և Արէս ա-
ռեալ զփառս իւրեանց՝ գիմէին յան-
դունդս. Աստղիկ զբոզութեան առեալ՝
փախչէր առ հոմանիսն իւր: Տունն
Թորգոմայ Թարգմանիչ մեծի խոր-
հրդոյն լինէր. տունն Հայկայ տուն
Աստուծոյ բարձրանայր. գեղեցկա-
նայր ազգն Գեղամայ. կողմն Սիսա-
կայ սիրելի Քրիստոսի լինէր. ազն
Արամայ զարմանալի փառաց հասա-
նէր, ազգն ազքանազեան և այրա-
րատեան Թագաւորութիւն բարձ-
րացեալ քան զազգս բազումս՝ զեր-
կինս և զարքայութիւն երկնից ժա-
ռանգէր: Վաշ բազկին բարձրելոյ,

փառք ձեւին կարկառելոյ. գո-
վութիւն տուողին արժանացելոյ.
գոհութիւն միջնորդին պատրաս-
տելոյ. օրհնութիւն սեղանոյն սրբե-
ցելոյ. շնորհք պարգեւողին մեծա-
ցելոյ. բարեբանութիւն կամացն
քաղցրացելոյ. երկրպագութիւն
երկրամերձ գիմաք անյիշաչար ողոր-
մութեանն հաշտեցելոյ, և անմո-
ռաց պահողին զյիշատակս իւրոյ
վաստակաւորին։ Քանզի որպէս ա-
ռաւել վաստակեցաւ հայրն մեր և
աստուածանման ծնողն Գրիգորիոս
քան զամենայն մեզի՝ տարեալ
լրջմտութիւն զսոսկալի և զքստմնե-
լի կիրս չարչարանաց, նոյնքանեաց
փառաց և շնորհաց եղեւ արժանա-
ւոր, և երկնեաց հոգեպէս և մար-
մնաչարչար զամս բազումս. և ապա
'ի վայրկենի միում ծնաւ ազգ մի
ողջոյն միանգամայն՝ զբիւրաւոր
բանակս հայկազնեայ զարմից, պը-
տուղս հիահրաշս իւրոցն տաժա-
նաշատ կրիցն անհանդուրժակա-
նացն։ Որ յայնժամ հիացոյց զտե-
սողսն, ոչ միայն զերկրաւորս՝ այլ և

զերկնայինն և զերկնաւորն ամենայն. և այժմ՝ քառմնեցուցեալ դողացուցանէ լուրն զխորհուրդս և զմարմին լսողաց. զի տեսիլ եղեւ աշխարհի և հրեշտակաց՝ արժանաւոր զարմացման բոլոր սեռից և տեսակաց. զի հանդէս մեծ գործեաց բանսարկուն հանդերձ ամենայն դիւաք իւրովք, և թափեաց 'ի նա զամենայն հնարս իւր. և սպառեաց 'ի մի յանձն յայն ստուածամուխ զամենայն նեռս իւր, և ջարդեաց 'ի վերայ նորա զամենայն հնարից իւրոց մեքենայս 'ի ձեռն տիեզերասատ և բուռն թագաւորութեանն Արշակունեաց։ Քանի՞ տեսակս բազմակուռ չարչարանաց ելեալ, զոր ոչ կրեաց յինքեան։ Առաջին, բեւեռս զոր թափանցանցս ընկալաւ երկնագնաց թաթք ոտից նորա. երկրորդ 'ի կոճեղս և յոլորանս եդեալ քամեցաւ յարենէ՝ երկիւղիւ տեառն մաշեալ արունք ոլոքաց նորա. երրորդ կապիճս երկաթիս և դառնակսկիծս ընկալաւ՝ կախաղանաք կարկամեալ, և գեռնա-

մածեալ՝ի ծնրադրութենէ ծունկք
նորա երիս աւուրս. չորրորդ բրա-
ծեծ եղեալ աստուածակիր բարձք
անդամոց նորա. հինգերորդ՝ ջրա-
ջարջար պարպամամբ և ուռուց-
մամբ ստորագլուխ անարգանօք
վտանգեցաւ ողջախոհ, պարկեշտ և
սուրբ որովայն նորա. վեցերորդ
շառաչիւղս աղի վերամբարձ յորմն
վարսեալ ընկալաւ զեւթն օր՝ Աս-
տուծոյ աւրինացն բեռնաբարձ ոգն
նորա, հանդերձ գեղարանօք ճար-
ճատանց կրծից նորա, առասանօք
չարահնար սնդեալ անրօք և խեղ-
դանօք՝ կեղեքեցաւ լծաբարձ օրի-
նացն Քրիստոսի պարանոց նորա.
գայլս ձգիչս և պատառիչս ընկա-
լաւ աստուածաբան բերան նորա և
դանդանաւանդս քրիստոսակիր կը-
զակ նորա. եօթնեերորդ՝ զեւթն
օր գլխիվայր կախեալ՝ի միոյ ոտա-
նէն, և հոտս աղբոյ ընկալաւ ա-
նուշաբուրիչ հոգւոյն արժանաւոր
ընդունչք նորա. ութերորդ ըզ-
վեցօր մոխրաշունչ եղեւ անխառն
օդոյ, զոր պարկն արգելոյր՝ի

փողան կապեալ. ինեերորդ բորակ և
բարկ քացախ ընկալաւ նոյն հոգե-
շունչ քիթ նորա. տասներորդ՝ կը-
ռուփն զոր կռփահարեցաւ չարչա-
րակիր անձն նորա. մեռասաներորդ՝
մամուլս էառ աստուածապատակ
գլուխ նորա։ Եւ այսոքիկ նկարա-
գրուեցին անդամոցն զուտ և զուար-
թուն պատկերին Քրիստոսի, յո-
ից սկսեալ և 'ի գլուխն աւար-
տեալ, որպէս ասեն առնել զքաջ
պատկերագործն Դեդեղայ՝ յոտից
ձեռնարկեալ, յորում շարժիլ թը-
ւէր անշունչ տեսողաց։ Ի վերայ
այսր ամենայնի որպէս զոսկեձա-
մուկ ծիրանի երեքլարեան մարգար-
տով հիւսեալ՝ արկցուք զբովանդակ
արքունական պատկերաւն, մանա-
ւանդ թէ ինքն արկաւ զնուրեաւ ոս-
տայնանկն աստուածիմաստ. երկո-
տասաներորդ զտատասկն, որով
ամենայն մարմինն ծակոտեալ, և խը-
ծուծ լնեալ՝ արիւնաքամ եղեալ.
երեքտասաներորդ զքերանս յո-
ից մինչեւ ցգլուխս, որովք մերկա-
ցան նշխարք սուրբ ոսկերաց նորա.

չորեքտասանեւրորդ՝ զկապարն հա-
լեալ և քաջեռաց, որով խորովե-
ցան խզեցան ջիլքն, և խանձողեցան
ոսկերք նորա։

Եւ արդ միթէ փոքր էր նահա-
տակին հանդէս. ուր արարիչն ե-
կեալ հրեղինաց դասուք՝ տեսանէր
զարժանաւորն տեսիլ նոր և ան-
ծանօթ դարուց և ժամանակաց,
յորմէ հետէ եղեւ մարդ 'ի վերայ
երկրի։ Միթէ փոքր էր պատա-
րագն, յորոյ հոտոյ լցան երկինք և
երկիր, և կենդանեացն զարմք և
զաւակք տանս հայկազեանց՝ ար-
շակունեաց և պալհաւկաց։ Միթէ
փոքր էր պարծանք որդւոց առ այն-
պիսի հայր, եթէ զշաւիղս նորա
գնայցեն. միթէ թոյլ ետ այլուսմ
հօր վերհագոյն գտանել քան զինքն.
միթէ սակաւ և գուշնաքեայ չար-
չարանօքն եղեւ հայր, և բազմու-
թիւն որդւոց էած 'ի փառս. մի-
թէ վայրապարն զարհուրեալ գո-
ղային երիկամունք թշնամեացն, և
լուծանէին ջիլք բազկաց նոցա, և
ընկեցեալ լինէին զաղեղունս, գը-

նային բացէ 'ի բաց փախստա-
կանք ։

Որոց հրաշից նման էին և վերա-
պին աքանչելիք , բայց եթէ իջանե-
լոյ որդւոյն Աստուծոյ 'ի ստորին
վայրս մահու և 'ի դժոխս նեղքինս ,
ուր յաղթահարեալ կործանեցաւ
մահ և ապականութիւն ։ Որպէս և փո-
խանին Յիսուսի իջանելոյնն 'ի դա-
րանս զգալի և իմանալի վիշապաց՝
շինջանէին խայթոցք մահաբերին ,
ջախջախեալ լինէր գլուխ ապըս-
տամբ վիշապին , աւերէր տուն բնա-
կութեան խաւարասէր իշխանին ,
ածեալ լինէր կիսոան կարթիւ և
շրուշակաւ խաչին նշանի . սան-
ձէր նովիմբ ահաւոր կնքոյն և զբե-
րան երեւելի օձիցն , որպէս Դա-
նիէլ զցուցակ առիւծուցն , և կայր
ճնայր 'ի մէջ նոցա , ոչ զերիս ա-
ւուրս միայն՝ որպէս Յոնան 'ի փոր
ձկանն , այլ զամս հնգետասան՝ պա-
հելով զնա վերին խնամոցն իբրեւ
զփեսայ յառագաստի , և որպէս
քահանայ 'ի խորանի սարկաւա-
գեալ 'ի խարամանեաց օձիցն , այլ

արժանապէս սպասաւորեալ 'ի հը-
րեշտակաց սրբոց , որպէս և ինքն
պատմէ :

Քանզի և երկինք լինէր խորու-
թիւն խորհրդոցն , բնակութիւն
զուարթնոց՝ որոյ դիւաց , կենաց
գործարան՝ տեղին մահապարտաց :
Քանզի հովանի լինէր հօրն մերում
աջն հայրենի , բառնայր զնա բար-
ձրեալ բազուկն Յիսուսի , ողջա-
գուրէր զնա մխիթարիչն Հոգի : Զի
թէ ոչ լինէր այս , զիաւրդ մնայր
կենդանի յայնպիսի տեղւոջ . որ 'ի
բարձրութենէ անկումն 'ի խոնարհ ,
և հոսան մահաբեր , և կամ ահագին
տեսիլն վիշապաց՝ բաւական էր վաղ
վաղակի քաղել զշունչ նորա : Այլ
այն՝ որ ասէր ցնահապետն Յակոբ ,
Մի երկնչիր ելանել յԵգիպտոս ,
զի ես ելից ընդ քեզ , և ես դանից
զքեզ անտի , զնոյն բարբառ աւե-
տեաց կրկնէր մերում նախահօրն
Դրիգորի . և առեալ զձեռանէ նո-
րա՝ ելանէր ընդ նմա , և ասէր . Ես
եմ տէր Աստուած քո՝ բաւա-
կանն . և դարմանէր զնա՝ շտեմարա-

նեալ զգանձն կենաց, և զբազմա-
լոյս արեգակն մեր՝ զայնքան ժամա-
նակս 'ի խորս անդնդոց. և յիւրում
ժամանակի վերաբերեալ՝ քաղց-
րագոյն արեւով և պայծառ լու-
սով ցուցանէր աշխարհի, որոց 'ի
խաւարի և 'ի սառուերս մահու նըս-
տեալ ննջէին։ Յորմէ լուսոյ զար-
հուրեալ գողք և աւազակք, շնա-
ցողք և սպանողք, որք ջրջէին և
գործէին խոր գիշերոյ, չքոտեալ
ջնջէին 'ի միջոյ. գազանք վայրե-
նիք յորջս իւրեանց մտանէին. ե-
լանէր մարդ և որդի մարդոյ 'ի
գործս իւր և 'ի վաստակս ձեռաց։
Վարէին արտս, տնկէին այգիս, և
առնէին պտուղս արմտեաց՝ յան-
դաստանան սրբեալ և պարարտա-
ցեալ. Եւ նոյն քրտամբք և արեամբ
սրբոց Հռիփսիմեանց ոռոգեալ՝
կուսիցն Լմատանոց օրիորդացն սըր-
բոց. որք իբրեւ զասաեղակուռ քա-
նակս արփիսխատեղաց Ճառագայ-
թիւք յարեւմտից յարեւելս գի-
մեալք, զի ծագեսցին մեզ ընդ մե-
ծոյն արեգական, և զարդարեսցեն

նոր սատեղքն զնոր երկինքն որ ե-
ղեւ հայաստան աշխարհիս . այս-
ինքն է զբարձրութիւն պարծանաց
հաւատոյս , և զխորհուրդ հարսա-
նեաց եկեղեցւոյ սրբոյ . հարսունքն
Քրիստոսի պճնագեղեալք 'ի հան-
գերձս ոսկեհուռս՝ վերջաւորս և
քղանցաւորս կազմեալք , և թագ 'ի
գլուխս պսակեալք , յօդնականու-
թիւն ածեալք 'ի տեառնէ փեսա-
երին մերոյ , զի խօսեցին զբարե-
տոհմիկ ծնողն Թորգոմայ եր-
կնաւոր փեսային . և լինիցին կու-
սութեամբ մայր ազգաց և ազանց
նորածնաց . և կուսական կաթամբ
անուցեալ՝ հատուցեն յայր կատա-
րեալ 'ի չափ հասակի կատարմանն
Քրիստոսի :

Ոլք և զայս արարեալ , և 'ի
գլուխս տարեալ , առաքեն աղօթիւք
և ազդմամբ վերին շնորհացն զա-
րեւելեան արեգակն 'ի մուտս ա-
րեւու , ուստի էին ինքեանք .
զի անդրէն տարեալ զփոխարէնն
ձեռնտուութիւն՝ հատուցէ քա-
զաքի նոցա Հռոմայ , և աշխարհին

խաղաղութեան , և ամենայն Եւրոպիայ , ծագելով նոցա լոյս . և ջերմն Ճառագայթիւք արասցէ նոցա գարուն հոգեւոր և պտղածին . և ցուցցէ միմեանց զնորոգեալ նորընծայ քրիստոսապսակ Թագաւորան՝ այն ինչ արմատ արձակեալ 'ի խոնարհ , և նորաբողբոջ բուսով և ծաղկօք 'ի վեր փթթեալ , ոստս և շառաւեղս արձակեալ ընդ լայնութիւն և ընդ երկայնութիւն աշխարհի , ածելով 'ի հաւատս զամենայն հնազանդեալս իւրեանց . Տրդատ և Կոստանդիանոս , Սեղբեստրոս և Գրիգորիոս , ցանկալի և արժանատենչ տեսութեանն Աստուծոյ և սատուածասիրաց : Եւ ո՛չ երկինք իւրով վայելչական զարդուքն այնպէս գեղեցիկ է , որպէս յայնժամ էկեղեցի այնպիսի հայրապետօք և Թագաւորօք շքեղացեալ վայելչանայր :

Ո՜ բարերար և ամենաբախտ ժամանակին , և պսակեալ տարւոյն , և ամսոյն 'ի տարւոջն , և շաբաթուն յամին , և շնորհաւոր և օրհնեալ

աւուրն, յորժամ տեսին նոքա ըզ-
միմեանս, և փարէին զկրեր՝ չորք
սիւնքն չորեքանկիւն տիեզերաց,
դրախտաբուղխ գետքն, և աւետա-
բանչացն պատկերքն։ Ո՞տայր մեզ
զսքանչելութիւնն զայն ցանկալի, և
զերծ յայժմու թշուառութենէս և
'ի վատաբախտութեանցս։

Ցնծացաւ երկիր, զուարճացաւ
ծով լրիւ իւրով, տիեզերք և ամե-
նայն բնակիչք։ Ուրախութիւն ե-
զեւ և յերկինս առաջի հրեշտակաց
Աստուծոյ. որպէս ասաց մեծն
Կոստանդիանոս ընդ մեծափառն
Գրիգորիոս. Հայր սուրբ, ոչքան
ուրախութիւն է յերկինս վասն այս-
քանեաց ազգաց փրկութեան, և
ընդ գալուստ ձեր խոնարհութեամբ
առ մեզ։ Եւ նա ասէ. Անպատմելի
և անճառելի ցնծութիւն։ Եւ թա-
գաւորին պատասխանի տուեալ՝ ա-
սաց, թէ 'Նոքա յերկինս ուրախ են
ընդ մեր փրկութիւնս, ապա մեք
փրկեալքս մի՛ վերջասցուք 'ի խըն-
դութենէ։ Եւ հրաման հանեալ
ընդ ամենայն Իտալիա՝ առնել տօն

ցնծութեան և ուրախութեան մեծ, զենլեօք անբան կենդանեաց, և բանական պատարագօք, սաղմոսիւք և օրհնութեամբք և երգովք հոգեւորօք, զոր ոչ ոք կարէ իմանալ կամ պատմել։ Ամսօրեայ մի ժամանակ գրգէին գգուէին զմիմեանս, զարմանային ընդ անտեսութիւնն Աստուծոյ, զոր ինչ արար նոցա։

Ուսանէր ապա մեծն Կոստանդիանոս ոճով զհաւատս և զխոստովանութիւն ուղղափառ 'ի հօրէն մերմէ մեծաւ երկիւղիւ և պատկառանօք, որպէս 'ի նոյն ինքն 'ի Հոգւոյն սրբոյ։ Պատարագէին, ուխտս կատարէին, հաղորդէին 'ի միմեանց, դաշինս դնէին, կտակս գրէին, երդմունս անլուծանելի երդնուին՝ 'ի վերայ միմեանց 'ի կեալ և 'ի մեռանել՝ ազգէ յազգ մինչեւ յաւիտեան։ Եւ այսպէս սիրական պարգեւօք, և առաքելական նշխարօք սուրբ ոսկերաց դառնային գային մերքն յաշխարհ՝ լի հոգեւոր բերկրանօք, և առողջութեամբ մարմնոյ, և պէսպէս հրաշագործու-

թեամբ 'ի ծովու և 'ի ցամաքի՝ 'ի փառս և 'ի գովեստ մեծի և երկնաւոր զօրութեանցն։

Եւ յիւրականն հասեալ վիճակ, սկիզբն առնէր սովորական վարդապետութեն՝ 'ի Սատաղացւոց քաղաքէն մինչեւ յաշխարհն Խաղտեաց, և ցԿղարջա և ցՄասքութս, և մինչեւ 'ի գլուխն Աղանաց, և ցսահմանս Կասբից, և ցՓայտակարան քաղաք Հայոց. և յԱդամացւոց* քաղաքէն մինչեւ ցՄբին առ Նշիբական աշխարհաւն, և 'ի Կորդուաց մինչեւ ցամուր աշխարհն Մաբրաց, և առ տամբն Մաքրատաց աշխարհին, և առ Արպատականաւ. և առաւել ևս քան զայս ընդոյր աւետարանաւն Քրիստոսի ծայրէ 'ի ծայր զամենայնն առ հասարակ. զոր դնեաց չարչարանօք, առողջացուցեալ զնոսին ատուածաբան լեզուաւն՝ բարիոքապէս զարդարէր։ Քանզի ոչ եթէ առանց մեծի

* ՅԱգաթանգեղ. յԱդամայ... 'Նորշէրական։

խորհրդոյ էին իրք վշտակիր նեղու-
թեանց նորա , այլ զոր ինչ կրեաց
հայրն մեր պարծանաց , ազգմամբք
և արդեամբք ընկալաք մեք 'ի պար-
գեւացն Աստուծոյ : Բեռն աղին՝
զոր եբարձ թիկունք նորա համբե-
րօղ , եբարձ 'ի թիկանց մերոց զբե-
ռինս մեղաց , և համեմեաց զանհա-
մուութիւնս մեր աղիւն ճշմարտու-
թեան . գլուխ 'ի վայր կախիլն նո-
րա ուղղեաց զգնացս մեր 'ի բար-
ձունս . ջուրն լուաց զաղտ հնու-
թեան մերոյ . մոխիրն եբեր մեզ
օծումն ուրախութեան . քացախն
եբարձ զկիրս մերոյ տկարութեան .
տատասկն զփուշ մերոյ խղճմտա-
նացն . քերանքն զմարմինն ապակա-
նագործ . կապարն զծանրութիւն
պարտեացն . գանգանաւանդն զա-
նանական հնազանդութիւնն . թիւ-
չորեքտասան չարչարանացն էխից
զաղբերս ախտիցն , որ յայնմ՝ հա-
սակի սկսանին . և արարին զկեանս
մեր ամենաճառագայթ՝ որպէս լու-
սին զչորեքտասան գիշերն իւր : Վի-
րապին իրք զվիրաւորեալքս և զհո-

սեալքս յերկնից 'ի խորս անդնդոց՝ 'ի վերս ածեալ զմեզ 'ի յերկինս եհան. որպէս տէրն զՀոգիսն 'ի դժոխոց։ Թիւքն հնգետասան օրհնեաց զարձակումն և զսկիզբն ծընընդեանն մերոյ, զի անտի սկսանիմք։ Եւ զի երեք հինգ՝ է հնգետասան, զզգայուն թիս մեր անխեթկելի և առանց թուոնից թշնամւոյն պարսպեաց։ Բազմաբան վարդապետութեամբն ծնաւ ազգս բազումս աւազանաւն դրոշմեալ. մինչ զի եւթն աւուրս մկրտէր իւրովք ձեռօքն չորեքհարիւր բիւր անձինս։ Եպիսկոպոսս կացուցանէր իւրով լուսաբաշխս աջոմն չորեք հարիւր ոգիս, և քահանայս և սարկաւագունս և դպիրս, որոց ոչ գոյ թիւ։ Վանորայս շինէր, անապատս բնակեցուցանէր, աղքատանոցս և հիւրանոցս պատրաստէր, ըստ աշխարհաց, գաւառաց, գիւղից և ագարակաց։ Եկեղեցիս հաստատէր ապարանօք պիտոյից՝ չորս հոլս եկեղեցւոյ ագարակին, և եօթն մեծացն գիւղից և աւանից։ Դպրոցս յորի-

նէր, մանկունս հաւաքէր, վարդա-
պետս՝ յոյն և ասորի գրոյ և լեզուի
գիտակս կացուցանէր, ուռճիկս կար-
գէր յարքունուստ։ Զուարճացոյց
զԹագաւորն քրիստոսասէր յայտո-
սիկ. քանզի խայտայր, զուարճա-
նայր, ցնծայր առաջի զարդու եկե-
ղեցւոյ, որպէս Դաւիթ արքայ ա-
ռաջի տապանակին Աստուծոյ։

Յետ այսորիկ առանձնանայր, 'ի
լռութեան կայր թաքստեամբ յա-
նապատս և 'ի զերծ տեղիս. զի յա-
մենայն աշխիճանս աստուածային
շնորհացն փառաւորեսցի։ Առաջին՝
որդեգրութեանն շնորհն արժանի
եղեւ աւազանաւն. երկրորդ՝ էառ
զպսակն մարտիրոսաց. երրորդ՝ եւ 'ի
գահ քահանայութեան. չորրորդ՝
'ի քահանայապետութեան աթոռ
նստաւ. հինգերորդ՝ Ի հաս մար-
գարէական պատուոյ. վեցերորդ՝
բարձրացաւ յառաքելական պատիւ.
եօթներորդ՝ վերացաւ ոսկեսպատ
թեւօք, և յառանձնական վարս յոր-
դորեալ յԱնտոնէ և 'ի Կրոնիդեայ,
զի այնպէս կացցէ, և անդիտելի

բնաւից վախճանեցի մովսիսաբար. զի մի պաշտեսցեն զոսկերս նորա դեռահասատ նորածնունդ որդիք նորա հայաստանեայք։ Զոր և ա-ռարն իսկ. և բնակեցաւ 'ի լեառն Սեպուհ, որ և այժմ կոչի սուրբ Գրիգորի։ Ուստի և ասեն կամեցաւ գնալ 'ի վերայ ծնկաց յԵրուսաղէմ. զի անդ կատարեսցի։ Եւ այնպէս ելեալ 'ի լեառնէն, և անցեալ ընդ ձորակ մի, առաքէ տէրն նորա Քրիստոս երկու սերովբէս ընդ ա-ռաջ նորա, ասել ցնա, եթէ Պատ-կառեմ ես 'ի քո անտանելի ճգնու-թենէդ, և կաց 'ի վերայ ոտից քոց, և էլ 'ի լեառնդ ուստի ելերդ, և անդ վախճանեսցիս. և ոչ ոք գի-տասցէ զմահ քո առժամայն. և ոչ առնուն զքեզ 'ի պաշտօն՝ բարուք խրատեալ 'ի քէն ժողովուրդն քո։ Զոր և արարն իսկ. և 'ի տեղւոջն խաչս կանգնեաց, և Սերովբէս ա-նուանեաց. և այժմ գեղակ է տե-ղին, ուր խաչքն կան հրաշագործք, և անուն գեղջն կոչի Սերովբէք մին-չեւ ցայսօր. ստուգապէս գիտակ

էն այամ՝ աւանդութեանս՝ որ ասա-
ցաւս ։

Եվ ապա լեառնն իմանալի՝ի լեառն
զգալի՝ ըստ հրամանին տեառն՝ իւ-
րով՝ պատգամաւոր սերովբէիւքն .
և անդ իմաստասիրէր՝ որպէս Եղիա
՝ի Կարմեղոս . և կայր խաչեալ անդ
զցայգ և զցերեկ ։ Իսկ յորժամ
լցաւ՝ի նա ամենայն խորհուրդք , և
ամենայն տուրք բարիք և պարգեւք
կատարեալք՝ ի վերուստ՝ ի նա ի-
ջեալ , և եհաս ժամանակ ելից նո-
րա՝ ի խաչաչարչար և՝ ի բազմա-
տանջ մարմնոյն , և երթեալ առ
տէրն իւր յանասելի փառան՝ զոր
ամբարեալ էր , ՝ի ընուլ թագս երե-
սուն ամաց քահանայապետութեանն
նորա , զբարուք պատերազմն պա-
տերազմեալ , զհաւատն պահեալ ,
զընթացսն կատարեալ , և յանթա-
ռամ պսակն հասեալ ։

Հանէր ապա հրամանն տեառն
զնա՝ի կատար լերինն Սեպուհ , և
ցուցանէր նմա զերկիրն աւետեաց
զվերինն Երուսաղէմ , զանդրան-
կացն եկեղեցի , զոր սպասէին նմա .

զոր օրինակ մեծն Մովսէս զՊաղեստին տեսանէր 'ի Նաբաւ լեառնէ, և վախճանէր. այսպէս մերն Մովսէս յետ վերնային փառաց տեսլեանն՝ տեսանէր և զսահմանս վիճակին իւրոյ, զորս խաչակնքեալ օրհնէր, և յանձն առնէր Աստուծոյ հայրենի աղօթիւք, և յորդառատ արտասուօք: Եւ ապա աւանդէր 'ի ձեռս Աստուծոյ զանարատ հոգին՝ միայն ընդ միոյն Աստուծոյ գոլով. և նշխարօք մարմնոյն կարօտ և ծարաւի թողեալ զբիւրաւոր բանակս ուստերաց և դստերաց իւրոց, և խանդակաթ և կաթոգին զմանկունս առագաստի, և զտղայս հոգեւոր երկանց իւրոց. ոչք ոչ լուան զյետին խօսս իւրատու նորա 'ի մխիթարութիւն ինքեանց, և ոչ զարդարեցին զդի նորա, և ոչ լացին զնա աւուրս երեսուն, որպէս տուն Իսրայելի զՄովսէս և զԱհարոն: Այլ փոխանակ նոցա սիւն հրեղէն, և բանակք հրեշտակաց շուրջ զաստուածընկալ մարմնով նորա. և անպատմելի ուրախութիւն 'ի մէջ

դասուց երկնաւորացն շուրջ զմա-
քուր և զքրիստոսագեղ հոգւովնո-
ւրա : Իսկ զհովանաւորեալ երկնաւոր
փառաւք զմարմին հովուին մեր զքա-
ջն՝ հովուաց բարեբախտաց գտեալ
թաղեցին անգիտաբար , տեսեալ
զնա , զի կայր կանգուն՝ յեցեալ 'ի
գաւազանն , տարածեալ ձեռաւք .
սակայն խմացան 'ի փառաց լուսոյն ,
թէ մեծ ծառայ Աստուծոյ է : Զոր
եդիտ ապա Ճգնաւորն սուրբ Գառ-
նիկ , և տարաւ 'ի Թորդան : Եւ ան-
տի տարաւ Զենոն կայսր 'ի Կոս-
տանդինուպօլիս : Եւ յետոյ բերաւ
շնորհաւքն Քրիստոսի 'ի Հայս 'ի
ձեռն Գրիգորի պատրիկի . որոյ կէսն
եդաւ 'ի Նեղքոյ ջրից սեանցն սուրբ
Գրիգորի առաքելոյն . և այլն յե-
կեղեցիս և 'ի բազում տեղիս գան-
ձեցաւ : Եւ աջն լուսընկալ և շնոր-
հաբաշխ հանգերձ այլ նշխարաւք , և
նորին պատարագամատոյց սեղա-
նոնքն , և գաւազանն կայ յանթոռ
սրբութեան իւրոյ յաստուածա-
հաստատն դղեակ Հռոմկլայն կո-
չեցեալ :

Ծնանի զաւակս, և աղբերացու-
ցանէ զշնորհս հոգւոյն ընդ ամենայն
Հայաստանեայս։ Քանզի սիւն
հրեղէն խարսխաւոր՝ թակազաղ ու-
նելով ահաւոր՝ որ էր իբրեւ զլեառն
մի, լուսեղէն խաչիւն թագազար-
դեալ, զոր մեկնեաց հրեշտակն 'ի
տեսլեանն, եթէ պատիւ քահա-
նայութեան է այս, որ յոյժ բարձր
և ահաւոր է խորհրդով, այն՝ ոչ էր-
բէք է մեկնեալ 'ի բարձր և յոյժ-
կառոյց աթոռոյ նորա։ Եւ վասն
այնորիկ հաստատեալ կայր անշար-
ժելի խարիսխն ոսկեաձոյլ. յաղագս
որոյ անդ է Գրիգոր 'ի յաթոռ իւ-
րականն փառօք, և տարածեալ է
անուն նր ը ամ տիեզերս տերու-
թեան Այ. քանզի յամենայն եր-
կիր էլ բարբառ նորա, և մինչեւ
'ի տիեզերս հասին խօսք նորա, և
նշխարք սուրբ ոսկերաց նորա. և
լամամբ շնորհի իւրոյ տարածեալ է
Գրիգորիոս ընդ ամենայն իւրաշէն
եկեղեցիս. և գրգի գգուանօք ա-
նուն նորա 'ի շրթունս ուղղափառ
զաւակաց իւրոց և այլոց ազգաց,

լուսաւորիչ Հայոց կոչեցեալ Գրիգորիոս :

Գրիգորիոս լուսաւորիչ Հայոց. վասն զի այլոյ ուրուք ազգի առաջնորդի ոչ կայ անունն լուսաւորչի. թէպէտ էին ամենեքեան լուսընկալք և լուսաւորք ազգացն, զորս հանին 'ի խաւարէ կռապաշտութենէ. այլ զի մերն Լուսաւորիչ՝ պարզաբան, յստակախօս, օգտեցուցիչ էր, և մեկնող ճշմարտին և երկնաւոր խորհրդոյն, և լոյս ծագէր 'ի բանից նորա և տայր շնորհս լսողացն, Լուսաւորիչ կոչեցաւ. ոչ՝ սրբաբանն և պայծառախօսն Յովհան՝ Ոսկիբերան ասացաւ : Ասեն դարձեալ, թէ երկու ինքնակալքն Կոստանդիանոս և Տրդատէս, և պապքն * երկոքին Գրիգորիոս և Սեղբեստրոս էին 'ի Հռոմայ յԵրուսաղէմ. և վիճակաւ բաժանեցին զտնօրինական տեղիսն. և Հայոց անկաւ անարքն և Գողգոթայն, և սուրբ Կարապետն, և սուրբ Յակոբն : Եւ սուրբն Գրիգոր կան-

* Իմա որպէս նախահալոք երկոցունց ազգացն, և մի ըստ այլ համեմատութեան :

թեղ կախեաց 'ի անարան. և խընդրեաց զինչու�լուսոյն յԱստուծոյ 'ի նշան յարութեան իւրոյ ամի ամի 'ի փառս անուան իւրոյ, և 'ի յիշատակ շնորհաց հօրն մերոյ արքոյ, և յաղագս այնորիկ կոչեցաւ Լուսաւորիչ։

Եթէ և մեք քան զազգս բազումս խաւարատանջ, մառախղամած, յուսակորոյսք, և 'ի ձեռն նորա լուսաւոր վարդապետութեանն՝ քան զյոլովս մեծագոյն շնորհի արժանացաք՝ իմաստութեամբ և ուղղափառ հաւատով, աննենգ, անբիծ և անարատ խոստովանութեամբ. զի Ուր առաւել եղեն մեղքն, առաւել եւս յաւելան շնորհքն. յաղագս որոյ մեք լուսաւորեալք, և նա միշտ լուսաւորիչ՝ անուանեցաք և անուանիմք։ Յայտնապէս որպէս արեգակն 'ի մէջ երկնից՝ լոյսն անշնջանելի հանապազ վառեալ 'ի նշխարս ոսկերաց իւրոց, և կայ միշտ յաթոռ փառաց իւրոց. ուստի բաշխի և բաժանի յաճախաբար պարգեւք 'ի յուղղադաւան ժողովուրդս, և 'ի վիճակն սահմանաց իւրոց էացեալ և արմատացեալ մինչեւ յաւիտեան։

Գրիգորիոս արթուն կոչեցեալ թարգմանութեամբ՝ յարակիր և ներգործական անուամբ. որ ոչ երբէք ետուր քուն աչաց, և ոչ ծանրութիւն արտեւանաց, և ոչ հանգիստ գժուարաբեռն մարմնոյդ. մինչեւ գտեր զտեղի յարկի տեառն Աստուծոյ Յակովբայ և տանս Թորգոմայ։ Գրիգորիոս որդի միխիթարութեան ըստ այլում կոչման, ո՛չ մօր քո Ոգոհեայ, այլ բոլոր Հայաստանեայցս եկեղեցւոյ. ո՛չ որդի վշտաց, որպէս Բենիամին մօր իւրոյ Հռաքելի, և առիթ մահու. և կամ Վայքաբովթն այն 'ի յառման տապանակին, այլ առիթ բերկրանաց, և պատճառ կենդանութեան՝ սկզբնդուկ և ամուլ աշխարհիս արեւելից հիւսիսոյ, ըստ Սահակայ և Իսրայելի աղատածին և պարգեւական զաւակացն Սառայի և Ռեբեկայ. յորմէ օրհնեցան ոչ սակաւ ազգք և ազինք, և զանմահական առին վիճակ։ Գրիգորիոս հիմն հաւատոյ, սիւն եկեղեցւոյ, յարգարիչ աստուածատուր կրօնից, յարացոյց

անարատ քաղաքավարութեան ըստ
Քրիստոսի ։ Գրիգորիոս հաստա-
տութիւն երկրի , նաւասաի ծովու ,
բարձրութիւն երկնից , արեգակն 'ի
մէջ ալօտերեւակ լուսաւորաց ։
Գրիգորիոս համանունդ հրեշտա-
կաց , համապատիւ վեհից երջան-
կաց , անուանակիր պետութեանց ,
իշխանակից իշխանութեանց , զօրա-
կից զօրութեանց ։ Գրիգորիոս դա-
սակից սերովբէից , հաղորդակից
քերովբէից , հանգիստ և աթոռ
սրբոյ Երրորդութեանն . զորոյ ըզ-
գութն ողորմութեամբ և միսիթա-
րութեամբ դարձուցեա 'ի ժողո-
վուրդս քո , և 'ի վիճակ ժառան-
գութեան քո յազգս Հայաստա-
նեայց , որք աննենդ և անխարդախ
պահեն զառ 'ի քէն եդեալ հա-
ւատս ջարջարանօք և ճգնութեամբ
'ի պարծանս քեզ յաւուրն Քրիս-
տոսի ։

Թէպէտ 'ի բարեաց գործոց աղ-
քատ գտանիմք , և յոյժ ամաչե-
ցեալ , զոր քաւեսցես մաքուր քա-
հանայապետդ մեր և ատտուածայ-

ին ծնողդ . և հայցեսցես ընուլ զա-
ւեռեաց խոստումն , վերանալ ելա-
նել յառաջին փառն և 'ի պայծա-
ռութիւն՝ թագաւորութեամբ և
քահանայապետութեամբ , և գոր-
ծովք արդարութեամբ 'ի հաճոյան
Աստուծոյ . և զսակաւ ծալիկս զայս
հաւաքեալ 'ի խօսուն մարգարտաց ,
ընկալ 'ի հիւսս պսակի ամէնարժէայ
գլխոյդ , և տուր տեղի 'ի խորա-
նի քոյ աշխիճանաժառանգ որդւոյ
քո խնդրողի բանիս , եւս և յուսով
աշխատողիս 'ի սմա , որ ամենեւին
եմ անարժան որդիութեան քո և
աշակերտութեան : Բայց միայն 'ի
ձեռն քոյդ մաղթանաց սպասեմ ո-
ղորմութեանն Աստուծոյ հասանել
խորհրդով անօրէնութեանն Քրիս-
տոսի , և 'ի հեղումն արեան նորա .
որ է օրհնեալ և գոհաբանեալ 'ի
փառս Հօր , և 'ի պատիւ ամենա-
սուրբ Հոգւոյն , 'ի հրեշտակաց և 'ի
հողեղինաց , 'ի սուրբս իւր և յամե-
նայն արարածս , այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ՅՈՎՀԱՆՆԷՍ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԶՆԿԱՅԻՈՅ

Ասացուածք

ՆԵՐԲՈՂԱԿԱՆ ԳՈՎԵՍՏԻ

Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ ՀԱՑՈՑ

ԳՐԻԳՈՐԻՈՍ .

ԱՍԱՑԵԱԼ ՅՕՐ ՅԻՇԱՏԱԿԻ ՆՈՐԱ

ԶՈՐ ՅՕՆԵՆ ՄԵԾԱԺՈՂՈՎ ՀԱՆԴԻՍԻ

Ի ԼԵԱՌՆ ՍԵՊՈՒՀ

ՈՐ Է ՏԵՂԻ ՃԳՆՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ԵՒ

ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻ

ՅՈՓՆԱՀԱՒԱՔ ՀԱՆԴԷՍ ՔԱՀԱՆԱՅԱ-

ԿԱՆ ԴԱՍՈՒՑ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

ՈՄԱՆՑ

ԵՒ ԺՈՂՈՎՔ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ ԲԱԶՄԱՑ

ԱՆԴՐ ԳՈՒՄԱՐԵԼՈՑ .

Յարաղուարձ խնդութեամբ բեր-
կրեալ ցնծա՛ եկեղեցի սուրբ, նո-
րահրաշ և պայծառ երկին, աս-
տուածակազմ լուսաւորք զարդա-
րեալ. քանզի 'ի քեզ ծագեալ իմա-
նալի արեգակն, զուարթարար լու-
սինն դիշերայնոյ մխիթարիչ, զո-
րէնն ստուերական լրմամբ լեցոյց,
և զգումարս խմբից հրաբորբոք և
հոգիահրաշ աստեղաց 'ի քոյդ բար-
ձրայարկ և գմբեթաձեւ խորանի
առկայացոյց կենդանաշարժ ընթա-
ցիւք։ Որ են նահապետացն անձինք,
մարգարէից հանդէսք, առաքելոցն
դասք, մարտիրոսացն ժողովք, հայ-
րապետացն հոյլք, ճգնաւորացն
խումբք, և ամենայն աստուածա-
զարդից լուսափայլութիւնք։ Յո-
րում 'ի քոյդ գերակայ կայանս 'ի
վեր նկատեալ բարձրահայեաց բա-
նականացս, տեսանեմք 'ի մէջ բազ-

մահոյլ հրեղինակերպն դասուց յոքնազան լուսով առլցեալ, զհան-դիսահրաշ և զմեծ նահատակն արե-ւելեան, զլուսերանդ և զզուարթ-արար աստղն աշխարհալոյս զԳրի-գորիոս գերազանց փառաք փայլեալ յաւէտ քան զբնաւս. զորոյ քաղ-ցրահայեաց լուսով շուրջ փարիմք յօր յիշատակի սրբոյն։

Ուրախ լեր դրախտ աստուածա-տունկ, բազմախիտ անկովք տեն-ջացեալ, և մշտափթիթ ծաղկօք ուռճացեալ. երկիր լուսոյ և վայր փափկութեան, եդեմական աղբերն բղխիչ լայնածաւալ ընթացիւք. քանզի 'ի քեզ ծառն կենաց տընկեալ՝ բարձող անմահական պտղոյն, և որթն ճշմարիտ աճեցեալ քաջա-բեր ուռոցն բազմութեամբ՝ յինքն ցուցեալ զգեղեցկատես և զվայե-լուչ ողկոյզն, ուրախարար բաժա-կին բաշխիչ։ Յորում և 'ի քոյդ բարեալն բուրաստանի հայեցեալ տե-սանեմք զերեւելն և զհամապայծառ ծաղիկն զքաջազուարճ և զսաղար-թաշն տունկն պտղաւէտ. յաղբերէն

կենաց զյորդառատ վտակն, զՃըշ-
մարիտ որթոյն քաղցրաՃաշակ ող-
կոյզն, զԳրիգորիոս լուսաւորիչն
Հայոց, զհեղինակն հոգւոց. որոյ
յիշատակաւն զուարՃացեալ բեր-
կրիմք յուրախութիւն հոգեւոր։

Համագումար բազմութեամբ հա-
նուր հաւատոյ մանկունք, ազատա-
ծին ծնունդք ազատ մօրն վերնոյն
Սիոնի, սիրասնունդ զաւակք մա-
քուր ծննդեամբ յարգանդ հո-
գեւոր, ազն ազնուական ընտրեալ
յառաջահրաւէր կոչմամբ, գերա-
գոյն անուան ժառանգորդ. օրհ-
նութիւն նոր նուագեցէք նորոգո-
ղին զՁեզ, և նորահրաշ բարեաց
պարգեւողին. զի այսօր մայր Ձեր
եկեղեցի խմաստութեամբն հօր շի-
նեալ, և հանՃարով հոգւոյն կանգ-
նեալ զնորհրդաբար լցեալ շուե-
մարանս իւր բանայ, և զմթերս հո-
գեւոր գանձուց իւրոց ցուցանէ բա-
րեսէր որդւոցդ. զի տեսանելով
զգեղեցկութիւն գանձուցն անկո-
ղոպտելի, անդ և սիրտք Ձեր եղիցին
անբաժանելի։ Յորում տեսանեմք

զհրագունակ և զմաքուր ոսկին ըզ-
հաւատն ուղղափառութեանն , զընտ-
րեալ և փորձեալ արծաթն զպայ-
ծառ բանս տէրունական . զերեւելի
և զպայծառ ակունսն , զսրբափայլ
և զառաքինազարդ անձինս սըր-
բոցն , զծովածին մարգարիտն և զա-
մենայն յօրինուածս գեղեցկութեանն
իւրոյ : Յորում տեսանեմք և յայտմ
ամենունակ գանձարանի զոսկիա-
փայլ անձն զհաւատով պայծառա-
ռացեալն , զսուրբ և զզուտ ար-
ծաթն , զյատակ բանին Աշմարիտ
քարոզն , զբազմագունի ակն , զգե-
րազանց առաքինութեամբ շքեղա-
ցեալն , զԳրիգորիոս հայրն հաւա-
տոյ , և զվայելուչ պսակն Հայաս-
տանեայց սուրբ եկեղեցւոյ . որոյ
տօնախմբութեամբ զարդարին ան-
ձինք հոգեւոր որդւոց , և զբազմա-
դիմի պէտս իւրեանց լցուցանեն
հայրենի գանձիւքն :

Ատանօր բացէք զգանձարանս
մտաց ձերոց յընդունակութիւն ա-
տուածային գանձուցն . մաքրեցէք
զտախտակս սրտից կենդանագրել'ի

ձեզ զտիպ պատուէլն պատկերին, նկարել յոգիս ձեր զգեղեցկապէս հատակն գովելն, զհաւատոյ հեղինակն, զյուսոյ յարաժամ և անշարժապէս դիտողն. զսիրոյ որբապէս և զհաւատարիմ պաշտօնեայն. զկատարեալ բարեացն գործօնեայն. զՃշմարիտ ատուածպաշտութեան յարացոյցն, զբարիոք հնազանդութեան օրինակն. զժրապէս ժուժկալութեան ժողովետն. զողջախոհութեան և զպարկեշտութեան ապացոյցն. զհրաշագործ և զզարմանալի սքանչելեաց ներգործողն. զարիաբար և զանվանելի զօրավարն. զքաջազօր և զյառաջադէմ զինուորն. զԳրիգորիոս զամենայն առաքինութեաց պարունակն. զսրբութեամբ անեալն, զառաքինութեամբ քաղաքավարեալն, զարդարութեամբ վայլեալն. որոյ այսօր յիշատակաւն զուարճանամք և յասպարէզ նահատակութեանցն ՃԵպիմք, և հայրենի բարեաւն բարգաւաճիմք, և քաղցր և ախորժելի անուամբն զընթացս բանիս ուղղեմք ասելով.

Նահատակ բարի Գրիգորիոս, քանզի փութամբ ելանել՝ի հանդէս քոյոյ մեծապանչ ճգնութեանդ, ճեմեալ՝ի բուրաստանս բանաւոր և խօսուն քո ծաղկանց, գունագեղ և գովելի վարուցդ, մոռանել յայդի բազմածաւալ և նորազուարճ ողկուզեցդ, դիմել՝ի դըրախտս պայծառազարդ և պարարտաբեր պտղոցդ. զոր արդեօք ժողովեցից անծորելի ծաղիկս՝ի ծոցս բանիս թաքուցանելով. կամ՝ զոր ողկոյզ ուրախարար կթեցից՝ի զմայլեցուցանել զայսքան բազմութեան անձինս. որոմ պտղով պարծի բանիս շարժումն, կամ՝ յորս պշուցեալ նայի անձեռնարկելի բարձրութեամբ։ Զորս պատմեցից որ՝ի քեզ գեղեցիկ գովասանութեանցն արժանի. զյղութեանն ամենաչքանչ իրագործութիւնն, եթէ ըզծննդեանն պարգեւական շնորհս. զննդեանն մաքուր սրբութիւնն, եթէ զուսմանցն շնորհալի մտավարժութիւնն. զերկնանման առաքինութեանցն ընթացս, եթէ զխա-

չեցելոյն յաղագս մեր զհետեւումն. զանանելի չարչարանացն զհանդէս, եթէ զխորութեան վերապին խորհրդական ժուժկալութիւնն. զաստուածային տեսչութեամբ վերաբերումն, եթէ զսոսկալի տեսլեանն զարմացուցիչ հանգամանսն։

Իական բարւոյն վերադիտող Գրիգորիոս, բազմագունի բարեացն որ 'ի քէն մեզ ընձեռեցաւ, զորպիսի ընծայս՝ որոնմ մեծամեծ և անզուգական իրի նուիրեացուք. բազմաբան վարդապետութեամբ լուսաւորեալքս, քահանայապետական հայցուածոց նուիրեալքս, աբրիական հակողութիւն հովուեալքս, ճգնաւորական աղօթիւք պարարտեալքս, հանգստեան քո տեղւոյ և գերեզմանիդ գովելոյ մխիթարեալքս։ Եւ այժմ ծանրաբեռն անձամբ առ հայրդ հանգստարար հաւաքեալ, յորս և ես անչափելի պարգեւացն որ 'ի քէն պարտականս, և անհամեմատ բարեացն բաշխման բաժանորդս՝ գուշնաքեայ բանիւ ձեռնարկեմ, փոխա-

ընել զքաղցր պարտուցն համարս՝ որ եղեր յոչէից լինելութեանն ըստ յուսոյ ծնողացն միջնորդ, և պըտղոյս անպիտանի բարիոք գոլոյն պատճառ. բանական մասինն շարժման առիթ, և 'ի նոյնն յարամնալոյ յորդորիչ, և այժմ ընկալ զբանիս պարտս ձեռնտուութեամբդ որ 'ի քէն։

Սրբագունի անձինդ պատուեալ պատկերի լինել նկարիչ, վեհագունիդ բնաւից բարուց ընտրութեան բանիւ քանդակիչ. գերագոյն գեղոյդ գերազանց փառաց՝ գրով գրոշմիչ. երջանիկ գործոյ երկնաճեմ ոգւով եղեալ յօրինիչ. քաւիչ քարոզիդ քաղցրուսոյց բանիւ քոյին հոգեւոր որդւոցս պատմիչ. բայց որոնք երանգոք 'ի դէմս բերիցզփառաւազարդ քո տիպ տիրական. որ բան բաւէ զընտիր բարուց քոց յօրինուածս բարի 'ի կիր արկանել. զվեհագոյն վարս, զզարմանալի գործս, զսուսկալի և զսրովբէանման մաքրութիւնս. յորմէ յաղթի տըկար բանիս զօրութիւն, և փափաքէ

նուաստ ոգւոյս ցանկութիւն. յաղ-
թիլն յանյուսութիւն արկանէ, և
փափաքն համարձակագոյնս գոր-
ծէ. անյուսութիւնն անկարելիս
ցուցանէ՝ զյօդուածս անդամոց բա-
րեացն մասանց 'ի կիր արկանել. և
համարձակութիւնն իմաստից կարո-
ղի կատարեալ վարժից հիւսուածոց
բանից. և ցանկամ՝ լինել ինձ միտս
մաքուրս և բանս արագաշարժս և
բազմաբուխս՝ ըստ ծիծռանցն Ճար-
տարութեանց. ձեռն անաշխատ 'ի
գործ, և զբազմութեան ջուրց նիւթ
առ 'ի գրել զշնորհաշունչ պատկեր
զարմանահրաշ գործոյ սուրբ Լու-
սաւորչին մերոյ 'ի յոգիս և 'ի միտս
բազմութեան հաւատացելոցս։ Եւ
արդ զի կատարեալ ցանկայ սիրտ իմ
մեծափափաք բաղձանօք՝ նկարել
զարփիագեղ պատկեր աստուա-
ձարդ հօրն մերոյ սրբոյ Լուսաւոր-
չին Գրիգորի 'ի կենդանի տախտակս
սրտից որդեացեալ ժողովրդեան նո-
րա. ոչ 'ի գոյնս փայլուն նիւթա-
կանս, այլ զանմարմին նահատակու-
թեանցն զհանդէս, և զսոսկալի չար-

չարանան, որով գեղեցկացաւ թա-
գաւորական պատկեր մաքրափայլ
ոգւոյ նորա. Հայր երկնաւոր, ներ-
կեա զերանդս խմաստից բանեղէն
գեղոց յառատաբուխ շնորհացդ ալ-
քերկ, կազմել գեղեցկայարմար յո-
րինուածոք զայս պատկեր ցանկալի՝
ախորժական գեղոյ աքանչելի։ Եւ
զի յօժարիմ սիրով յօրինել պատկ
պանծալի մօրս մեր սուրբ եկեղե-
ցւոյ՝ ոչ 'ի նիւթական ականց և 'ի
ծովածին մարգարտաց, այլ յամե-
նապայծառ առաքինութեց և յան-
մարմնական վարուց նահատակին
Քրիստոսի սրբոյն Գրիգորի։ Գլուխ
եկեղեցւոյ որդի և բան Աստուծոյ
Յիսուս, տուր ինձ հմտութիւն ա-
ղուեստի և մտաց տեսողական դի-
տաւորութիւն, յաջողակի ձեռին
շարժութեամբ շարայարել զհիւ-
սուածս վարուց լուսափայլ ականց
խօսուն մարգարտաց 'ի զարդ գլխոյ
սուրբ եկեղեցւոյ։

Եւ զի հանդերձեալ եմք շինել
տաճար տենչալի ոչ 'ի փայտից յաղ-
կելոց և 'ի քարանց քանդելոց, այլ

'ի կենդանի տնկոց աՃեցելոց 'ի
ջուր սուրբ աւազանին , և տնելոց
ուղղափառ դաւանութեամբ հո-
գեշնորհ և աստուածագուեթ հօրն
մերոյ սրբոյն Գրիգորի . և 'ի բանա-
կան քարանց ոչք իբրեւ զվէմն կեն-
դանիս շինեալ էք տաՃար հոգեւոր
'ի գլուխ անկեանն հաստատեալք .
և այժմ շինիք մաքրութեամբ յըն-
դունակութիւն քահանայապետին
մերոյ մանաւանդ Հոգւոյն սրբոյ՝ ո-
րում նա եղեւ տաՃար ցանկալի .
ամենիմաստ Ճարտարապետ հանՃա-
րոյ Հոգիդ սուրբ Աստուծոյ , տուր
շնորհ այսմ շինուածոյ նորանորոգ
որդւոց Սիոնի , զորս ծնար սուրբ
աւազանաւն և միշտ նորոգես 'ի
հնութեց մեղաց , անխախուտ մնալ-
ամրութեամբ , և յընդունելութիւն
քեզ տաՃարանալ և յուրախական
ոճնի 'ի քէն զարդարեալ հօրս
զուարՃանալ :

Եւ արդ զի մեծագոյն է առա-
ջիկայ այս իրողութիւն , պարտ
է մեզ նկատել հոգւոյ աչօք 'ի յոյն
վերին սիրով Քրիստոսի սուրբ նա-

հատակին, և զմարմնոյ աչս մաքրել յստակ հայեցուածովք և յարատաս սուս ցնդել. շարժուածն ձեռաց յաղօթս և ականջաց յունկնդրութիւն, և խնդրել խմաստութիւն հանճարոյ 'ի Հոգւոյն սրբոյ, կարող լինել սպասաւորել ահիւ և դողութեամբ յաւուր յիշատակի խոստովանողին Քրիստոսի սրբոյն Գրիգորի, և գրել 'ի սիրտս մեծահանդէս այսմ ժողովոյս զյիշատակ անմարմնական վարուց նորա։ Եւ դուք պատրաստեցէք զձեզ 'ի ժամուս յայսմիկ հաղորդ լինել մաքրութեամբ երկնայինն վարուցն 'ի շնորհաբաշխ աւուր տօնիս։ Եւ արդ չորքս այս եղեցին մեզ գլուխ բանի արժանի զարմացման և յիշատակի. ժամանակս այս և օրս բերկրալի տօնի, և տեղիս հանգստեան սրբոյն Գրիգորի, և դէմքն ամենագով և ներբողելի, և իրքն որ 'ի տեղւոջ և 'ի ժամանակի գործի։

Ե. Ժամանակս յորում հաւաքեալ եմք որդիք Սիոնի 'ի դրունս

մոր մերոյ եկեղեցւոյ, և ծնունդքս բանի քարոզութեան սրբոյն Գրիգորի առ հայրս մեր հոգեւոր, որ և հոգեւորս այս գարուն ընդ գարնանային զուարճութեանցն համեմասի. յորում երկնայինս այս խորան պայծառանայ և խմանալի արեգակն զքաղցր լուսոյն ծագէ 'ի սմա ճառագայթս. օրէնքն լուսատու համագաղափար լուանին քարոզութեամբ փայլէ. և պարք աստեղացեալ սրբոցն 'ի նորումս երկնի մաքրապէս ծագեն. աղբիւրք վարդապետութեան յստակագոյնս բղխեն. և գետօրէն մեկնութեամբ յամենեցունց լսելիս հոսին:

Բ. Եւ տեղիք ժողովոյս՝ աստուածաբնակ լեառն Հանգստեան Լուսաւորչին մերոյ սրբոյ, որ և լուսափայլ ճառագայթիւք աղօթից նորա պայծառանայ, և 'ի հոգւոյ շնորհաց նորա հովանանայ: Եւ այժմ զօրութեամբ սիրոյ նորա բանական ծաղկօք լեառնս զարդարեալ գեղեցկանայ. զտերեւս յու-

սոյն արձակեալ և զզանազան ծաղկիս առաքինութեանն տարածեալ, և զկատարեալ բարեացն պտուղ Աստուծոյ նուիրեալ. և զայսոսիկ միջնորդութեամբ սուրբ Լուսաւորչին մերոյ՝ հայցել բազմութեամբն 'ի միասին եղեալ՝ ըստ ծաղկի ումեմն բնութեան՝ դէմք 'ի դիմաց պայծառացեալ, և ամենեցուն յարեգակն կոյս ուղղել։

Գ. Իսկ դէմք ամենագով և ներբողելի, երեւելի և պայծառացեալ արեգակն Հայոց Գրիգորիոս, որ զնաւար կռապաշտութեանն փարատեաց, և զսառուցեալքս մեղաք ջերմն ճառագայթիւք աղօթիցն պտղաբերս գործեաց. Ճշմարիտ որթոյն բարեբեր բարուն՝ որ ուրախարար բաժակաւն զուարճացոյց զմեզ։ Գեղեցիկ և զուարթարար գարուն հոգւոց, որ յորդահոս վարդապետութեամբն հնչեաց 'ի մեզ զշնորհս հոգւոյն. հովանաւոր դրախտն 'ի տօթոյ և 'ի կիզող ժամանակի. երեւելի տաղն որ մո-

լորելոցս 'ի ծովու կենցաղոյս՝ ա-
ռաջնորդեաց լուսափայլ երեւ-
մամբն. ընտիրն կերպիւ, լուսաւո-
րեալ դիմաք ըստ նմանութեան փա-
ռացն Մովսէսի. գովելի հասակն,
որ ինքնիզեան բարձրութեամբ ինն
դասուց վերնոցն ցանկալի եղեւ.
լուսերանգ շաւիղն՝ որով Ճշմարիտ
լուսոյն Ճանապարհ ծանուցեալ է-
ղեւ. շող կենդանի մեզ 'ի բարձանց
իջեալ. քաղցր և բժշկարար դեղն
որ զցաւս և զխայթուածս թունից
վիշապին բժշկեաց. սոսկալի տե-
սիլն և ցանկալի, որ և սրովբէական
փառացն տեսող եղեւ. կարմրորակ
և անուշահոտ վարդն որ 'ի փշաբեր
արմատոյ ծաղկեալ եղեւ. և անու-
շահոտ բուրմամբն ելից զհայաստա-
նեայց աշխարհս. տենչալի տունկն
դրախտի եկեղեցւոյ, որ քաղցր և
ախորժ պտղովն իւրով զուարճա-
ցոյց զմեզ. ցօղն զուարթարար որ
շնորհօք հոգւոյն ցօղեալ՝ զխամ-
րեալս և զթառամեալս 'ի բուսոյ
բարեաց զուարթացոյց. այսոքիկ
դէմք են յաղագս որոյ անկարանայ
բան յարժանաւորն խօսելոյ։

Դ. Իսկ երբ որ 'ի ժամուս յայսմիկ գործի, զի հովիւքս բանաւոր հօտին Քրիստոսի ընդ հանգստաւէտ հովանեաւ մօրս ձեր սուրբ եկեղեցւոյն ժողովեալ՝ հովուեն ըզձեզ 'ի վայրի դալարուոջ և 'ի ջուր հանգստեան կենդանի վարդապետութեանն սնուցանեն. մշակքս երկրագործ իբրեւ եղինս հեզ և հանդարտ ընդ քաղցր լծոմն Քրիստոսի լծեն զձեզ, և զբանական անդաստանս հոգւոց և մտաց հերկեն, ըզբանն կենաց սերմանելով 'ի ձեզ, և յուսով բարեացն պտղոյ սպասեն ուրախութեամբ։ Զկնորսքս հոգեւոր որսան զձեզ կարթիւ բանին 'ի հոսանուտ կենացս 'ի յաւիտենականն. 'ի տղմասէր վարուցս 'ի յերկնային քաղաքավարութիւնն. պահապանքս դրախտին կենաց ցուցանեն ձեզ զծաղկոցն աստուածային զվարս աստուածայնոց արանց, և բուրեն 'ի ձեզ զհոտ գիտութեան անմահական փայտին. և դուք ժրացեալք իբրեւ զմեղուս

աստուածային հաւաքել՝ ժողովե-
ցէք 'ի բջիջս մտաց ձերոց ։

Եւ զինչ պատճառ ժողովոյս բազ-
մութեան . խնդութիւն և սէր տո-
նիս . որ է ուրախութիւն յիշատա-
կաւ արթուն և զուարթուն ա-
նուանն . քանզի տօն է հայրապե-
տին մերոյ սրբոյն Գրիգորի , և ա-
ռաքելաշնորհ և մարգարէապատիւ
Լուսաւորչին մերոյ , որ զարդարեալ
'ի Հօրէ 'ի մարգարէական պատիւ
մեծարեալ եղեւ . և որդիական սի-
րով առաքեալ յՈրդւոյ և առաքե-
լական շնորհիւն լցեալ եղեւ . և 'ի
Հոգւոյն սրբոյ ընտրեալ՝ 'ի հայրա-
պետական աթոռ բարձրացեալ է-
ղեւ . զերկոց ժամանակաց՝ զառաջնոյ
և զմիջնոյն և զվերջնոյ պարգեւս
Երրորդութեն յինքն պարագրեաց .
ըստ որում և մարգարէին է հա-
մապատիւ և առաքելոցն զուգահա-
ւասար և աստուածազգեաց հարցն
սրբոց համանման ։ Լսան որոյ հայր
կոչեմք , զի ծնաւ զմեզ բանիւն Ճըշ-
մարտութեան . և անոյց անհամե-
մատ գթութեամբ առատութեան

իւրոյ , և ամենոյց ուղղափառ հաւատոյն դաւանութեամբ . վարդապետ անուանեմք , զի ուստոյց զերկնաւոր բարեացն հանդամանան . հովիւ՝ զի ժողովեաց 'ի հօտ Աշմարիտ հովուին զհաւատացեալս արքոյ Երրորդութեանն . մշակ զի բազմավաստակ քրտամբք քակտեաց ըզկորդացեալ անդաստանս մտաց մերոց , և սերմանեաց զսերմն աստուածպաշտութիւն . մարտիրոս զի մարտեաւ ընդ երեւելի և աներեւոյթ թշնամւոյն . վկայ զի վկայեաց բազում՝ չարչարանօք միութեան Երրորդութեանն և Աշմարիտ աստուածութեանն . նահատակ զի ողջակիզեալ եղեւ կենդանի մարմնով . յաղթող զի ոչ կասեցաւ 'ի բազմահնար տանջանացն . Աղնաւոր զի 'ի վերայ ամենայն հանդիսիցն զվարս Աղնութեան յանձն էառ , որով առաւել բարձրանայ ազգն Հայոց . զի որպէս մի է Հայրն մեր և զամենայն բարիս յանձն իւր տպաւորեաց . այսպէս մի է և միակրօն ազգն Հայոց , և ամենայն դերազանց

պարգեւոք մեծարեալ եղեն. վասն որոյ և մեք 'ի պատիւ բազմերախտի հօրն մերոյ բանս ներբողական յարմարեցուք։

Գրիգորիոս արփիական գեղ, ա-րեգակնափայլ ջահ, անշինջանելի լուսոփն լցեալ. Գրիգորիոս բարու-նակ բարի, բուրաստան ծաղկեալ, բուրվառ ոսկեղէն հաշտարար խընկոք. Գրիգորիոս դարուն ծաղկաւէտ, գետ յորդահոս, գեղեցկածաւալ բղխմամբ ընթացեալ. Գրիգորիոս դրախտ աստուածազարդ, դիւրայարմար քնար, դայեակ մանկուութեան և դաստիարակ. Գրիգորիոս երկնաքաղաքացի այր, երեւելի աստղ, երկնաչուռ ընթացիւք լուսատու։ Գրիգորիոս զօրութեամբ էին զարդարեալ զքեզ զանազան ծաղկօք անուշիւք. Գրիգորիոս էական բարեոյն էապէս պատկեր, էին ճշմարտի ճոխացեալ շնորհիւ։ Գրիգորիոս ընտիր կերպիւ ընդ արփին սլացեալ՝ ընդ հանդէս յոքուանց երեւեալ. Գրիգորիոս թաւախիտ

անդաստան, թագաղարդեալ փառաւք, թեւաածեալ յեղեբայինն բարձր խորան. Գրիգորիոս ժրաբոյս ծաղիկ, ժիր մշակ երկոց, ժողովարան յոքանց բարուքեանց. Գրիգորիոս խմաստիւք վերին իսկապէս լցեալ, 'ի ծովածփանս խաղաղ նաւահանգիստ. Գրիգորիոս լուսաբերանդ շաւիղ լրմամբ լնացեալ, լուսաւորիչ հայաստանեայց զարմիս. Գրիգորիոս խոհական հանճար, խորհրդեամբ մաքրեալ, խորհրդակից վերին հանճարոյ. Գրիգորիոս ծով ծիծաղական, ծուղակ դժրողին, ծառ բարձրուղէշ և պտղաւէտեալ. Գրիգորիոս կտակագիր բարւոյ, կերպարան փառաց, կենդանւոյն յաւէտ յարաժամ. Գրիգորիոս հեղինակ բարի, հերքիչ ցանկուքեաց, հանճարով Հոգւոյն զօրացեալ. Գրիգորիոս ձայն ազդարար, ձայնեալ 'ի բարձանց, ձեւեալ հասակ անձինդ գովելի. Գրիգորիոս զամբար ջահացեալ, զեկոյք հաւատոյ զեկավարեալ 'ի ծով կենցաղոյս: Գրիգորիոս ճշմարիտ հովիւ, ճա-

ռադայթ փառաց, Ճանապարհ 'ի կեանս անմահից։ Գրիգորիոս մայր եկեղեցւոյ, մաքուր սրբութեամբ մաքք սլացեալ 'ի դասս սրբովքէից։ Գրիգորիոս յոքնազան պարգեւք յարփիագեղ լուսոյն յազգս երկրածնաց։ Գրիգորիոս նուիրեալ վեհին նորաղուարճ փառաք, նահատակ բազմաչարչար։ Գրիգորիոս շողէջ կենդանի, շար ոսկեման՝ ընդելուզեալ մարգարտով, Ճնորհազարդ պսակ սուրբ եկեղեցւոյ։ Գրիգորիոս ոսկեՃեմ աղբիւր, ուղղեալ գեղեցկազարդ, ուղղութեանց առաջնորդ։ Գրիգորիոս Ճնաշխարհիկ պարծանք, չարչարիչ չարին, չարչարանաք մարմնոյդ։ Գրիգորիոս պաղագործ երկիր, պարարտաբեր բուսով, պարգեւաք Հոգւոյն պատուեալ։ Գրիգորիոս ջերմեռանդն աղօթիւք ընչիչ յանցանաց, ջրոփն կենդանի և աստուածունակ։ Գրիգորիոս ռետին քաղցրութեան, ռահ լուսաՃեմ, ռահ գործեալ 'ի կեանս վերին անմահից։ Գրիգորիոս սոս-

կալի տեսիլ, որովբէական փառաւոք, սլացեալ յաստեացս առ երկին. Գրիգորիոս վարդ կարմրորակ վառեալ հաւատով, վիմարդեան մտաւք հաստատուն. Գրիգորիոս տուն տենչալի տէրունեան դրախտին, տարփալի վերնական վեհիցն. Գրիգորիոս բաբունի բարի, բաբունեաց պարծանք, բենական լուսով ցնծալի. Գրիգորիոս ցանկ հաւատոյ, ցնծութիւն ազանց, ցող զբաւարթարար բանական բուսոց. Գրիգորիոս փիւծելոյս ոգւով, փիւսողի ճառիս, հիւթ բժշկարար ցաւոց. Գրիգորիոս փաղփիւնափայլ ծաղիկ, փունջ մանուշակաց, փառազարդ լապտեր լուսընկալ. Գրիգորիոս քահանայ անբիծ, քարոզ ճշմարիտ, քնար աստուածախօս և քաղցրանուագ:

Գրիգորիոս բազմերանեան վկայն, յերեւելի արարածոցս գերաշխարհիկն, վերնոյն Երուսաղեմի գաւառականն, անմարմնոց դասուցն ազգայինն մաքրութեամբ: Արդ եթէ ախորժելի թուեսցի ումեք ընդ

ներբողական գովեստի գլխոցն յաղ-
գէ և 'ի գաւառէ պատմաբանել,
ապա ուստի արժան է 'ի վերուստ
անտի պարտիմք ցուցանել։

ՅԱբրահամէ մեծէ և Աստուծոյ
սիրելւոյ սա սկզբնաւորեալ, 'ի նա-
հապետէ հնոյն՝ նահապետ նորոյս
նուիրեալ. յարդարոցն հօրէ ար-
դարութեան ծնող ծանուցեալ,
յընտրեալ հնչմանն մտաց մաքրամիտ
իմաստիւք փայլեալ. 'ի կենտուրա-
կան ծնունդն բուրումն անուշից
խնկոց ծածկեալ, ընդ աւազածին
որդիսն 'ի զարդ փայլման ոսկի մի-
ցեալ. ընդ վեցեսին որդիսն որ 'ի
Կենտուրայ, երկնաւոր խոստումն
յարեւելեան և 'ի հիւսիսական
ազգսն ժամանեալ. լոյս հոգւոց 'ի
լուսոյ կողմանն աշխարհի ծագեալ։
Վասն զի շնորհ օրհնութեանց որդ-
ւոցն լուսոյ յաստեղածին հօրէն
ծածկեալ գայր ընդ նոսին. և իբր
զադինաբուխս զգետն Եփրատէս 'ի
ծործորս ծոցոյ երկրի և ընդ երակս
խորոց 'ի սահմանս հայաստան աշ-
խարհի աղբիւրացեալ բղխէր։ Այս-

պէս և մերն Լուսաւորիչ 'ի քաջա-
բուռն և 'ի զօրաւոր զարմէն Պար-
թեւաց ծնեալ, 'ի պալհաւական
պետացն որ յարքայանիստ շահաս-
տանէն բարգաւաճանօք կոչեցեալ,
'ի թագաւորդիցն Արշակունեաց՝
արշակունի անուամբ առձայնեալ,
'ի սուրենական ցեղէն իբր 'ի յամ-
պոց մթացելոց ցնծութեան մեղ
ցօղ անձրեւեալ, և լուսածնունդ
ծագումն փայլեալ։ Ի յԱնակայ
հօրէ իբր 'ի փշաբեր թփոյ հրաներկ
թերթս վարդից 'ի հոտ անոյշ մեզ
վերածաղկեալ. յօձից թիւնալից
խայթոցաւորաց մեզ թիւրակէ բը-
ժիշկ երեւեալ. 'ի խնջիւնաց զազ-
րատեսից՝ երփներանգ որակ ծի-
րանւոյ 'ի զարդ կայսերական հան-
դերձից տուեալ. 'ի տիրասական
հարցն դաւոցաց կենդանարար հոգ-
ւոյ պարգեւեալ. արմաւենի քաղ-
ցրաբեր՝ արդարութեան պտղովք 'ի
փշաբեր անդւոյ վարսագեղ բուս-
եալ. 'ի ժանտահոտ և 'ի դառնա-
ճաշակ ծովէ մարգարտոյ յօրի-
նուած 'ի պէտս արքայական թա-

գից ընծայեալ. յապառաժուտ վի-
մաց քարանց կարծրութեանց ոչ-
պազիոն հրափայլ գունով գեղե-
ցիկ գտեալ։ Եւ այսոքիկ զիարդ
կամ որպիսի յեղանակաւ գործե-
ցեալ. այլ յամենահնարն արուեստ
է, հրաշիցն ներգործողէ, բնու-
թեանցն ստեղծողէ և փոխագրողէ.
որ 'ի քարանց որդիս Աբրահամու
յարուցանէ. զծերութիւն 'ի ման-
կութիւն, և զամլութիւն 'ի ծը-
նունդս շարժեալ նորոգէ. յանչքն-
չական տնկոց խոյ կենդանի 'ի պէտս
պատարագաց պաղաբերեալ կախէ.
որոյ իմաստութիւնն անչափ և զօ-
րութիւնն անբաւ. կամելն գործ
կատարեալ, և իմացումն մտաց՝
ստեղծումն աշխարհի։

Այլ երբեմն և ըստ արուեստա-
կան հանճարոյ վարի 'ի գործ
սքանչելեացն իւրոց. զի որպէս
յերկրագործ մշակացն ոչք խնա-
մով տնկագործութեանն՝ զթը-
թուաքեր և զդառնահամ տունկս
նուենեցն 'ի քաղցրութիւն կա-
մեցեալ փոխարկել, փայտս 'ի պե-

ւեսկի ծառոց՝ որպէս և ասի , յարմատս թթուաբեր նռնենոյն վարեն. յորմէ զօրութենէ հիւթոյ զբերս դառնութեանն 'ի քաղցրութիւն յեղաշրջեալ փոխէ . և հալի և կորընչի դառնութեանն որակ և թըթուահամն ճաշակ 'ի քաղցր և անոյշ և ախորժելի : Եւ արդ եթէ այսոցիկ քնաւորութիւս գործեցեալ լինին, ապա զինչդ ոչ զարմանալի իմն հրաշս սքանչելեաց նորագործեսցէ որթոյն ճշմարտի քաջաբեր ուռոց մշակող : Ի տնկաւորել այս երկնահաս տնկոյ 'ի դառնարմատ և 'ի թըթուաբեր ծառոյ ծնողէ , 'ի հեռուստ դարուց և կանուխ ժամանակաց զգիտաւորութիւն երին իւրում ժամու պահելով , և տեղի յարմարական այսմ տնկոյ պատրաստեցուցեալ, առ շիրիմս գերեզմանի մերոյ աշխարհի և ազգի լուսաւորչին մերձ առ դիրս հանգստեան դիպեցուցեալ . յորմէ մահաբեր տունկն դառնահամ յանմահութիւն պտղոյ քաղցրութեան ճաշակ ժամանեալ : Ի տիրանենդ զարմէ տի-

ական աթոռոյ ժառանգ կացու-
ցեալ. յաշխարհմասն ազգէ աշ-
խարհի փրկիչ զօրացեալ. յառա-
քելական մասնէն առաքեալ Քրիս-
տոսի ընտրեալ. յաստուածավառ
լուսոյն Հրաբ լուսոյ արդարեւ մե-
ծի ատենս աշխարհի յօրինեալ յա-
ւէտ. որպէս զի լուսաւորեսցի աշ-
խարհ գիտութեան բանիւ, և առա-
քինական վարուք սքանչելի, զան-
զգամութեամբ և զանգիտութեամբ
խաւարեալսն լուսաւորել իմաս-
տութեան և գիտութեամբ լուսով։ Ի
փրկչէն և բարերարէ և յիմաստու-
թեանն Հօրէ հրաւիրակ երկնաւոր
խրախճանութեանն առաքեալ, 'ի
պատրաստական սեղանն և 'ի զուար-
ճութեան գինեբբուսաց խառնա-
րանն զՀայաստանեայց ազգս կոչե-
լով։ Այս փչալից տունկն, այս
քաղցրունակ պտղոյ պահապան, և
գիւրածախ ծեղն՝ ատոք ցորենոյն
բարձող, յեռ անկագործին զայս
բերկրանաց պտուղ կթելոյ. և ցո-
րենոյն հատի հատելոյ՝ տապարաւ
բանին, հոսչաւ արդար դատաստա-

նին կարեալ հատանի. և փոշէաեւ-
ական յարդ 'ի հողմոյ հոսի. զար-
միւք և ազգօք 'ի սրոյ ջնջեալ, և
մնացեալ միայն մերն Լուսաւորիչ, 'ի
ծոց խնամոցն Աստուծոյ ծածկեալ
և յեկեղեցւոյ հնձանս ուրախարար
ողկոյզ նուիրեալ։ Հայն հաստա-
տութեան սրտից քաղցելոց՝ յըշաե-
մարանս արդիւնք ամբարեալ, զոր
ակնարկութեամբն 'ի վերուստ՝ ա-
ռեալ նորին դայեկացն 'ի Կեսարիա
կապադովկացւոց հաստուցանէին 'ի
մեծ մայրաքաղաքն. ցոլն եկեղե-
ցւոյ դրախտի 'ի յամպ խնամոցն
Աստուծոյ բարձեալ, 'ի սրախոզնող
ապանմանէ զարմիցն զերծեալ. որ-
պէս և տէրն Յիսուս Թեթեւ ամ-
պոք 'ի Հերովդէի սրոյն 'ի յԵգիպ-
տոս փախուցեալ։ Արդ զայսպիսի
ծնունդ սքանչելի՝ զիաւրդ ըստ մար-
մնոյ ազգաբանութեան պատմեմք,
որ 'ի վեր քան զբնութիւն մարմնոյ՝
երևեալ եղեւ յարմարութիւն
կարգացն։

Աշխարհական վարուց վեհա-
գոյնն, դաւառի գերադրուատ գո-

վութիւնն, ապշակունեաց թագաւորացն՝ պարծանաց թագն, առաքելոյն Թադէոսի պարգեւական զաւակն, կենդանի նշխարաց նորին օրհնութեան շառաւիղն, վիճակեալ աշխարհի նորս ընտրեալ հոգաբարձուն, արեւելեան ծնունդն և արեգակնափայլ ծագումն, ոնեալն սրբութեամբ յաշխարհն Գամրաց, և վարժեալ քրիստոնէական հաւատոյն խմաստութեամբ. և յարբունս հասեալ աստուածպաշտութեանն հանճարասիրութեամբ. որոյ կեանք վարուցն կենդանի և հոգեւոր օրէնք առեալ աշխարհի. ոչ գրոշմեալ գիր 'ի տախտակի կրր 'ի քարեղէն պնակիսան Մովսէսի, և ոչ գրաւորական պատուիրանաց ճառք տպացեալ դեղոք 'ի քարսիսի. այլ մարդհրեշտակակրօն 'ի մաքուր մարմնի՝ եղեալ յընդհանուր բնութեանս ստեղծուածի, 'ի վարժ ուսման համանգամայն երկրածնաց մարդկայլն սեռի. և որպէս յամենայնում, նոյնպէս և յամուսնութեանն աստուածագիր օրէնս, յորմէ ոչ հրա-

ժարեաց իբր 'ի խոտան և յարհամարհելի իրէ, և ոչ անկեալ իբր ընդ հարկաւոր և անլուծանելի կապոյ. այլ միայն զի զնորին օրինաց ցուցցէ զպատճառ և զչափ և զկատարումն. և պատճառ՝ զի 'ի սակս որդեծնութեանն և զօրհնութեանն Աստուծոյ ընլով զհրաման. զի ոչ էր պարտեալ էրկինք զդալն լուսաւորք պանծացի առ 'ի ցոյցս մարմնոյ վայելչականաց. իսկ արեգակնափայլ հայրն զծնունդս լուսոյ ծածկեալ՝ ոչ փայլեացէ 'ի կամարս նորոյ երկնի, եկեղեցւոյ ասեմ զհոգեւոր ջահն բերոլն. և յետ զամուսնութեանն ընլոյ զպարտս և ըզչափ սահմանի, այնուհետև զկուսական կրօնիցն յանձին բերէր ըզլուսաւոր մաքրութիւն. որպէս զի մի զրկեացի 'ի նմանէ ամուսնութեն կարգ՝ ոչ ունելով զողջախոհութեանն օրինակ. և մի գերակատար կուսութեանն պատիւ անգործ և անգիտելի մնացէ յամուսնութեն կարգէ և կենաց։ Այլ և յետ զայսոցիկ տալոյ զտարացոյցս, այնու-

հետև փութայր լինել հայր արդարութեանն գործոց. և է օրինակ արդարագործութեանն այս. ոչ ուրեք պարտական գտանելն ըստ առաքելական խրատուն. սակս որոյ լցեալն հոգւոյն Ճառագայթիւք իբր լրմամբ լուսոյ նիւթ արեգական, յարեւմտից յարեւելս հասանէ. իբր գարձ արեգական 'ի միջօրեայն կողմանէ 'ի սայլն կոյս առնելով ընթացս. այսպէս և նա յազգս և յազգինս հիւսիսաբնակ աշխարհին դիմեալ, զի արեգակնապէս զանպրտղութեան սառն հալեսցէ, ըզխաւարաւծ թանձրութիւնն քայքայեսցէ, զլուսոյ և զառունջեան մասունս աՃեցուսցէ:

Յաղագս որոյ գայ առ մեծ արքայն Հայոց Տրդատ, զի ընենդութեամբ խաբէութեան իւրոյ հօրն գաւանաց զպարտան վՃարեսցէ՝ միամտութեամբ ծառայելոյն. և զառաքելական վիՃակեալ աշխարհ և ազգ զհօրն ժառանգեսցէ, չարչարանօք և արեամբ ստացեալ. զոր ընձեռեալ յանձնեաց նմա կար-

կառմամբ ձեռին 'ի գերեզմանէն, և արքայական ատենիւ զպակասու-
թիւն չարչարանաց տեառն 'ի մարմնի իւրում կրեացէ, վասն մարմնոյն
Քրիստոսի որ է եկեղեցի Հայաստանեայց։ Յաղագս որոյ հարկաւոր
է յիշել և զտեղի չարչարանաց սրբոյն, որով զտեալ մաքրեցաւ 'ի
բովս փորձանաց այս լուսափայլ ոսկւոյ մաքրութիւն. և թուել ըզ-
խորհրդական թիւք չարչարանացն՝ զոր և կրեաց քրիստոսանման գթով
վասն մեր, զի 'ի չարաչար կրից ըզ-
մեզ ազատեցուցցէ, և չարչարանօք
իւրոյ մարմնոյն սրբոյ զնոցուածս
մեղաց մեր բժշկեացէ. տեառն նման-
նեալ հաւատարիմ ծառայն տիրա-
սէր, և Ճշմարիտ հովուին Քրիստո-
սի հովիւն հսկող և արիական, զի
զզատուցեալ անդամքս և հատեալ՝
յօդեալ 'ի գլուխն մեր կապեացէ. և
զաստուածաբարբառ ձայնիւն ցու-
ցեալ՝ եթէ այլ ոչնաւրք են իմ որ
ոչ են յայսմ գաւթի, զնոսին յաս-
տուածային հօտն խառնեացէ. յա-
ղագս որոյ ոչ էր կար թաքչել քա-

զաքի կենդանւոյն Աստուծոյ 'ի վե-
րայ հաւատոյն լերին կացելոյ . և ո՛չ
աստուածային փչմամբն վառեալ
բազմալոյս Ճրագին՝ դնել ընդ գը-
րուանաւ ծածկութի . ծանուցեալ
լինէր Թագաւորին Ճշմարտութիւն
նորա հաւատոյն :

Յատեան դատաստանի ածեալ
լինէր անպարտականն առենի , հարց
և փորձ բանից արարեալ ահարկու
և զարհուրելի դիմաք , ահա գոռո-
զաբար և սպառնալիս ասատիկ և լի
բարկութեամբ բերեալ յարքայէ :
Ընտիական պնդութիւն և առաքինա-
բար պատասխանիս՝ լի խմաստութիւ
և հանճարով սրբոյն , զոր համառօտ
բանիւ զմիջոցաւն զանց արարից . և
միայն զնորհրդական կիրս չարչա-
րանացն և զբարեացն մեզ ամբա-
րող տանջանս՝ պատմեցից բանիւ :
Վասն զի Թագաւորն ասատիկ լցեալ
բարկութեամբ , հրամայէր կապել
զձեռան յետս և հարկանել գայլ 'ի
բերանն , և կախել շառաչելս սղի
'ի վերայ ոզանն , և տալ գելոցս
կրծիցն , և արկանել առատանս 'ի

կապս գերարանաց կրծիցն. և վերամբարձ կախել 'ի բարձրաւանդակ տանիս ապարանից որմոյն մեքենայիւք, և կայր այնպէս զեօթն օր. և արդ զմտաւ ածել զանիրաւն ատենի և զանիմաստն ատենականաց զգործն անուղղայ՝ զարհուրեալ դողամ և ոչ առանց արտասուաց բերեմ զեղեալ ողբոց արժանի։

Ո՛վ արքայ մեծազօր, զի՞նդ որ բազմութեան զօրաց և աշխարհաց և ազգաց տիրես, այդչափ անիմաստաբար և անզգայութեամբ վարիս. այլ և ոչ զոք յիշխանաց և յաթոռակցաց ունիս զգաստացուցիչ. և ընդէ՞ր այդքան կարծրացեալ սրտիւ նմանեալք քարանց, զի 'ի քաղցր ցօղոյ վարդապետութեանն բանի 'ի բարբառս բերանոյն Լեր յամպոց երկնից Լիջելոյ՝ ոչ կակղացաւ պընդութիւն սրտից ձեր. զի՞նդ, ո՛վ արքայ, աւազաբար ծանրանաս հակեա՛ 'ի վայր. և ընդ-իմանաս այնմ որ զքեզ ասաղ երկնաւոր թեթեւաթռուչ ընթացիւք՝ 'ի բարձունս է հանելոց։ Իսկ դուք տանջանս չար փո-

խանակ բարեոյ և հանդաստեան ձեզ
շնորհողն՝ հաստատանէք. զվերամ-
բարձ ձեռնն երկնահաս, զարբարան
օդոյ մշտատարած կարկառմամբ յա-
ղօթս, զհաշտութեանն ձեր ըն-
ծայամատոյց, զշնորհաբաշխն ձեր
աստուածագործ իւղովն, զմերկու-
թեան ձերոյ զգեցուցանող աչ, և
մաքրող մատուռնս, զնոսրդ կապէք՝
'ի գործս ձեռաց ձերոց կապեալք
և 'ի շարժմանէ բարեաց կարկա-
մեալքդ. և որպէս գայլ 'ի բերան և
դանդանաւանդս 'ի կզակի դնէք, 'ի
կենդանաբուխ բանին աղբերաբար
բղխող. որոյ շարժումն շնորհալի
շրթանցն իբր զլար զկարմիր ներ-
կեալ գեղեցկախօսութեամբ. յորմէ
շինեալց էք տաճար Աստուծոյ ըստ
լարոյն յարմարութեան միացեալք.
և արեանն Քրիստոսի խորհրդով
գեղեցիկ կարմրութեամբ ներկեալք
և մածեալք. որ սիրովն Քրիստոսի
շարայարէ որպէս լարով, և հաւա-
տոյն ներկուածով գեղեցկացուցա-
նէ իբր կարմրով. որ մեղր և կաթն
էր կաթուած բանի լեզուին շար-

ժողի, տղայոցն 'ի Քրիստոս կաթն անդարար. և հաստատելոցն 'ի հաւատս մեզ քաղցրաճաշակ. ոչ պատկառէք կամ զարհուրիք դանդանաւանդ դնել 'ի կշակի 'ի գործին աստուածուսոյց բանի. որ ցանկալի էր քան զոսկի և քան զանկանս պատուականս բազումս. որ իբրեւ զանօթ ստաշխից էր խնկոց անուշից ըստ խմաստնոյն գովեստից, աննենդ վարդապետութեանն ուսուցիչ. որ հաւատարիմ բանիւն խմաստուն առնէր զձեզ զմանկամիտս և զանիմաստ բազմամեայ տըղայդ. որ լուսով պատուիրանին վառէր զձրագս նսեմացեալ ձեր մըտացդ. որ զողջախոհութեանն լուսատեսիլ շուշան՝ սերմանէր շըրթամքք 'ի սրտից ձեր խոպանացեալ անդաստան, և զմուռս կաթեցուցանէր 'ի մեռելութեն մարմնասէր և ախտակիր ձեր բարուց. շառաչելոս ալն ծանրաբեռնեալ դնէք 'ի վերայ ոլին՝ աստուածային օրինացն բեռին բարձողն, անհամեալքդ յաստուածպաշտութեանն ալէ. և

գեղարանոք և անրոք չարահնար պըն-
դէք զսիրան սուրբ և սրբարար Հո-
գւոյն օթարան. երկրաքարշքդ և
անհանաժիտ. զնա՞ւդ զերկնաւոր
մարդոյն 'ի բարի սրտէ զբարիս բըղ-
խողին, որ 'ի ջերմուԹիւն սրտին
բնաւորականի խառնեալ ունէր ըզ-
հուր սիրոյ յերկիր սերմանողին,
որ և 'ի սիրտս ձեր սառուցեալ կա-
մէր բորբոքել։ Արդ յայդքան չա-
րեաց ձեզ ազատարար և անԹիւ
բարեաց բերող ձեզ աղբերաբար,
այդպէս բազմահնար չարչարանոք
տանջէք անխնայաբար։ Այլ դուք
ոչ գիտէք զինչ գործէք, որպէս և
ոչ խուժանն Հրէից զԱստուածն
բան և զտէր Յիսուս Քրիստոս հա-
նել 'ի խաչ Ճեպողաց։ Եւ որպէս
տէրն որդիաբար առ Հայր աղաչէր.
Հայր, Թո՛ղ սոցա զի ոչ գիտեն զինչ
գործեն. և սա Հայրաբար դԹով 'ի
վերայ մեղուցեալ որդւոցն աղեր-
սէր, և փոխանակ չարեացն զեր-
կնաւոր բարին Հայցէր. ընդ կա-
պանաց ձեռինն բարեգործակ խըն-
դրէր պաղատելով, զի արձակեսցին

կապեալ և կարկամեալ ձեռք Հայաստանեայցն ազգի։ Կազմողք կռոց և զոհարարքք դիւաց և խնկամատոյցք անշուշտ պատկերաց ուսցին առ Աստուած վերամբառնալ. դանդանաւանդս ընկալաւ աստուածաբան բերան նորա, զի մեք անանայեալ բարուք և անիմաստ մտօք իբրեւ զձիս և ջորիս, որոց պարտ էր 'ի սանձս և 'ի դանդանաւանդս ճրմլել զկզակս, և զխստերախս և զապերասան բարսն առ բանատուն և ստեղծիչն դարձուցանել։

Արդ զմերն արժանեաց կիրս յինքն կրելով բարեգութ Հայրն զչարահատոյցն որդեաց, զի զմեզ յանանական ախտասիրութենէն և 'ի վայրենաբարու օտարութենէն յիմաստութիւնն երկնաւոր ընդ հնազանդութեամբ Հօրն և արարչին՝ դարձուցէ։ Գերարանօք և անրօք ճշնշեալ ճմլեցան կուրծք և սիրտ նորա, որ սուրբն էր արտիւ և աստուածային տեսութեան արժանաւոր. զի արբեացէ զսիրտս մեր 'ի խղճէ չարեաց, և անօթս երկնաւոր գան-

ձուցն արասցէ։ Բեռինս ծանրու-
թեան ալի 'ի վերայ ողին գժուա-
րակիրս և կակծելիս բարձեալ բե-
ռէր, այն որ աղ համեմիչ լինելոց
էր հայաստանեայց. աղիւն ստու-
գութեան և ճշմարտութեան հա-
մեմելոց զանհամութիւն և զնեխու-
թիւն գործոցն՝ 'ի ճաշակս անուշից
փոխարկեսցէ. և արդ այսպէս ամ-
կիրք չարչարանաց նորա խորհրդա-
ւորք են և մեզ փրկականք և ազատ-
արարք և առիթք բարեաց. բայց
զամենայնն յիշել երկարութիւն լի-
նի ճառից. մանաւանդ զի 'ի սուրբ
հարցն պատմութիւնս և նեբրբողա-
կան ճառսն գեղեցկապէս յիշատա-
կեալ է։

Այլ մերս գիտաւորութիւն յա-
ղագս սրբութեան լերինս է, որ
տեղի եղեւ երանամեայ ճգնութե-
սրբոյն և գիր հանգստեան գերեզ-
մանի սուրբ մարմնոյն. վասն որոյ և
'ի սոյն դարձուցից զբանս։ Բազում
լերինք ըստ զանազան պատճառաց
հռչակելի անուամբ յաշխարհի մե-
ծարեալ պատուին. զի նախ յետ

համաշխարհական ջուրցն հեղեղին պատուեցաւ լեառն այրարատեան բարձրակառոյցն Մասիս, տեղի հանգստեան եղեալ տապանին, որ ունէր զխորհուրդ եկեղեցւոյ և եղեւ վերսին ծնող մարդկութեան։ Աբրահամ 'ի լերինն ամուրհացոյց զԻսահակ Աստուծոյ պատարագէր. լեառն Քորէբ հրաշալի տեսլեամբն պատուի, զոր եսես Մովսէս 'ի խորհուրդ կուսին զմորենին վառեալ որ ոչ այրէր. լեառն Սինա երեւմամբն Աստուծոյ մեծարեցաւ. զի անդ տուան Մովսէսի տախտակքն աստուածագիծ. և այժմ տապանակն և որ 'ի նմա գանձեալ օրէնքն 'ի նոյն լերին 'ի ձեռն Երեմիայ մարգարէի պահեալ կայ 'ի փապ վիմին՝ յորում եդ Աստուած զՄովսէս 'ի տուէ ամպով ծածկել և 'ի գիշերի լուսով։ Պատուեցաւ յԱրաբովթ Մովաբու լեառն 'Նաբաւ, զի անդ եղեալ Մովսէսի ցուցեալ նմա Աստուած զերկիրն պարգեւաց, և անդ վախճանեցաւ։ Մեծարեցաւ լեառն Սիոն՝ զի ընտրեաց

զնա Աստուած տեղի՝ յորում էդ
զանուն քաջութեան իւր 'ի նմա.
զնոյն լեառն և Դաւիթ ամրացոյց և
Սողոմոն զտաճարն շինեաց հրաշա-
զան յօրինուածովք. իմաստնա-
յեալն յԱստուծոյ Սաղոմոն 'ի գա-
բաւոնացեալոյ լեառնն հազար եղինս
պատարագ մատոյց Աստուծոյ և
խնդրեաց իմաստութիւն՝ զոր էառ
անհամեմատ մեծութեամբ: Եղիա
'ի գլուխ Կարմեղոս լերինն աղօ-
թէր, և հրով և ջրով տանջեալ
խրատէր զյանցաւորս օրինացն Ա-
ստուծոյ. 'ի նոյն լերին և Եղիսէոս
համանման վարդապետին իւրոյ ա-
ղօթէր. առ որ ինչեալ բանակք եր-
կնաւոր զօրացն, և աղօթիւք մար-
գարէին բացան աչք պատանեկին և
տեսանէր զլեառն լցեալ կառօք և
հեծելօք. և տէրն 'ի բարձրութիւն
լերինն նստեալ ուսուցանէր աշա-
կերտացն զլինն երանութիւնան: Պա-
տուեցաւ լեառն Թաբոր. զի անդ
յայտնեաց տէրն զփառս աստուա-
ծութեան իւրոյ, և զօրինակ հան-
դերձեալ կենացն և զխորհուրդ ե-

կեղեցւոյ անհամեմատ բարձրութեամբ։ Պատուեցաւ Գողգոթա անհամեմատ փառօք, զի անդ տէրն խաչիւ փառաւորեցաւ՝ 'ի վերայ շիրմի նախատեզծ մարդոյն, և ազատեաց զծնունդս նորա։ Շնորհազարդեալ եղեւ լեառնն Զիթենեաց. զի անդ բաշխեաց զշնորհս քահանայութեան տէրն աշակերտաց իւրոց։ Ի Սանիրայ և յԱհերմոնէ ակունքն Յորդանանու բղխեն՝ յորում տէրն մկրտեցաւ, զնոյն մեզ ծնող տուեալ հոգեւոր։ Եւ են բազումք որ ըստ մարմնոյ և ըստ նիւթական հրաշից հռչակելի անուամբ համբաւին. Ոսկի անուանեալ լեառն յԻտալիա, լերինք երկու 'ի Սիկիլիա, Պարթենոս՝ յորմէ գեղք երկու մեծամեծք բղխեն. և Ուռկանոս՝ որոյ միշտ կատարն հրով տոչորի։ Մեծն Լիբանան և Կարմեղոս յԱսորիս. Դիդիմոն 'ի Փռիւգիա. Տաւրոս 'ի Սիւռիա. Անախտորոս 'ի Կապադովկիա. Ոլոմպիոս 'ի Կիպրոս։ Յառաջին Հայս Արգէոս իսկ 'ի մերումս աշխարհի, զի մի

նուազեցուք իւիք քան զաղգ և զաշխարհ 'ի հռչակելեացն կոչմանէ։ Իսկ 'ի յաւուրս յետինս ըստ մարգարէական ձայնին յայտնեալ եղեալ լեառն Սեղուհ, 'ի միջոցս սահմանի երկուց գաւառացն Եկեղեաց և Դարանաղեաց, սեղհական փառաւք հանգոյն հանուրց խորհրդաւոր և մեծապատիւ լերանց. զոր և մեզ արժան է բանիւ բաղդատել, ճառիւ նեբբողել, և զուշակացեալն 'ի սմա ճշմարիտ ճոխութիւն արտայայտել։

Ուրախ լեր լեառն Սեղուհ և խորին խորհրդով խնդա քան զայրարատեանն և բարձրակառոյցն Մասիս. զի անդ տապանն հանգեաւ կազմեալն 'ի Նոյէ փայտեղէն նիւթով. իսկ 'ի քեզ տապանն ապրեցուցիչ Գրիգորիոս, կազմեալ կամացն Հօր գթութեամբ, յորինեալ քրիստոսանման առաքինութեամբ, գեղեցկացեալ Հոգւոյն սրբոյ զօրութեամբ. այն տապան 'ի ջուրցն արկածից զմարմինս մարդկան ապրեցուցանէր և զաղգս դա-

զանաց . իսկ այս կենդանի տա-
պան 'ի հոսանաց մեզաց և կռա-
պաշտութենէ զոգիս բանական
հայաստան ազանց կեցուցանէր .
լինէր սերմն ուղղափառութեան ,
որ է Ճշմարիտ և բարիոք կենդանու-
թիւն : Յայնմ տապանէ իբր 'ի մօր
արգանդէ ծնեալ նահապետին Նոյի
և պատարագ Աստուծոյ մատուցա-
նէր 'ի ցամաքել ջրոյն . իսկ 'ի
յայսմ տապանէ յորդաբուխ բան
'ի քաղցր քարոզէ ծնեալ վերատին
հայաստան ազգ՝ և պատարագ Ա-
ստուծոյ կենդանւոյ և միայն Ճշմար-
տին մատուցանեն, ցամաքեալք յախ-
տից և մաքրեալք 'ի մեղաց : Ուրախ
լեր լեառն գերազանց գերամբարձ
տեղի, ամուրհացոց լերին նմանեալ,
Աբրահամու զենմանն տեղւոյ , յո-
րում զորդին իւր սիրելի պատա-
րագէր Ճշմարիտ սիրոյն , և զնոյն
փոխանակ առնոյր սիրելւոյն և ըզ-
պարգեւատուն պարտական առնէր
աշխարհի : Իսկ 'ի քեզ հայրն հա-
ւատոյ լուսաւորիչն հոգւոց սուրբն
Գ.ր.իգորիոս զծնունդս ոգւոյն զա-

ռաքինութեանց մասունս, և զԺուժ-
կաչութիւն մարմնոյ հոգանիւթ բը-
նութեանն և զմաքրութիւն մտացն
Աստուծոյ նուիրէր. և փոխանակ
առնոյր ժողովուրդ մաքրեալ և կրօ-
նիւք ընտրեալ. և մշանջենաւոր յա-
րատեւութեամբ իբր պարտական
լինել հայցէր՝ պահելանվէպ զնոյն
կնիք հաւատոյ ուղղափառ դաւա-
նութեամբ յՈրդին միածին։ Ու-
րախ լեր լեառն սուրբ, սրբութեան
կայան, սինէական շնորհիւն պա-
տուեալ, այնմ որ եղեւ տեղի տա-
պանակին որ պատեալ նեղքուստ և
արտաքուստ ոսկւով. և 'ի նմա տա-
փերն ոսկի և տախտակք կտակարա-
նացն, յորոյ վերայ քերովբէքն
փառաց հովանի ունէին։ Իսկ դու
առաւել զուարճացիր որ եղեր տե-
ղի ոսկիակազմ տապանակին՝ զուտ
և զուարթուն անձին սրբոյն Գրի-
գորի. որ պատեալ էր սրբութեամբ
'ի նեղքուստ ոգւով և արտաքուստ
մարմնով, և 'ի հինգ զգայութիւնս
մարմնոյն, և նոյնքան զօրութիւն ոգ-
ւոյ գրեալ էին անջնջելի աստուա-

ծային օրինացն պատգամք. և իբր սափոր ոսկի լցեալ էր մանանայիւ աստուածային շնորհացն. և բուրվառ սրտին բուրէր զանուշութիւն խնկոց, որ և 'ի քեզ եդեալ պահեցաւ նշխարք նուիրեալ սուրբ նահատակին. որով և պատուիս յազգաց և յազանց եկեալ 'ի հեռուստ. ըզհոգ քո օրհնեալ 'ի պէտս բժշկութեան ազգայնոցն իբր ընծայս մատուցանեն։ Ուրախ լեր լեառն բարձրագոյն և գլուխ լերանց. զի որպէս մեծն Մովսէս ելեալ յԱրարատ Մովաբու 'ի լեառն Նաբաւ՝ յորում՝ եցոյց նմա Աստուած զերկիրն պարգեւաց, և անդ վախճանեալ պահեցաւ 'ի հրեշտակաց. նմանապէս և մերն Մովսէս նոր ժողովրդեան առաջնորդ քահանայապետն սուրբ Գրիգորիոս՝ յորժամ անցոյց ընդ ծովն մեղաց և հեղձուցիչ կռամոլութեն և բանակեցոյց յերկոտասան առաքելական վրանսն, զերծուցեալ 'ի հեթանոսական անոսիսասէր ուսմանցն. և իւրով չարչարանաքն ա՛ռ մեզ ժառանգութիւն

ընդ սուրբս և երկիր պարգեւաց յաշխարհն կենաց. և ինքն ելեալ 'ի քոյդ բարձրադիտակ բարձունս՝ միշտ նկատէր մուք զնոյն երկիր կեն. դանեաց, և աղօթէր 'ի ծերոյս քա. ղանձաւաց զպահպանութիւն իւրոյ ժողովրդեանն և զարժանաժառանգ լինելն յարկի արդարոցն. և ինքն վախճանեալ հովիւն հսկող դառեալ 'ի հովուաց և պահեալ 'ի հրեղէն զօրաց. և այժմ՝ 'ի քէն բաշխէ մեզ դեղ ախտից մաքրութեան և յոյս թողութեան մեղաց։ Ուրախ լեր լեառն Սեպուհ և ցնծա՛ բարձրա. ցեալ փառաք հանգոյն Սինայի, յո. րում՝ անուն քաջութեան տեառն պատմի. 'ի Դաւթէ ամրացեալ և 'ի Սողոմոնէ հրաշազան տաճարաւն գեղեցկացեալ։ Իսկ դու տեղի ժո. ղովոյ հաւատացելոց բազմութեան՝ քաջ անուամբն որ 'ի քէն պատմի. յորում՝ օրհորդն զարմանալի սըր. բուհին Մանի 'ի քոյդ քարայարկ այրի երկնանման վարուք 'ի մարմնի զանմարմնականացն ցուցանէր ըզ. հանդէս միայնաւոր ժուժկալու.

թեամբ. և քահանայապետն անբիծ մաքրափայլ աղօթիւք պարըսպէր զքոյդ լայնանիստ կայանս, և զփոքրագոյն փառս քո վիմաց յօրինէր խորան խորհրդոյ և տաճար փառաց, անտանելւոյ բնութեանն չափաւոր բնակութիւն. յորում մատուցեալ զանծախապէս պատարագն խնդրէր իւրոյ ժողովրդեանս զՀօրն հաշտութիւն և զՈրդւոյ գթութիւն և զսուրբ Հոգւոյն շնորհաբաշխութիւն. որ և 'ի սոյն տաճար լուսակիր գիմեալ հաւատոյ մանկանց՝ նոյն յուսով հաստատեալ և հաւատով հայցեալ գտանեն զնոյն պարգեւս բարեաց Հօրն միջնորդութեամբ: Ուրախ լեր լեառն Սիոն՝ գովեստի տեղի, երգովք պանծալի. զի որպէս 'ի լեառն Գաբաւոնացւոց Սաղոմոն արքայ ողջակէզս և պատարագս Աստուծոյ մատոյց և խնդրեաց իմաստութիւն, որով և զթագաւորութիւնն ուղղեսցէ և զԺողովուրդ տեառն հովուեսցէ, զոր էառ անհամեմատ մեծութեամբ. նոյն և 'ի քեզ արքայա-

կերպն Գրիգորիոս արքայութեանն
տեսողն և քարոզ՝ 'ի քեզ բարձրա-
ցեալ զբանական պատարագս և
զպատուղ շրթանց և մարմին մաքուր
տեառն Աստուծոյ ողջակիզեալ, և
խնդրեր վերին իմաստութեանն ճըշ-
մարտին և կատարելոյն լինել իմա-
ցող. 'ի հայրենի տեղանն բաժան-
ման բանին ըստ աւետեաց խոստ-
մանն, որ և եհաս անհամեմատ ճո-
խութեամբ. եղեալ 'ի հայելոյս և
ժամանեալ 'ի դէմ յանդիմանն, և
'ի փոքրագունէս 'ի մեծ գիտու-
թիւն. և այժմ հովուէ զժողովուրդ
իւր յիմաստս աստուածատուր քաղ-
ցրուացց վարդապետութիւնքն՝ լու-
սաւորել։ Ուրախ լեր լեառն Սե-
պուհ կատարեալ և բարերջանիկ
Կարմեղոս լերինն համանման, յո-
րոյ գլուխ Եղիաս եղեալ ապօթէր.
և հրով և երաշտութեամբ տան-
ջէր զյանցաւորս օրինացն Աստու-
ծոյ. և ինքն սարեփթացոյ այրոյն
լիութիւն հացի և իւղոյ 'ի տանէն
ողբերացուցանէր։ Իսկ 'ի քեզ
հանդուներատիպ Եղիայի մարգա-

ուէաշնորհ և առաքելասպասիւ հայ-
ոյն մեր Գրիգորիոս, այն որ հրով
հոգւոյն զբանակս դիւացն հալա-
ծէր և սաստիկ պատուհասիւ զյան-
ցաւորս աստուածային օրինացն
խրատէր, և զօծումն աստուածային
եղոյն և յերկնից ինչեալ հացին յե-
կեղեցիս հայաստանեայց աղբերա-
ցուցանէր։ Եւ որպէս Եղիսէոս հա-
մանման վարդապետին իւրոյ հրա-
շագործէր, և զբանակս երկնաւո-
րացն առ ինքն ինչեալ տեսանէր. որ
և աղօթիւք բացեալ զաչս պատա-
նեկին, և զլեառն հրեղէն կառօք և
հեծելօք լցեալ ցուցանէր. նմանա-
պէս և սուրբն Գրիգորիոս աղօթիւք
ընչասպասեաց զքեզ, ո՛վ աստուա-
ծաբնակ լեառն, և զօրս անմարմին
սրովբէից՝ սրովբէն մարմնաւոր 'ի
բարձրութենէն երկնից 'ի խորա-
ձորս քո ինչուցանէր, զոր առա-
քեաց Աստուած 'ի պատիւ նմա.
գալ տեսանել զանտանելի ճգնու-
թիւնն և պատմել հրաբուն զօրացն
զսկայր ընդութեանն մարմնոյ զարիա-
կան ճգնութիւնն։ Տէրն 'ի լերինն

ուսուցանէր զաշակերտան և 'ի
լեառնն աղօթէր. և հաւատարիմն
տեառն զնոյն նմանութիւն յանձն
իւր ցուցանէր. յետ ամենայնի 'ի
բարձրութիւն լերինն ելեալ՝ աղօ-
թից և ճգնութեան պարապեալ։
Ուրախ լեր լեառն գովեալ գոհու-
թեան տեղի, Գողգոթայ մեծա-
փառութեամբն բարգաւաճեալ.
յորում՝ ելեալ տէրն բարձրանայր
յետ անօրէնութեանն ամենայնի՝
խաչիւ կատարեալ զմերն փրկու-
թիւն. և գոհանայր զՀօրէ որ առա-
քեաց զմիածինն 'ի փրկութիւն, և
Որդի սիրով կատարեաց 'ի գագա-
թան տեղւոջ Գողգոթայ։ Իսկ 'ի
քեզ պատուեալ լեառն և գովելի
գագաթն՝ հայրն հրաշափառ 'ի Հօ-
րէ զարդարեալ և որդին հարազատ
առաքեալ յՈրդւոյ և հոգւով հան-
ճարեղն ընտրեալ 'ի Հոգւոյ Գրիգո-
րիոս ամենագով վկայն՝ յետ կատա-
րելոյ զամենայն բարութիւնս զան-
տանելի չարչարանացն զհանդէս,
բազմաբան վարդապետութեամբն
լուսաւորել զհիւսիսաբնակ աշխարհս

և հաստատելոյ յեկեղեցւոյ հայաստանեայց , Ելեալ՝ի քեզ գոհանայը զՀօրէ , օրհնելով զՈրդի և փառաւորել զամենասուրբ Հոգին , որ նովաւ հրաշագործեաց զմեծամեծս և զհրաշակերտս . և կանգնեաց զփրկական նշան խաչին 'ի նշանաւոր տեղիս . և ամրակուռ զինուք պարփակեաց զձորոց և զքարանց բազմութիւն . որ և զէնն արքայական զսպանմանն գործի կենաց արքային յօրինէր 'ի կենաց գործիս . և կայ այժմ 'ի պահեստի 'ի քեզ , ով բարեբախտ և ամենագով Սեպուհ , սրբութեան տեղի և սրբասէր արանց սիրելի : Ուրախ լեր լեառն Սեպուհ, շնորհընկալ և պարգեւաշատ . բարեբաշխ լերիցն Զիթենեաց քաստակեալ . զի որպէս անդ տէրն 'ի համբառնալն օրհնեաց զաշակերտան , և եւ նոցա շնորհս քահանայապետութեան , և ինքն յիւր սեպհական փառան վերացաւ . այսպէս և 'ի քեզ տիսն տիրական արժանապատիւ քահանայապետն Գրիգորիոս իւրովք ձեռօք յօրինեաց զփայտա-

կերա խորանն սուրբ յանուն արե-
գականն արդարութեան արուսե-
կին և կարապետին Յովհաննու . և
'ի նոյն տաճարի եւ զչնորհս քա-
հանայապետութեան որդւոյ Իւրոյ
Ռատակիսի , յանձն առնլով նմա ըզ-
բանաւոր հօտն , և ինքն միայն հրեշ-
տակակրօն վարուց պարապէր : Ու-
րախ լեր լեառն սուրբ գեղապանծ
լուսոյն զուարճացեալ , և ցնծա 'ի
տիպ Սանիրայ և Ահերմոնի . յորմէ
ակունքն Յորդանանու բղխեն՝ յո-
րում՝ և տէրն մկրտեցաւ . և եւ մեզ
վերատին ծնունդ և հոգեւոր լու-
սաւորութիւն : Իսկ 'ի քէն աղբերք
երկու բղխեն ընդ այլ բազմաբուխ
վտակս ջուրց . աղբիւրն լուսոյ՝ և
ջուրն բարեհամ . և որպէս ջուրն
Սելոամայ ունելով մերկ յինքն ըզ-
մաքուր մարմինն Եսայեայ սուրբ
մարգարէին՝ յորմէ լինէր բժշկու-
թիւն ախտից . իսկ 'ի քէն բղխեալ
աղբիւր ջրոյն , տարածեալ աղօթք
սուրբ Լուսաւորչին շուրջանակի և
մերձ առ նմին հանգուցեալ 'ի բազ-
մավաստակ ճգնութեանցն . յորմէ

զօրացեալ ջրոյն բնութիւն շնորհեաց
տեսութիւն կուրին, և այժմ Լու-
սոյ անուամբն վերաձայնի. և հան-
գոյն մեծին Մովսէսի, որ զդառնու-
նութիւն ջուրցն Մեռայի քաղցրա-
ցոյց խաչին խորհրդով, 'ի նոյն նմա-
նութիւն 'ի ձեռն սուրբ Լուսաւոր-
չին խաչակնիք նշանաւ գրոշմեալ
միւս աղբերն, յաղտաղտուկ բնու-
թենէն բարեհամ և ախորժելի փո-
խարկիւր. որ և նոյն անուամբն ձայ-
նի։ Ուրախ լեր լեառն հրաշալի,
մարգարէական հոգւոյն ցանկալի,
որ և հայցէր զվայր քո ըղձալի. Տէր
ո՞վ կացցէ 'ի խորանի քում կամ ո՞
բնակեսցէ 'ի լեառն սուրբ քո. և
առեալ հոգւոյնն պատասխանի, որ
և 'ի վերջին ժամանակիս տեսեալ
եղեւ աչօք զգալի. յորում եղեալ
սուրբն Գրիգորիոս անբիծն վարուք,
արդարն հոգւով, ճշմարտասաս-
տուամ և լուսափայլն բանիւ, ան-
նեղնդն և սուրբն սրտիւ, որ ոչ հա-
տոյց ջար փոխանակ ընկերի իւրում։
վասն որոյ ոչ նախատի 'ի մերձաւո-
ցաց, յամենայնի փառաւորեալն և

երկիւղածաց տեառն փառաւորիչն. որ զարծաթ տեառն իւրոյ ո՛չ ծրա-
րեալ թագոյց, այլ արկ 'ի սեղա-
նաւորն. զայս և յոլովս քան զայս
գործեալ և անսասան ոտամբ 'ի քեզ
կատարեալ, և զքեզ մեզ տեղն ուխ-
տից և խնդրուածոց պարգեւեալ։
Ուրախ լեր այրդ լուսապայծառ
քարայարկ և առաքինաբնակ տուն
տենչալի, քան զթագաւորաբնակ
ոսկեզօծ տաճարս զարմանալի, 'ի
Բեդղեէմի խորհրդոյն ընտրեալ.
յորում պարծանքն կուսից մայրն
մարմնացելոյ Բանին ծնաւ մաքուր
կուսութեամբ զանճառաբար ծը-
նունդն Հօր, և հրաւիրեաց զդրա-
տերս Եւայի լինել կուսութեամբ 'ի
մայր Քրիստոսի. զոր և տէրն աս-
տուածային բանիւն ստուգեաց. Որ
արասցէ զկամս իմ, նա է մայր իմ
եղբայր և քոյր։ Ընտ որում և 'ի
քեզ ծաղկեաց խորհուրդն պայ-
ծառ, յայս յոյս հրաւիրեալն
և վեհագոյն վիճակի հասեալն,
զտեալն մտօք, հեղն հոգւով, մա-
քուրն մարմնով սուրբն Մանի, իբր

զլոյս յարեւմտից ցոլացեալ, բարձ-
րագոյն բարեաց ցանկացողն, ընդ
բազում լերամբք և ձորոք անցեալ
'ի քեզ բարձրանայր. զքեզ յարկ
ծածկութի և տուն հանգստեան
իւր ընտրէր. և ինքն զկամն Աստու-
ծոյ հանգուցանելով միշտ զվերին
հանգիստն դիտելով, և կատար-
մամբն 'ի քեզ փոխէր հոգւով առ
որ ցանկացեալն էր. և զմարմինն
պարկեշտ և պատկառելի՝ ամփոփէր
սուրբ քահանայապետն Գրիգո-
րիոս. որ և այժմ հաւատով գիմե-
լոցս հանգիստ հայցէ հոգւոց և
մարմնոց և յոյս թողութեան պար-
տաւորելոց։ Այլ՝ով լեառն ամեն-
ունակ բարութեամբ լցեալ, ճշմա-
րիտ ճգնողին ճեմարան, հեզագոյն
հօրն հանգստարան, երջանիկ ան-
ձինն օթեւան, մաքուր ոտիցն կայա-
րան, սուրբ ձեռինն տարածման
տեղի, աշխատեալ վաստակաւորին
աթոռ, երկնից դիտողին կառք,
քրանաչան մշակին անդաստան, ա-
ռաքինութեան հասկիցն կալ, պա-
րարտ ցորենոյն շտեմարան, պա-

ուսական ոսկւոյն ընդունակ, ան-
դիւտ մարդարտին տեղն ծածկու-
թիւն։

Վասն որոյ 'ի քեզ հաւաքին հա-
ւատացելոց անձինք, լաւ համարեալ
զմիօրեայ բնակելն 'ի քեզ քան զը-
հազարս յարկս թագաւորաց. 'ի
խորաձորս քո՝ ձայնս աղօթից արձա-
կեն. 'ի քարածերպս՝ քաւութիւն
յանցանաց հայցեն. յաղբիւրս՝ կա-
թիլս արտասուաց ի՛ջուցանեն. 'ի
խորս անապատի՝ խոստովանութի-
դիմեն։ Եւ երանի՜ թէ ըստ արժա-
նեացն մատչէաք կամ որպէս սի-
րեան լինէաք. քանզի նախ պարտ էր
ըստ ժողովրդեանն Իսրայելի երեք
աւուրբք սրբիլ, և յամենայն մարմ-
նական ախտից մաքրիլ, և 'ի կերա-
կրոց անգամ անսուաղանալ, զի մի
զանպիտանութիւնս աւելորդացն 'ի
քեզ բերին. քանզի ո՛չ է պարտ
զանուշահոտ քո զվայր զաղբացու-
ցանել, զկենդանութիւնս քո քարինս
աղտեղացուցանել. զանտուաղու-
թեանտեղիդ արբեցութեամբ ձանձ-
րացուցանել. այլ նախ առ ատրս-

տով լերինդ մաքրիլ և ապա 'ի քոյդ բարձրութիւն ելանել։ Բայց քան-զի սակաւ է մարմնոյ բնութիւն. և սակաւք ոմանք են որ իմանան հոգ-ւով զպատիւ քո գերագոյն, և բա-զումք այնք որ մարմնով ըստ մար-մնոյ խորհին. այլ սակայն գթած է հայրն մեր գորովագութ և հայցէ ներումն ընդ սխալանաց, ընկալ և և գու հիւրութեամբ և արձակեա խաղաղութեամբ։

Ուրախ լեր գեղով գեղեցիկ եր-կիր ցանկալի, Դարանաղեաց գա-ւառ գովելի, լերամբք ծաղկաւէտ, ձորովք ջրաբուխ, եղեմաբուխ աղբերն Եփրատայ յորդառատ գե-տոյն ընդունակ, որ և 'ի քեզ հրաշս պատմի կաթուածս ջրոյ յանձաւս քարի 'ի ժամանակս տօթաժամու ամառնային յեղանակին. յորում թանձրութիւնն ձեան բարձրայօն լերանցն սպառին և սառնամանեաց պնդութիւն հալին. յայնմ ժամու կաթուածք ջրոյն դիզեալ 'ի վերայ միմեանց քարացեալ պաղին. որ և յառաջին աւուրսն բազմօրեայ ձա-

նապարհ 'ի պէտս թագաւորաց յա-
զագս առողջային և բժշկական զօ-
րութեանն տարեալ լինէր . և դար-
ձեալ յորժամ ամենայն ջրոց բնու-
թիւն պնդեալ պաղն 'ի ձմեռնային
յեղանակս , իսկ նա թուլացեալ
ջերմանայ : Այլ և 'ի ծործորս քո
լերանց 'ի նեղքոյ երկրի աղբիւրս
աղն դարանացեալ ունիս . և 'ի խո-
րութենէն 'ի վեր եկեալ 'ի ջերմու-
թենէ արեգական զնաւնեալ ջուր-
սն առանց աղն ծծէ հրոյն զօրու-
թիւն , և յատակեալ պարզն աղն
համեմիչ և անուշահոտ . որով և
Դարան աղն կոչիս յայսմ նեղգոր-
ծութենէ , զոր ընծայես բազում
գաւառաց . և ոչ այս միայն է քո
գովութիւն զգալն և մարմնական իրն ,
և կամ՝ ոգեղ միայն կոչիս գովելի
գաւառ և երկիր ցանկալի . այլ գո-
վելի ես՝ զի գաւառ եղեր բնակու-
թեան արքայն Գրիգորի . և երկիր
ցանկալի՝ զի ցանկալին վերնոց 'ի
քեզ շրջէր և 'ի քեզ եդեալ պա-
հեցաւ . որ և յերիս տեղիս 'ի քեզ
կազմեալ շինեցաւ շիրիմ հանգըս-

տարանի, և սուրբ մարմնոյն նշխա-
րաց տեղի և տասան գերեզմանի.
Նա իսկ է փառքն քո պանծալի,
բարձրագոյն լերանց քոց բարեբոյս
ծաղիկն. խորութեան ձորոց քոց
աղբերաբուխ վտակն աղօթից. գե-
ղեցկածաւալ գեան եդեմաբուխ,
հոգեւոր ազն համեմիչ ոգւոց. 'ի
տօթային և 'ի կիզող ժամու բժշկա-
կան և զովացուցիչ ջուրն. 'ի դառն
և 'ի կսկծաբեր ձմերուն ջերմն և
Ճառագայթաւէտ հնչումն. այս է
գեղեցկութիւնն քո գովելի և սքա-
սանն որով զարդարիս, յոքունց
գաւառաց գերագոյն գտեալ:

Ուրախ լերուք ազգք և ազինք
հայաստանեայց'ի հսկայազօրն Հայ-
կայ անուամբ հռչակեալք, ոլք 'ի
մահաբեր և յանբերելի ցաւոց՝ հի-
ւանդութեանց հոգւոց յարուեստ-
ական և քաջահմուտ բժշկի գե-
ղոց ողջացայք. յանթառամ ծաղ-
կանց կազմածոյ՝ քաղցրախօս խրա-
տու վարդապետութեանցն փարա-
տեցայք: Որ քաւիչ քահանայապե-
տին մաքուր մաղթանօք 'ի մահու

արդելայք, մովսէսաբար հայցմամբ աղօթիցն 'ի մեղաց պարտեաց զերծայք. արեամբ և ինկով և Ահարոնիւ նորով ընդ հօր հաշտեցայք, արեամբ չարչարանաց հեղման նահատակին Քրիստոսի արբոյն Գրիգորի, և գառնին Աստուծոյ մեղաց բարձողի, և ինկով աղօթիցն անուշահոտից, ծերունականաւ և ոսկեղէն բուրվառաւ, և պարտաւորացն ազատարարաւ։ Որք յամօթալի մերկութեանցն յարժանաւոր ձեռաց՝ փրկութեան հանդերձ զՔրիստոս զգեցայք. և վերատին երկնելոյն հոգւոց ծնողին նկար կերպարանի զՔրիստոս ընկալայք. 'ի զորագլխէն հաւատոց 'ի նահատակութիւն մարտի ապառազինեցայք։

Ուրախ լեր եկեղեցի Հայաստանեաց, յամենիմաստ և հանճարեղ ճարտարապետէ նորոյ Բեսէլիէլէ կազմեալ, յիմաստութեանն հօր բանի հիմանն շինեալ, 'ի յամրութեան հաւատոյ վէմն կառուցեալ, վաստակօք և քրտամբք ճգնազգեաց հօրն հաւաքեալ. գերահրաշ բանի

սրբոյն Գրիգորի լուսաւոր վարդապետութեամբն ծնեալ, զօրապլխին հզօրի զինուորք յարդարեալք, ժրաջան մշակին տունկք արմատացեալք, զգայական գլխոյն անդամք յօրինեալ, բոլոր եկեղեցւոյ լամամբ զարդարողին ձեռամբ 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։ Ուրախ լերուք քահանայական գլուխք և պեսք, և վերատեսուչք հօտին Քրիստոսի, որք վիճակի առաքելանման հօրն եղէք Թառանդորդ, և հոգեւորական իշխանութեանցն աթոռոյ և խրատանցն վերադիտողք։ Ընտրեալ հօտին և դառանցն աւազանածին հովիւք արածողք. աշխատաւոր և ժրաջան մշակին կենդանի անկոցն տածողք և աննդապուրծողք, և ցանկոյ ամրութեանն պահապանք և խրամակարկառք. որք գեղեցկութեան հարսին եկեղեցւոյ էք զարդարիչ և զգեցուցանողք, հրեշտակք հաշտութեամբ քահանայապետք քաւութեան։

Եւ արդ կամիմ սատանօր զե-

բաժշտականացն բերել նմանութիւն
արուեստի. երբեմն զուրախականն
հնչել նուագ, և տրամադրել ըղ-
լխոյն 'ի զուարճական խնդութիւն,
և երբեմն զողբերգականն շարժել
մտան, յաղէտս և յողբս արտա-
սուաց ածել. վասն որոյ և դարձեալ
ասեմ: Ողբա՛ աշխարհ և ազգ Հայ-
աստանեայց, որ երբեմն համանման
երկնի լուսապայծառ աստեղք լը-
ցեալ, այսօր նսեմացեալ կրկին խա-
ւարաւ, մեղաց ասեմ և նեղչացն՝
ամպովք ծածկեալ: Ողբ յիմաս-
տուն անկագործէն իբրեւ զդրախտ
փափկութեան ծաղկազարդեցայք,
այսօր իբր դաշտ ապականութեան
տգեղացեալ տխրութեամբ կայք և
անզարդեալ. զի սեպհական գա-
ւառք հայրենի յօտարաբնակաց ազ-
գաց տիրեցան. և գաւազանք մեղա-
ւորաց 'ի վիճակս արդարոց մտին.
վասն զի արդարք զձեռս իւրեանց
յանիրաւութեան գործս ձգեցին:
Ի բազմամեայ և յերկար հիւան-
դութեանց առողջացայք, և այժմ
'ի գժնդակ՝ հիւանդութեանց կայք

'ի տարակուսի՝ անայցելու 'ի բժըշ-
կական դարմանոցաց : Մինչդեռ
թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ
Աստուծոյ քրիստոսանման քահա-
նայապետիւն . և այժմ սիրելիք
օտարացեալք 'ի դրկաց մօրն և գը-
թութեանց հօրն բարերարի ըստ
դրեցելոցն . Օտար եղեն մեղաւորք
'ի մօրէ , զի խաբեցան յարգանդէ և
խոսեցան սուտ : Մինչդեռ յանցա-
ւորքն էաք , 'ի մեղացն պարտեաց
ազատեցաք աստուածուսոյց օրինա-
դրին մաղթանօք . իսկ յազատու-
թեանն պատուոյ ծառայք վերսին
ախտից եղաք , և ընդ բիւր քանքարոյ
պարտականութիւն դարձեալ մատ-
նեցաք :

Ողբացէք 'ի ծնողական գթոյ
տարամերժեալ մանկունք . զի որբ
մնացաք՝ և ոչ գոյ մեզ հայր , որ
ծերունական առաքինութեանցն
ալեօք 'ի գութ ածէ զերկնաւոր
հայրն , և կամ զանձն անպարտա-
կան 'ի մահ մատնէ՝ փոխանակ մա-
հապարտ որդեաց , կամ զարիւնն
իւր հեղու 'ի գին փրկութեան մե-

րոյ , և կամ քրտամբք մարմնոյ
լուանայ 'ի յախտից նեռկեալ աղ-
տոյ , և կամ զենմամբ զուարակին
մեծի արգելու զպատիժ մահու , և
կամ ինկանուէր աղօթիւք քաւու-
թիւն հայցէ յանցանաց պարտեաց :
Ազգ հայաստանեայց , կրսերագոյն
մանուկ մերոյն Յակովբայ և վեր-
ջածին ծնունդ յազգս և յազինս ,
որ 'ի լուսաւորիչ հօրէն ծաղկերանգ
պատմուճանաւ զարդարեցայք ,
մինչ զի եղբարցն նախանձելի է-
ղայք . այժմ զնա՞ռդ գազանաց չա-
րաց կերակուր մատնեցայք , և պատ-
մուճան զարդուն ձեր արիւնանեռկ
շաղախեալ եղեւ : Եւ Յակովբ հայ-
րն ծերունի չէ 'ի միջի , որ զաղէտս
ողբոցն յարմարէ ասելով . Գազան
չար և անընդել , և գազան չար զոր և
կամիս իմացիս , եթէ զսպանողն
և զգերողն մարմնոյ , և թէ զպա-
տառողն և զհեղձուցանողն հոգ-
ւոյ , զի երկոքումք կամք 'ի վտանգի :
Գրիգորիոս երկնաւոր հօրն պատ-
կեր և ծնողական գթոյն կերպա-
րան՝ խօսեացիս առ քո մեղուցեալ

որդեակքս, որ զմաքուր և զանախտ
ծննդեանն զդեստ մերկացաք՝ ասե-
լով. Որդեակք իմ զորս դարձեալ
վերատին երկնեմ, մինչեւ նկարեա-
ցի Քրիստոս 'ի ձեզ. զի ոչ զոք ու-
նիմք որ գթով դորովոյ դարձեալ
խրատեսցէ, և յապաշխարութեան
երկունս ծնցի վերատին։ Ահա ժա-
մանակ մարտի է, գումար հանդիսի,
և քո կազմեալ զինուորքս լքեալք
և տարակուսեալք, զի ոչ գոյ մեզ
զօրագլուխ քաջամարտիկ և բազմա-
հանճար, որ գումարէ զզինուորսն
'ի մարտ ճակատուն։ Ողբա՛ եկե-
ղեցի Հայաստանեայց մայր բազմա-
զաւակ, որ յանագան ժամու և 'ի
տարաժամ հասակի ազգ մի ողջոյն
հրաշիւք հանգոյն Սառայի ծնար.
և այժմ նմանեա Հռաքելի և լաց 'ի
վերայ որդւոց քոց. Հռաքէլ լայր
զորդիս իւր և ոչ կամէր միխիթա-
րել՝ զի ոչ էին. և դու լաց զման-
կունս քո, զի ոչ են, որպէս և
էին. զի 'ի միոյ ծնողէ բազմու-
թիւն անթիւ զաւակաց ծնան, և
այժմ 'ի բազմութեանց հարանց

ոչ զոք ծնանին. և ծնեալոցն ոչ ոք
դասախարակէ զանուանդ օրինացն.
'ի հատէ հատկ վերաբուսալ և 'ի
հատկէ շեղջ յօրինեցալ, և 'ի միոյ
շառաւիղէ ունկեալ որթ արմատա-
ցալ՝ յոգնակի ուռովք ածեցեալ, և
տարածեալ լցեր զամենեսին 'ի ծովէ
մինչեւ 'ի ծով. և այժմ քակեցան
քո ցանկք ամրութեան և կթեն
զքեզ անցաւորք ճանապարհաց,
օտարք և այլազգիք զմարմնական
բարեացն պտուղս, և զայգի քո բա-
նաւոր ապականէ խոզ անտառի. և
կինձ վայրենի արածի 'ի հոգեւոր
սերմանցն ծաղիկ, սատանայ և
դեւքն չարասէրք։ Ի միոյ հովուէ
մեծ հօտ եղեր հովուապետին մե-
ծի. և այժմ 'ի բազում հովուաց
ցրուեալ ճապաղեցար, մոլորականք
և թափառեալք 'ի լերինս, գազա-
նաբեկք և վիրաւորք 'ի գայլոց.
յարօտս ինաստակարս և մահաբերս
ճարակեալ. պակասեալք և ան-
բնակ 'ի դալար վայրէ 'ի սուրբ գրոց
վարդապետութենէ, 'ի հանգստա-
լար ջրոյ անանուանդ, 'ի փարախոյ

ժողովարանէ արտաքոյ. և ոչ գոյ քեզ հովիւ որ կրկին գործեօք հովուէ, ունելով 'ի ձեռին ցուպ և դաւազան, ցպով ընդ դազանն մերանչել և դաւազանաւ զնաչինան ուղղել:

Սատուածային խորան եօթնաջահեան լուսոյն ընդունակ, Լուսաւորիչ հօրն լուսածնունդ որդւովք. զնոսրդ այժմ լուսատու Հրագունք քո նուազեալք յիմաստութեանն ձիթոյ. զօրագլուխք մարտի քո անզէնք 'ի գիտութեանց օրինաց. բըժիշկք կենաց քոց անհմուտք 'ի հանճարոյ. հովիւք հօտի քո հեշտասէրք և փառամոլք. մանկունք ուսման քո սրամտողք և ընդդիմացեալք խրատու. և ոչ ախորժեն լսել զձայն թովչի Հարտարի և ոչ ընդունին դեղ 'ի դեղատուէ իմաստնոյ. մանաւանդ թէ դեղատուք են կարօտ դեղոյ բժշկականի. և թէ ոք ուրեք զայն նոցա մատուցանէ՝ ատեն և թշնամանեն. և թէպէտ ըստ այսմ ամենայնի ողբոց ես արժանի. և զի զմարմնական Հոխու-

թիւնս քո օտարք վտարեցին, և մանկունք ուխտի քո 'ի գերութիւն վարեցան, և զուարճալի զարդ քո կողոպտեցաւ, և անճառելի խորհուրդն գնոջ այսօր վաճառի, և երկնաւորն աշխիճան յերկրասիրացն յափշտակի։ Այլ 'ի մեծն և 'ի գլխաւորական բարին երանելի ես և յոյժ խնդալի. վասն զի ուղղափառ հաւատոյ լոյս ոչ նուազեցաւ. 'ի բարի սերմանս ցորենոյն որոմն ապականիչ ոչ խառնեցաւ. զաղբեր յատակ աւանդութեանցն քոց՝ ալոտալուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց. 'ի ատուգութեան և ճշմարտութեան հացն քո կենդանական՝ մեռելական խմոր, և հերձուած քացախութեան չարութեանն ոչ զանգեցաւ. յոսկի անբիծ հաւատոյն և յարծաթ՝ լուսատեսիլ բանին՝ պղինձ ժանտահոտ և կապար սեւաթիւր ոչ գտաւ. և այսքիկ խնդրուածովք մեծ նահատակին Գրիգորի սրբոյն Գրիգորի քեզ շնորհեցաւ. որ է գլուխ ամենայն բարեաց և հիմն կենաց

յաւիտենականաց։ Վասն որոյ և դուք քահանայապետք և գլուխք եկեղեցւոյ ուրախ լերուք ցնծութիւն և սուսկացէք երկիւղիւ և յոյժ դողութեամբ. զի որք գլուխ էք վերամբարձ և երկնահանդէս, մի գուցէ զօրէն խողից գետնաքարշ և մոխրաթաւալ լինիցիք, զերկրաւորս եւեթ խորհելով։ Եւ որք վիճակաց քաղաքաց և գաւառաց էք վերակացուք, մի՛ լինիցիք դէտք անզգոյշք, հեղգութեամբ և կամ ընդ քնով անկեալ. զի տեսանելով զեկեալ սուր պատուհասին Աստուծոյ և ոչ բողոքիցէք, և գտանիցիք արեան պարտականք մարդկան 'ի մահ մատնելոց. աթոռակալք արդար իրաւանց մի յուսայք յանիրաւութիւն, և մի ցանկայք յափշտակութեան. և որք զերկնաւորն ունիք մեծութիւն, մի յոժարեսցին սիրտք ձեր մարմնական և ունայն մեծութեան։ Առաջնորդք երկնաւոր ճանապարհին և արածողք Քրիստոսի հօտին և մեծագին գառանց, զոր միածինն միայնոյ Հօր՝

արեամբ և մահու ժառանգեաց՝
զհնգեռասանամեայ չարչարանօք
մեր Լուսաւորչին ստացեալ սեպ-
հական ժողովուրդ, և ձեզ ձրի և
անգին տուեալ՝ի ժառանգութիւն:
Մի՛ մոլորեցուցանէք՝ի լերինս և
յանկոխ ճանապարհ, և մի մատնէք
գայլոց և գազանաց, զոր հովիւն
քաջ՝ի վերայ ուսոյ եբարձ, և՝ի
վերս տարաւ յերկինս և ընդ ան-
մոլարս խառնեաց թիւ: Մի՛ լինիք
նմանողք վարձկանացն՝ի մարմին
սերմանողաց և զհոգիս խաշանց բա-
նաւորաց անտես առնողաց. մի
անխնամ անգութ և անայցելու
խոցելոցն վերաւորաց լինիցիք. վասն
որոյ Քրիստոս զխոցումն և զվերս
յանձն առնու: Մի՛ զօրագլուխք
անզարմաբարք և անագորոյնք ըզ-
փառացն անուն սիրելով և զզօրան
՝ի տագնապ տարակուսանաց մատ-
նելով: Նաւասաւք եկեղեցւոյ նա-
ւի, մի՝ի կենցաղոյս ամբոխեալ ծո-
վու տայք զնաւ եկեղեցւոյ յալեկո-
ծութիւն, և՝ի խռովութիւն հողմ-
մոց. զի մի ընկղմելով զորս յանձն

առէք հանել 'ի հեղձական ծովէ՝ կորուսանողք անձանց անմեղաց լինիցիք։ Որք աստուածային այգւոյն բանաւոր և երկնաւոր անկոցն տընկագործ և պահապան կարգեցայք, և 'ի սրտոց այգւոյն Ճաշակէք, և ակն ունիք դահեկանի վարձուն յամենաբարի տեառնէն, մի տայք թոյլ գազանին՝ ապականել զաստուածային այգին, զքաջաբեր ուռան յորմն Ճշմարիտ արմատացեալ. մի շարժէք զպատուար զգուշութեան պատուիրանացն Աստուծոյ. մի կոխէք զկարգ կանոնաց աստուածահաստատ ուխտին հաւատոյ. մի քակէք զցանկ ամրութեան հայրենադիր աւանդիցն, զի մի հարցիք յօձէ չարաթիւն և անբուժելի։ Բժիշկք բանաւորք և վերակացուք հոգւոց, որք զաստուածականն ունիք բժշկարան, մի անգութ անգրոյով առ խածեալսն 'ի կամակոր օձէն և 'ի բնական և յանբնական ցաւոք պաշարեալսն լինիցիք. մի ողջակացուցէք չարեաց և ոչ փարատիչք ցաւոց։ Աստուածայինն Պաւղոս

գրէ ձեզ և ամենայն հաւատացելոց խրատ և ասէ. Յիշեցէք զառաջնորդս ձեր, որք խօսեցան ընդ ձեզ զբանն Աստուծոյ. և հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղէք հաւատոցն։ Արդ դուք յիշեցէք զառաջնորդն կենաց և փրկութեան ձերոյ, և զմտաւ ածէք զանտանելի չարչարանս աստուածագուրթ հօրն և հոգւոց լուսաւորչին և Ճգնաւոր նահատակին Քրիստոսի սրբոյն Գրիգորի. և մի՛ մոռանայք զզարմացուցիչն երկնաւոր զօրացն, զկիրս նորա հողանիւթ մարմնոյն. պատկառեցէք յայնպիսի սոսկալի նորա խատամբեր վարուցն. որ և այժմ զարեան քրտանցն և զցօղով անուցեալ արտասուացն զսերմանեալ հաւատոցն անդաստանի պըտուղ վայելէք։ Արդ հայեցարուք յելս գնացից նորա, թէ որպէս եկաց յաշխարհի և կամ ո՞րպիսիք էին ելք գնացից նորա. զի այն է դուռն ոչխարաց հովուութեանն՝ ընդ որ նա եմուտ. չարչարանօք ստացաւ իւր ժողովուրդ, քերանօք

ոսկերաց մարմնոյն և կողնոյն հոս-
ման արեան շինեաց զաղգս զայս ե-
կեղեցի Աստուծոյ. որպէս և տէրն
իւրով կողակայլակ արեամբն զաղգ
և զաշխարհ ամենայն. հրոյ տոչորը-
մամբ խորովեցաւ 'ի վերայ իւրոց
դեղեցիկ գառանցն. անհնարին
տանջանօք կայր 'ի կախազանի, և
աղօթէր վասն իւր հաւատացեալ
հօտին. 'ի գուբ խաւարին և 'ի մէջ
չարութեան օձից կայր զամս երեք-
տասան, յաղագս 'ի գուբ մեղացն
և 'ի հարուածս օձին և 'ի մէջ թիւ-
նալի ախտից մեր ընկղմելոյն։ Այս
է գուռն հոգեւորական հովուու-
թեանն, և որ ոչ մտանէ ընդ այս
գուռն, գող է և աւազակ. այս է
օրինակ՝ որով սեպհական լինի ժա-
ռանգութիւնն և ոչ ազգակցութիւն
արեանն՝ որով տիրեն Քրիստոսի
հօտին. այս են գինք գառանց
Քրիստոսի և ոչ բազմութիւն ար-
ծաթոյ. զի խոտեացին այնոքիկ ոչք
ընտրեալ են արծաթով։ Արդ որ
այսպէս եմուտ ընդ գուռն ոչխա-
րաց, հայեցարուք և յելս գնացիցն

և զարմացարուք. զի յետ ատանա-
լոյն իւր Ժողովուրդ, յետ 'ի քա-
հանայապետականն բարձրանալոյ
յաթոռ հրաժարեալ յաշխարհէ,
յանապատ վայրս և յանբնակս հե-
ռանայր. օտարանայր 'ի պատուոյ,
փախստական լինէր 'ի փառաց, Ա-
տուծոյ լինէր խօսակից, հրեշտա-
կացն երգակցութեանց կցորդ, ընդ
սրբասաց սրովբէան սրբաբանող։

Արդ նմանողք եղերուք դթած
հովուին, որպէս և նա իւրում
տեառն և Քրիստոսին. և զօրինակ
ճգնող նահատակին յանձինս ձեր
ստացարուք, բերկ և 'ի ձերում
հոգիսդ զհաւատարութիւն այնպիսի
հաւատոյ. չարչարեցարուք և դուք
ոչ 'ի բռնաւորաց՝ այլ 'ի կամաւոր
բարուց. մի՛ ինչ խափան լիցի հո-
վուէլոյ զաստուածային հօան, ոչ
սպառնալիք սրոյ, ոչ վիշտք մար-
մնոյ, ոչ արկածք փորձութեան, ոչ
բերմունք ժամանակի։ Մանաւանդ
զի ոչ գոյ այժմ չարչարանք բռնա-
ւորաց և ոչ պատերազմ հերձուա-
ծողաց, այլ փառք և պատիւ. զի

հայրն հաւատոց կրեաց զչարչարանս և զվաստակս, և դուք վայելէք 'ի պտուղսն, և զարդարեալ շքեղացեալք յաստուածային խորանն 'ի մէջ ժողովրդեանն յաստուածագործ քահանայութեանն։

Այլ դու ո՛վ աստուածային և քահանայական դլուխ, վասն զի ընդ քեզ իբրեւ ընդ Ճշմարիտ կենդանւոյ խօսիմ, զաստուածային և զանմահական զգեցեալ զկեանս. ո՛վ քահանայապետ սուրբ՝ վերնոյն և հրեշտակական քահանայութեն կարգակից. յանմահ սեղանն մեր Յիսուս պատարագող՝ զառաքինութեանն քո պատարագ, որով և հայրն երկնաւոր զուարճանայ. ադամային բնութես ըստ պատկերի եղելոյ Ճշմարիտ կերպարանին ցուցող անխառն և պարզ մաքրութիւն։ Ամենայն սրբոցն 'ի բնութենէս ընտրելոց նկարագիր պատկերի գեղեցկութեան՝ բոլորիցն աքանչելի տեսութեամբ, Ճոխութեան վարուց պայծառութեամբ, հրաշալի յերկուցն միաւորութեամբ, բարձ-

ըագոյն գործովք և անհպելի, նուաստ խորհրդովք և հեզահոգի. անբարկանալի բարուք, վշտակից սրտիւ, հեշտալուր և ախորժելի բանիւք, հրեշտակական դիմօք. ամենայն աշխարհի և ազգի և հասակի և ատաձանի բարեգործական աղբիւր, կուսական կրօնից փեսաւէր փառաւոր։ Ամուսնութեան կարգաց խրատ ողջախոհութեան. յանապատական վարս թռուցիչ երկնահաս. քաղաքական վարուց օրինադիր ստուգութեան. պարզամիտ բարուց ուսուցիչ քաղցրաբան. տեսական իմաստից խորաքննին ստուգաբան. ճոխապատիւ ի՛շխանաց սանձք արգելման. թշուառացեալ ողբատաց մխիթարիչ սփոփանաց. ծերուհական աչեաց ցուպ հաստատուն. մանկական տիոց դաստիարակ զգաստութեան. աղքատութեամբ ցակամելոց փարթամութիւն փառաց. ճոխութեամբ բարգաւաճից՝ յաստուածայինն ամբարող գանձու։ Այրեաց վերակացու, որբոց հայր հաւատարա-

գութ. հիւանդաց բժիշկ յերկոցունց ցաւոց՝ հոգեկանին և մարմնականին. առողջութեան պահպան յուղղութեան հաւատոց և առաքինութեան գործոց. պահոց և աղօթից ժուժկալութեամբ՝ անմարմնոց և անարեանց աղգակից. սաղմոսերգութեան հնչմամբ անշնչանելի ըստ հրեղինացն հոգւոց. արթնական սքնութեամբ քաջապինդ և անպարտելի ըստ հոգեղէն զուարթնոցն:

Ո՛վ աստուածամերձ և աստուածազգեաց անձն, հայեացիս գթութեամբ և սիրով յազգս և յեկեղեցիս, զոր դու ընծայեցեր Աստուծոյ. ոչք քո ճգնութեամբդ տուան Աստուծոյ մրցանակ մարտի և յաղթանակ նահատակութեան. և հայցեացես զերկնաւորն խաղաղութիւն, և 'ի փորձական կենցաղոյս ծովու զանգորրութիւն. և յընթացս բարեաց ճանապարհին զուղղութիւն: Այլ ո՛վ քաղցրութեանն և գթութեանն և աստուածային բարերարութեանն երանա-

կան պատկեր, սուրբ հայր հոգւոց,
հայեաց և յիս յողորմելի և 'ի թը-
շուառացեալս ոգւով. 'ի քո բարե-
բարութենէ ողորմութեան գտուլս,
և անարժանութեամբ կորուսանուլս,
'ի քահանայութեանն կարգ ամենոյ
զգեցուլ և ոչ արդարութեան գոր-
ծոց. 'ի բանիս սպասաւորութիւն
բազմաց քանքարաց ծածկուլս և ոչ
շահեցուլ. 'ի գործ անտեսութեանս
ընչից տեառն իմոյ վատնուլս անի-
րաւութեամբ, և ոչ հաւատարմու-
թեամբ բաշխուլ։ Եւ զի մաշեցան
ունայնութեամբ կեանք իմ, և ոչ
կարացի գործել, և թէ այդր էակից
մուրացայց, ոմ լինէ ողորմեցի կա-
մաւ 'ի բարեաց զրկելոյս։ Այլ մի
միայն է իմ յոյս և տառապելոյս
փրկութեան հնար. առ քո ողոր-
մութիւնդ վատահութիւն, որով և
զայս ընծայ բանեղէն պատարագաց
հայրաբար գթով ընկալցիս. եթէ
ոչ է լինչ արժանի յեկեղեցի քո ըն-
դունելոյ՝ քո են պարգեւք, և 'ի
քոյոցն քեզ ընծայեցաւ. և թէ ոչ՝
թողութիւն և ընդ այլոց յոլովից

սխալանացն և այամ համարձակու-
թիւն եղեցի 'ի յօժարութենէ և 'ի
փափագմանէ բանադատելոյս։ Այլ
և զիմ սակաւ մնացեալ աւուրս կե-
նաց արժանի արասցես յեկեղեցւոյ
քո գործ սպասաւորական ծառայ-
ութեան վճարել. զի և ես ողոր-
մութիւն գտից և վարձ ընդ քո
կենդանի տնկոցն մշակութեան
վաստակոց, տեսանել զքեզ ընդ
Քրիստոսին քում յանզուգական 'ի
փառան. զի որում ջարջարանացն
հաղորդեցար և յանճառելի փառան
ընդ նմին ճոխացիս. զի և ես ար-
ժանի եղէց ընդ քո եկեղեցւոյ սըր-
բակրօն մանկունան փառաւորել
զամենասուրբ զԵրրորդութիւնն,
զՀայր և զՈրդի և զամենասուրբ Հո-
գին, այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

Ց Ա Ն Կ

Ե. ՀԱՏՈՐՈՑ

Յովհաննու Սարկաւագ վարդապետի ներբող 'ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչ 5
Վարդանայ վարդապետի ներբողեան 'ի նոյն 41
Յովհաննու վարդապետի Եղընկացւոյ 'ի նոյն 85

Bucheinband von
JOSEF ERDMANN
BONN, Dottendorferstr. 144